



ՄԱՐԱՇԻ ԶԱՐԴԸ

1920-իս

ՊԱՏՐԱՍՏԵՅ
ՅՈՎՍԷՓ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

2010 ՀԱՆԷՊ

9(47.925)
20-37

ՄԱՐԱՇԻ ԶԱՐԴԸ

1920-ին

ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՄԸ
ԻՐ ԱՆՑԵԱԼԻՆ ՎՐԱՅ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ
ՅՈՎԱԷՓ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

Handwritten signatures and notes in blue ink, including a date 29-01-10.

5339

Մարաշի կորուստը մեծ հարուած մըն էր մեր արժանապատուութեան, գոր կարելի պիտի ըլլար վերահաստատել՝ քաղաքը անմիջապէս վերագրուելով:

«Մարաշի դէպքերուն պատասխանատուութիւնը կ'իյնայ անոնց վրայ՝ որոնք չկրցան երկու կամ երեք հարիւր մարդիկ բերել անհրաժեշտ թընդանօթներով, որպէսզի կարելի ըլլար զսպել Զէմալական առաջին ապստամբութիւնը որ դեռ նոր ծայր կու տար, ինչպէս նաեւ անոնց վրայ՝ որոնք անհրաժեշտ հրամանները Պոլսէն բերել չտուին թուրք պաշտօնեաներուն համար...»

ԳՆԴ. Է ՊՐԷՍՆՈ
(Հայկաշէն Տարեգիրք Ա. Տարի էջ 335)

1927

ՏՊԱԳՐ. ԱՐԱՔՍ Բ. ԹՕՓԱԼԵԱՆ

2010

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԸ, ՀԱԼԷՊ



ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Նայրենիքիս՝ Մարաշի մասին պապմական սոյն հակիրճ ծանօթութիւնները գրի առնելով անթերի եւ կարարեալ գործ մը պարտաւորեալ ըլլալու յաւանակնութիւնը չունիմ, այլ կարողութեան եւ միջոցներուս ներած սահմանին մէջ ջանացած եմ կարգ մը վաերական փեղեկութիւններ եւ դէպքեր քաղուածաբար հասարել եւ յանձնել ապագայ սերունդին. մանրամասնը ձեռնահասներուն թողելով: Եւ պիտի խնդրէի յարգոյ ընթերցողներէն եւ բանասէրներէն, որ սկամայ սարդած սխալներու մասին ներող գրեուէին:

Սոյն գրքոյկը կազմուած է երեք մասերէ, առաջնոյն մէջ կը մտնեն պապմական ծանօթութիւններ. երկրորդին՝ նշանաւոր վայրեր, ուխտափեղիներ, լեզու եւ սովորութիւններ. իսկ երրորդին մէջ կը նկարագրուի վերջին 1920-ի ժամանակակից դէպքը՝ ֆրանքոսորըք ընդհարումը եւ հայոց ջարդը. իբր վերջաբան կամ յաւելում կը դրկուի քաղաքիս առաջնորդ կամ առաջնորդական փոխանորդ եւ փեղապահներու համառօտ ցանկ մը:

Քաղցր է ինձ ակնկալել, որ մէն մի Մարաշցի Նայրենակից բարի պիտի ըլլայ օրինակ մը ունենալ ասկէ, իր Նայրենիքին անցեալին ծանօթանալու համար, ինչպէս նաեւ քաջալերելու երկասիրողը:

1927 Յուլիս 20
Երուսաղէմ
ՍՐԲՈՅ ՅԱԿՈՒԲԵԱՆ ՎԱՆՔ

ՅՈՎԱՄԷՓ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ



ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ
Ծնեալ 1890- Վախճանեալ 1920

20Ն

Ողբացեալ Տիկնոջս՝ Մարիամ Տեր-Վարդանեանի
եւ զաւակացս Նորայրի, Ասանէթի եւ Սրեփանէի
նաեւ

Նօրս Տ. Վարդան Ա. Քինյ. Տ. Մինասեանի, մօրս՝
Երիցուհի Ագապիի եւ այն բիրաւորներուն, որոնք
զոհը եղան 1920 Յունուարի Ֆրանքո- թուրք
ընդհարումին ի Մարաշ:

Յ. Տ. Վ.

Մեծայարգ
Տիար Յովսէփ Տեր-Վարդանեան

Ս. Երուսաղէմ

Ձեր սիրելութեան «Մարաշի Զարդը եւ Պապմական հա-
մառօք ակնարկ մը իր անցեալին վրայ» երկասիրութեան ձեռա-
գիրը ծայրէ ի ծայր ընթերցելու մտադրութեամբ, երկասիրութիւն
մը որ կ'ընդգրկէր Մարաշի անդրքրիստոսեան հիմնարկութեան
եւ փակաւ զարգացման ու բարգաւաճման ամփոփ պատմութիւնը,
զանազան դարերու մէջ կրած յեղափոխութիւնները բարեշրջա-
կան (evolution) գլխաւոր դէպքերն ու քաղաքական անցքերը վճիպ
եւ դիւրըմբռնելի ջինջ ոճով մը, ընտրութիւն մը ինքնին յոյժ
զնահարելի, որ պատմութեան ամէն մասերը իբրեւ ի հայելու՞
կենդանի գոյներով կը պարկերացնէ ապագայ ընթերցողին
մտքին եւ հոգւոյն առջեւ: Չէք մոռցած նաեւ հակիրճ փողերով
սրտկերացնել Մարաշի եւ շրջակայ փեղագրութիւնները. նամա-
նաւանդ Նայոց ազգի վիճակն ու զարգացումը յառաջապատական
բարգաւաճումով՝ նիւթական, բարոյական եւ մտաւորական, որովք
կարողացած էր նա գրաւել հոն առաջնակարգ դիրք մը իրեն բա-
րոյական եւ կրօնական զանազան հասարակութիւններով.
անհերքելի իրականութիւններ եւ ճշմարիտ ապացոյցներ են
ստուրք, ազգի մը բնածին ուշիմութեան եւ յառաջդիմասէր փոկուն
նկարագրին:

Աշխատասիրութեանդ վերջին պարբերութեանց մէջ բնա-
կան ընթացքով մը կը նկարագրէք համաշխարհային պատե-
րազմէն հինգ փարի վերջ՝ ի մասնաւորի Մարաշի հայութեան
կրած քարմնելի ջարդը եւ խժոժութիւնները, փեղահանութիւնն ու

անոնց պատճառաւ հազարաւորներու կորուստը ցրտասարսուռ ձմրան ձիւներուն եւ սառոյցներուն փակ:

Դժոխային բարբարոսային ջարդին գոզես դաշնակից եւ լծակից եղած էր անողոք բնութիւնն ալ, որ հայոց աղէքը իւր զագաթնակէտին հասնի եւ փշաքաղում փայ ամէն հայու սրտին եւ զգացումներուն:

Յաւէք օրհնեալ լինիք դուք, որ նման երկով մը յաւերժական յուշարձան- կոթող մը կը կանգնէք հայ անմահ նահապակներու համար, եւ երկինք օրհնեն անոնց ինքնանուէր ողջակիզումը հայրենեաց նուիրական սեղանին վրայ, եւ հայրն Աստուած ի բարձանց երկնից թո՛ղ հաճեալ ընդունի անոնց ճենճերումին խնկաբոյր հոտն ու բուրումը եւ անմահական պատարագը ի հոտ անուշից աստուածութեան իւրոյ:

Օ՛ն ուրեմն, փուէք Ձեր երկը ի հրապարակութիւն, որ վշտակիր հայրենակիցք Ձեր ընթեռնուն գայն եւ անմոռաց ունենան սրտերնուն մէջ իրենց հոգեհապորներուն նուիրական յիշատակը: Որով դուք եւս վայր մի սփոփանք գտնէք Ձեր վշտաց մէջ եւ համբերութիւն Ձեր անցեալ անդարմանելի կորստեան վրայ:



ԳԵՐ. ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԻԼԵՆԿԻՐԵԱՆ

Բազմարդին եւ ծերունագարդ միաբան Ս. Յակոբեանց վանուց Երուսաղէմի. Քաջալեր - մեկենաս փպագրութեան գործոյս եւ հեղինակ 1 «Յուշեր եւ Նօթեր», 2 «Յիշատակներ Բաղէշի Առաջնորդութենէս», 3 «Նկարագրութիւնք Երուսաղէմի, Նալէպի եւ Դամասկոսի», 4 «Արձագանգ Ազգ. Զանազան Անցուդարձերու» Ա. եւ Բ. մաս եւ այլ օգտաշատ հրապարակութեանց:



ՄԱՐԱՇԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ

Նայկական Կիլիկիոյ պապմութեան մասին հետզհետէ խորացող հետաքրքրութիւնն ու ուսումնասիրութիւնները մեզ կը մղեն աւելի բարձր արժեւորել Մեծ Եղեռնի նախաշրջանն ու շրջանը:

Ահա այս շրջանը նկարագրող վկայութիւններէն մէկը կը համարուի, 1880-ին Մարաշ ծնած ուսուցիչ Յովսէփ Տէր Վարդանեանի «Մարաշի Զարդը» գիրքը, ուր կը նկարագրուի Մարաշի աշխարհագրականը, ընկերային կեանքը, բարբառը, սովորութիւնները եւ ականապետի աչքով վերջին անց ու դարձերը:

Մարաշի աղետը 90 փարիներ անց Մ.Ն.Մ.-ի Նալեպի մասնաճիւղը սրանձնած է վերահրապարակել սոյն գիրքը, նոր սերունդը հաղորդակից դարձնելու 1920 թուականի Մարաշի ջարդին զարհուրելի դէպքերուն որպէսզի հայօրէն գոյապելեն ու դառնան մեր նահապակներու արժանաւոր ժառանգորդները, յանձնարարելով անոնց անթառամ յիշարակը:



Մարաշի Նայրենակցական Միութիւն
Նալեպ, Յունուար 2010

ՄԱՐԱՇ

ՆԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ ՄԸ

Ա. Մաս

ՊԱՏՄԱԿԱՆԸ

ՄԱՐԱՇ կամ Մարկաշ կը գտնուի Տորոս լեռնաշղթային Ախրրոփաղ ճիւղին ստորոտը, Նալեպէն 141 քմ. հեռու դէպի հիւսիսային արեւմուտք: Ի հնումն մաս կազմած է Եփրատացիներու եւ Գեփրացիներու երկրին, ժամանակ մըն ալ Փոքր-Նայքի եւ ապա՝ Կիլիկիոյ: Ինչպէս շար մը քաղաքներու՝ նմանապէս ալ ասոր հիմնարկութեան թուականը ճշդելը դժուար է: Կ'ըսուի թէ Քրիստոսէ 1110 փարիներ առաջ Գեփրացիներուն (Նիթթի) պարկանած է Մարաշ: Ասորեստանի Թիկլաթփալասար թագաւորը արշաւելով կը գրաւէ զայն, ուրիշ քաղաքներու հետ: (*)

Քաղաքին կեդրոնը կը գտնուի հին բերդի մը մնացորդը, հնութենէն պահուած նշմարելի է, զորօրինակ հարաւային դրան վրայի դէմ դէմի եւ փորի վրայ պառկած դիրքի մէջ գտնուող սեւ քարէ երկու առիւծները, որոնց վրայ նշանագրեր եւ պարկերաքանդակներ կային:

Սոյն առիւծները ասկէ մօտ քառորդ դար առաջ վար առնուելով, փոխադրուած են Կ. Պոլսոյ Կայսերական հնութեանց թանգարանը: Նման փեսակէ քար մըն ալ քաղաքին Ս. Կարապետ

(*) Բահնիւնա, 1926 Մարտ 20 էջ 185.

և կեղեցոյ մէջ կը պահուէր երկար արեւնէ ի վեր, զորս չնչին զինով մը ձեռքէ հանած էր Թեմին Թաղական Խորհուրդը դրամի պէքը զգալուն պատճառաւ, հակառակ Նալեպի օրուան առաջնորդ նահապակ Ներսէս Եպս. Դանիէլեանի հեռագրին: Ձեռքէ հանելէ ետք, կ'իմանան անոր իսկական արժէքը՝ իբրեւ հնութիւն:

Ինչպէս ներկայիս, նմանապէս ալ հին դարերուն երկիր կամ քաղաքներ, երբեմն սա երբեմն ալ նա պեփոխութեան ձեռքը կ'անցնէին: Ասանկ եղած է նաեւ Մարաշի բաղդը: Ք.Ա. 83-ին հայոց Տիգրան Բ. Մեծի փերութեան սահմաններուն մէջ գտնուած է ան:

Գերմանիկոս Նոմէացի գորավարը, երբ Օգոստոս կայսեր հրամանաւ Արեւելք - Փոքր Ասիա կ'արշաւէր, ի միջի այլոց կը գրաւէ նաեւ Մարաշը, եւ յաղթող իր անունը կու փայ անոր, կոչելով զայն Գերմանիկ կամ Գերմանիկոպոլիս: Յիրաւի քաղաքին մէկ արուարձանը դեռ մեր օրերուն կը պահէր սոյն անունը քիչ մը աղաւաղուած հնչումով՝ (Գարաման):

Կիլիկիա իր չորս կողմը ունեցած է քանի մը սուլթանութիւններ, ինչպէս Իկոնիոյ, Մեքասփիոյ եւ Բերիոյ, որոնք շարուսակ իրարու հետ ընդհարումներ ունեցած են եւ յաղթականը առժամանակ փեր կը դառնար այս կամ այն քաղաքին, օր մըն ալ իր կարգին իրմէ՝ զօրաւորին յանձնելու համար: Բիւզանդիոն եւս անմասն չէ մնացած սոյն կոթիւներէն: Տասներորդ դարու երրորդ քառորդին կայսրեր՝ Նիկոփոր, Չմշկիկ եւ այլն, քանիցս յարձակած են Կիլիկիոյ վրայ եւ գրաւած են Տարսոնը, Արաման, Մարաշը, հասած են մինչեւ Անպիոք:

Բագրատունեաց իշխանութիւնը իր վերջին թագաւորին՝ Գագիկ Բ.-ի գերութեամբ վերջ գրած էր: Իշխաններէն ոմանք Նայաստանի մէջ փրորող աննպաստ պայմաններու բերումով սրիպուած եղան հեռանալ ու գաղթել այլուր, իրենց հետ փանելով նաեւ ժողովուրդէն մաս մը: Այս իշխաններէն մին՝ Ռուբէն Ա. Մեծ, եկած ու փեղաւորուած է Կիլիկիա, ուր յետ սակաւու գօրանալով նոր իշխանութիւն մը հաստատուած է, ապագային ան իր անունով Ռուբինեան կոչուեցաւ: Ասոր յաջորդներէն Թորոս Ա. Պարոն, աւելի կ'ընդարձակէ սահմանը եւ Մանգալեան եղբայրները սպաննելով կը լուծէ Գագիկի վրէժը:

Մարաշ որոշ ժամանակ, յունական ազդեցութեան փակ էր իշխող ունենալով Փիլարփոս՝ Նայագգին, յունաց Կոստանդին կայսեր աները: Սա կը սփիպէ օրուան Նայոց օրինաւոր կաթողիկոսը՝ զԹէոֆորոս գալ նսփիլ ի Մարաշ, կաթողիկոսը երբ կը մերժէ Փիլարփոս կը համարձակի Վարագայ վանքին վանահայր Պօղոս եպիսկոպոսը բերել եւ նստեցնել Մարաշի մէջ իբր կաթողիկոս, ապա Պօղոս անդրադառնալով իր սխալին կը հրաժարի 1085 թուին:

Խաչակիրներու ի Ս. երկիր արշաւանքին հետեւանքով այս կողմերն ալ, Եդեսիա, Պաղարին, Մարաշ անոնց իշխանութեան ենթարկուած է եւ կառավարուած լափին կոմսերու կողմէ:

Մարաշի յոյն իշխողներու եւ խաչակիրներու միջեւ ալ կռիւներ փեղի ունեցած են: Թաթուլ զօրապետը, որ իշխանաց իշխան կոչուած է, յարձակում կը կրէ խաչակիր իշխան Պեմունդէ, Թաթուլ կարող պատերազմիկ մը, աղուոր դաս մը փալով անոր, կը հեռացրնէ առժամանակ: Սակայն, քանի մը փարի ետք կը պարտաւորուի քաղաքը լքել ու հեռանալ, յանձնելով զայն լափին իշխան Ճօսլինի: Այդ օրերուն քաղաքին մէջ նշանաւոր եւ հրաշագործ Ասրուածաձիինի պատկեր մը կը գրնուէր. զայն ալ Ռուբինեան Թորոս իշխանին կը յանձնէ:

Մարաշ քաղաքը (1114 թ. Զ. Ե.) կը կարծուի, թէ իր ներկայ փեղէն կէս ժամ հարաւ- արեւելք, այժմ Գարա- Մարաշ կոչուած փեղը կը գրնուէր, սակայն ահաւոր երկրաշարժէ մը կործանելով փոխադրուած կամ վերաշինուած է ներկայ փեղը, լերան սփորոփին: Արդարեւ, նախկին փեղին վրայ, դեռ մեր օրերուն, հիւներ, սիւնի կտորներ, դրամներ եւ այլն նման հետքեր երեւան կու գային պեղումներու ժամանակ: Սոյն երկրաշարժը յիշատակուած կը գրնենք Սմբատ պարմիչի եւ Մարթէոս Ուռհայեցիի կողմէ: Վերջինս շար փխուր գոյներով եւ ցաւալի եղանակով մը կը նկարագրէ զայն. (Մ.Ո . էջ 415-17): Երկրաշարժը ո՛չ միայն Մարաշը, այլ եւ Սամուսարն եւ Տիւսնիմանսուրն ալ կը կործանէ, փլափակներու փակ շուրջ քառասուն հազար հոգի թաղելով, եւ կործանելով Սեաւ լերան վրայի Բարսեղեանց եւ Յիսուսեանց կոչուած երկու վանքերը, որոնք այդ դարուն նշանաւոր ուսումնավայ-

րերը եղած են: Փլափակներու փակ կը մնան ի մէջ այլոց, երեսունի մօտ կղերիկոսներ, որոնք նոյն պահուն կ'աղօթէին:

1130-ին Թորոս իշխանի յաջորդը Լեւոն Ա. սկսած էր կարգ մը քաղաքներ գրաւել յոյներէն եւ ընդարձակել իր իշխանապետութեան սահմանները: Անփոքի իշխան Պեմունդ, կը նախանձի Լեւոնի փառքին, սակայն, երբ կը հասկնայ թէ չպիտի կրնայ բիրտ ուժով հնազանդեցնել զայն, կը խորհի նենգութեամբ նուաճել եւ ծուղակի մէջ ձգելով կը փանի ու կը բանտարկէ զայն: Լեւոն ազատելու համար ելից հնար մը կը փնտռէ եւ կը հաւանի քանի մը քաղաք եւ կարեւոր գումար մը փրկանք փալով ազատիլ: Ապա ինքզինք ազատ եւ ուժով զգալով, կը յարձակի Պեմունդի վրայ, եւ ոչ միայն փուած փեղերը եւ դրամը կը վերստանայ այլ եւ կը գրաւէ Անփոքը: Լեւոն կը յարձակի նոյնպէս Մարաշի փէր Պարոն Բալփուլինի վրայ, զայն ալ չարաչար կը պատժէ(1146) եւ քաղաքը իր իշխանութեան փակ կ'առնէ:

Այս օրերուն Յունաց Յովի. Կոմնենոս կայսրը կ'արշաւէ Կիլիկիոյ վրայ եւ Անփոքը: Լեւոն իշխանը չի կրնար դիմակալել, ժամանակ մը ամուր փեղեր ապաստանելէ ետք, կը սփալուի անձնատուր ըլլալ եւ կը փարուի Պոլիս, ուր յետ երկար բանտարկութեան կը մեռնի: Այնուհետեւ յոյները ժամանակի մը համար փէր կը դառնան այս կողմերուն:

Սոյն դէպքէն քանի մը փարի ետք, 1149- ին Իկոնիոյ Սուլթան Մագսուփի փղան՝ Գըլըճ Ասլան կ'արշաւէ Բերիոյ վրայ եւ շար մը նախճիրներ կը գործէ: Միեւնոյն ժամանակ կը յարձակի նաեւ Մարաշի վրայ, որուն փէրը Ճօսլին բաւարար ուժ չունենալուն չի կրնար դիմադրել եւ քաղաքը գրեթէ առանց դիմադրութեան անձնատուր կ'ըլլայ: Ճօսլին կը փախչի, կ'ապաստանի Անփոքը:

Մարաշ՝ փասը փարի կը մնայ թուրքերու ձեռքը, այս մասին ցաւելով կը յիշէ նաեւ Ս. Ներսէս Շնորհալի յետագայ փողերուն մէջ.

«Ի ժամանակս յոյժանբարի
Մինչ Գերմանիկն առեալ լինի
Ժամանեցին աշխարհի գոյժ
Քրիստոնէից գոլով անժոյժ,

Թուական հայոց հինգ հարիւր եւ ութ,
Նաեւ ութսուն երեք եւ ութ»(1150Է.Թ.)

Թորոս Բ. իշխանի եղբայրը Սրեփանէ կ'ապստամբի եւ կու գայ, Սեւ լեռան վրայ մասնակի իշխանութիւն մը կը հիմնէ: Կը գրաւէ նաեւ Մարաշ բերդաքաղաքը եւ Բերդուսը(*): Յոյները կը նախանձին Սրեփանէին եւ խաբանօք կեանքէ կը զրկեն: Ըստ Մմբար եւ Վահրամ պապմիջներու, եռացեալ կաթսայի մէջ կը նկերեն: Ոմանք, Սրեփանէն սպաննողը կը կարծեն Անդրոնիկոս զօրավարը, որ այդ միջոցին հայերէ կրած պարպութեան համար ոյս պահած, օր մը ճաշի հրաւիրելով կը սպաննէ զայն: Սոյն անգուր եւ անխիղճ արարքին համար Սրեփանէի եղբայրները կը զայրանան, կը յարձակին յունաց վրայ եւ անոնցմէ հազարաւոր մարդ ջարդելով իրենց վրէժը կը լուծեն:

Մինչեւ Ռուբինեան իշխանութեան որոշ հաստատութեան օրերը, Մարաշ, փոփոխակի բախտով, Յունաց, Լարին իշխանաց եւ թուրքերու (սուլթաններու) ձեռքը խաղալիք կ'ըլլայ եւ հագիւ 1266-ին վերջնապէս կը գրաւուի Ներսիս Ա. թագաւորի կողմէ:

Տասներկրորդ դարուն, գուցէ քիչ մըն ալ առաջ Մարաշի մէջ բաւական թիւով ասորիներ գտնուած են, որոնց իբր առաջնորդ կը յիշուի Եագուպ Իպնի Սալէպի անունով եպիսկոպոս մը: Մակայն, ժամանակի հոլովմամբ թէ՛ հալածանքի ենթարկուելով, անոնք գաղթած հեռացած են եւ կամ ձուլուած են փեղոյս քրիստոնէաներու հետ: Թուականէս 50 փարիներ առաջ, պարսիական պեղումներով զոր օրինակ՝ քաղաքին Սու Չաթը եւ Պօլսփ փերէ կոչուած փեղերու մէջ, (որոնք քաղաքէ դուրս դէպի արեւելք կը գտնուին), երեւան եկած են գերեզմաններ եւ գերեզմանաքարեր ասորական արձանագրութեամբ:

Նախ քան օսմանցիներուն Թուրքիոյ փրկելը, Սելճուք իշխանները Փոքր Ասիոյ զանազան մասերը իրենց փրկապետութեան ներքեւ առած էին եւ հասած մինչեւ Էնկիւրի: Թէեւ Սուլթան

(*) Բերդուս (փճկ. Պերթիգ) Զէյթունի հարաւ- արեւելեան կողմը եւ Մարաշէ 10-12 ժամ հեռու, մօտ 35 կլորո գիւղախումբ մըն է, այդ օրերուն քրիստոնէայ, ապա եւ այժմ մահմեդականացած: Նոս ունեցած ենք երբեմն վանք եւ առաջնորդներ: Սոյն անունով բերդ մը կը յիշուի նաեւ Կապանի մօտերը. (Միսուան):

Պայագիպ դէմ կ'ելլէ Լէնկթիմուրի, սակայն կը յաղթուի: Լէնկթիմուրի մահէն ետք անոր ինքնակալութիւնը շար արագ կը կործանի: Նախկին այլ եւ այլ իշխաններ առիթէն օգտուելով, կրկին ձեռք կը ձգեն իրենց կորսուած երկիրը եւ իշխանութիւնը:

Ռուբինեան թագաւորներուն ունեցած բարեկամութիւնը Մոնղոլ խաներու հետ, մեծապէս նպաստած էր Կիլիկիան խաղաղ պահելու:

Լուսինեան թագաւորութեան բարձունով Կիլիկիա Եգիպտական սուլթանութեան կը կցուի: Միւս կողմէ ալ օսմանցիք զօրանալով գրեթէ ամբողջ փոքր Ասիան կը գրաւեն. 1480- ին Եգիպտոսի Գայթէպա սուլթանը, Օսմանեան Սուլթաններէն Մուհամմէպ Բ.-ի հետ կը կռուի Մարաշին համար: Թէեւ Գայթէպա նախապէս կը յաջողի սպաննել Մարաշի Շէհսիւվար Զիւլգապր իշխանը*) եւ անոր փեղը ասորի Պուրպագ անուն եղբայրը կը նշանակէ, սակայն Մուհամմէպ Բ. կը վնասէ վերջինը եւ անոր փեղ կը կարգէ Ալայիւփտօվլէն:

Անկէ ժամանակ մը յետոյ, 1493- ին Սուլթան Պայագիպ կ'արշաւէ Կիլիկիոյ կողմերը եւ կը յաջողի Եգիպտացիներէ վերագրաւել Մարաշը: Իսկ դար մը ետք, Սուլթան Մուրափի օրով, Մարաշ այլեւս օսմանցիներու քառասուն կուսակալութիւններէն մին կը կազմէր(1587):

Թէեւ Մարաշ Օսմանեան փերութեան իշխանութեան ենթարկուած էր, սակայն, փեղացի ազդեցիկ պէյեր գրեթէ կիսանկախ կառավարած են զայն. այդ պէյերը եղած են,՝ 1. Զիւլգապրեանք, 2. Պայագիպ օղլուներ, 3.Էմիր Մահմուդ օղլու, 4. Ղըսաքիւր օղլու, 5. Վէլի Էֆ. Օղլու, 6. Ղափի Զափ եւ այլն, որոնք թէ իրարու եւ թէ Միսի Գօգան օղլուներու հետ ցեղային երկար վեճ ու կռիւներ ունեցած են:

1608-ին մեծ սով մը կը պարսիի Մարաշի մէջ, զոր Յակոբ Զէյթունցի այսպէս կը նկարագրէ. «Եւ լսէի զխեղճ ձայն քաղաքին

*) Սոյն Զուլգապր ցեղը 100 փարի բռնակալելով կ'իշխէ Մարաշի մէջ եւ դեռ մինչեւ օրս ասոնց սերունդը մեծ ազդեցութեան փեր է: Այս ընթացիքը բաղդապմամբ քաղաքին ուրիշ թուրք պէյերուն, մեղմ եւ բարեացակամ ընթացք մը ունեցած էր հանդէպ քրիստոնէաներուն:

մերոյ Գերմանիկէ որ է Մարաշ, որ էր սով եւ սուղ, զի վեց փրէմ հացն ի փարա մի, եւ էր որդիքս իմ անդ, ո՛չ եկող կայր եւ ո՛չ գացող. այսպիսի փառապանօք գրեցի գլխաւորակարանս: (Թ. 208 շարակնոցէ մը Տաշեան ցուցակ):

1839-ին Սուլթան Մահմուտի օրով, Եգիպտոսի փոխարքայ Իպրահիմ փաշա կ'ապստամբի:

Սուլթանը Նաֆըզ փաշայի հրամանադրութեամբ բանակ մը կ'ուղարկէ Իպրահիմի դէմ, անոնք Մծբինի (Նիսիպիս) մօտ իրար կը բախին: Նաֆըզ կը պարտուի եւ կը սրիպուի քաշուիլ Մարաշ, զոր քիչ ետք կը գրաւէ Իպրահիմ, ապա Երուսական փերութեանց միջամտութեամբ կը հաշտուի, Եգիպտոսի փոխարքայութեան, յորդոց յորդի իր ցեղին վերապահումովը գոհանալով:

1831-ին, Ամերիկացի բողոքական միսիոնարներ մուտք կը գործեն Պոլիս, յորոց մին կ'ըլլայ Մր. Կուպլէ: Քանի մը փարիներու աշխատութենէ յետոյ կարելի կ'ըլլայ կարգ մը հայեր շահիլ եւ հաստատել Բողոքական առաջին ժողովարանը: 1836-ին նորեկ միսիոնարներէն մին կը ճամբորդէ Անապոլուի զանազան քաղաքները ու կը քարոզէ, հետեւաբար բողոքականութիւնը օր օրի արմար կը ձգէ հայոց մէջ եւ կ'ունենայ բաւական հետեւողներ:

Նայ Առաքելականք սակայն, հաշտ աչքով չեն դիպեր սոյն շարժումը, որ իբր կու գար ազգը փրկել: Թէպէտ սկիզբները թոյլ շարժած են, ետքը անոր փարածումը արգիլելու ձեռնարկներ ըրած են: 1846-ին, Մարթէոս Պարթիարք բողոքականութիւնը ընդունող հայերը կը բանադրէ եւ այդ իմաստով կոնդակ մ'ալ գաւառները կը յղէ, նպատակ ունենելով անշուշտ համացեղ ազգի մը մէջ պառակտում առաջ չբերելու դիպաւորութիւնը, սակայն՝ ի գուր:

Նոյն փարոսոյ Յունիս 1-ին, Պոլսոյ մէջ խումբ մը հայեր կը կազմեն առաջին աւերարանական եկեղեցին «Բարեպաշտութեան Միութիւն» անունով, յաջորդ փարին բողոքականութիւնը պաշտօնապէս կը ճանցցուի կառավարութենէն, իսկ 1853-ին անգրիական դեսպանին ազդու միջամտութեամբ, հայ բողոքականք ազգային անջար խմբաւորում մը նկատուելու եւ համապատասխան իրաւունքներ վայելելու հրովարտակ կը ստանան Սուլթան

Մեծիպէն:

Ինչպէս ամէն բարեկարգական գործ կամ ձեռնարկ՝ անշուշտ Նայ-բողոքականութիւնն ալ իր սկզբնաւորութեան անկեղծ ու բարի նպատակով եղած է: Շատ յարկանշական է այն պատասխան - բանաձեւը, զոր առաջին հետեւողները կու փան միսիոնարներուն եւ անգրիական դեսպանին սա հարցումին թէ՛ «Դուք որ հիմա ուրոյն եկեղեցի մը ճանցցուած էք եւ քաղաքականապէս եւս առանձին իրաւասութիւնով ազատութիւն ունենալ կը բաղձար, դուք ձեզի համար ի՞նչ յարանուանութիւն ընտրած եւ կամ ո՞ր յարանուանութեան յարած էք»: Պատասխանը կ'ըլլայ, «Պէտք չունինք մասնաւոր յարանուանութիւն մը որոշելու կամ որեւէ օտար դրութիւն կէտ առ կէտ որդեգրելու: Մենք Մ. Աւերարանին աշակերտած եւ անոր հոգեկեցոյց սկզբունքները որդեգրած ըլլալով կը փափաքինք մեր մայրենի եկեղեցին իր նախկին առաքելական մաքուր պարզութեան վերածել, վասն որոյ որոշած ենք «Նայաստանեայց եկեղեցի կազմել եւ ոչ ուրիշ բան ...կը յարգենք եկեղեցոյ իշխանութիւնները, կ'ընդունինք պարկառանքով հայրենի աւանդութիւնները, նահապակաց արիւնովը սրբագործուած, կ'ընդունինք ընդհանրական եկեղեցոյ դաւանանքը, կը սիրենք հայ ազգը բոլոր սրտով եւ հոգիով»:

Ինչ գեղեցիկ խօսք եւ սկզբունք:

Եւ արդարեւ ան իր ծագման կամ սկզբնաւորութեան աւելի անկեղծ է եղած եւ հայեցի կերպարանք զգենուլ ուզած եւ ըստ այժմ ալ շարունակած անփարակոյս, սակայն ամերիկեան Պորտ ընկերութեան միսիոնարք, ազգային, մաքուր եւ ազնիւ ձգտումներէն շեղեցուցած են Նայ Բողոքական բարեկարգութեան այս գեղեցիկ շարժումը եւ յարանուանական ուղղութիւն եւ դրոշմ փոխած անոր: Մենք կ'ողբանք այս հոգեկան խոշոր գրկանքին համար, որուն այս պարճառաւ ենթարկուեցան բողոքական հայեր՝ խզուելով իրենց Մայր Եկեղեցոյ հետ կենսական հաղորդակցութիւն ունենալէ: Ժողովական եւ երիցական դրութիւնները, զորս զանազան ճնշումներու գնով միսիոնարները պարտադրեցին առաջին հայ աւերարանական եկեղեցիին վրայ, վարչական փեսակէտով ալ անյարմար էին եւ անյաջող արդիւնք փուլին...: Մենք հոս հաստատուել

ուզեցինք այն իրողությունը միայն, թե՛ Մայր Եկեղեցույ հանդէպ անվերապահ սիրոյ, երախտեաց ու որդիական պարկառանքի դիրք մ'ունեին մեր հայ աւետարանական եկեղեցույ հիմնադիրները, որ խաթարուեցաւ յետոյ՝ միսիոնարական ազդեցութեամբ ...: (*)

ՄՈՒՏՔ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ի ՄԱՐԱԶ

Սաջը Վարդապետ անունով ծանօթ Միքայէլ վրդ. կը նպաստէ բողոքականութեան արմատ գրնելուն հայոց մէջ, ինչպէս նաեւ Սերովբէ վրդ. մը, որ կը վարարուի Մարաշէն իր քարոզութեանց համար:

Սաջեան վրդ. 1845-48 թուականներուն Մարաշ կը գրնուի եւ գաղտնի կերպով բողոքական գաղափարներ կը ներշնչէ իր հաւարարիմներուն ու բաւական յաջող գետին մը կը պատրաստէ հոն. ուրկէ կ'անցնի Զէյթուն նոյն նպատակով, սակայն իբրեւ բողոքականութիւն փարածող կը վարարուի քաղաքէն:

Սոյն թուականներուն Մարաշ գրնուող նոր բողոքականներու վիճակին տեղեկանալու եւ թէ զանոնք քաջալերելու համար, Այնթապէն քանի մը անձեր կու գան, սակայն չեն կրնար յայտնի եւ երկարատեւ մնալ հոս, առարկայ լինելով հայոց ընդդիմութեան: Նոյնիսկ բողոքականութիւնը նոր ընդունող վկայեալ չորս անձեր՝ Կիլիզեան Յովհաննէս, Ռուպեան Յովհ., Փաթփաթեան Մարգիս եւ Յովհաննէս, Ժամկոչեան Գր. Սողմէան Աւերիք, Խաչատուրեան Խաչեր նախապիմքի եւ ծեծի կ'ենթարկուին: 1850-ին, նորադարձեր բողոքական անունով կը յորջորջուին: Բաց աստի, Այնթապէն եկողներ կը ստիպուին փախչիլ Մարաշէն: Ապա Այնթապի միսիոնարներէն Մր. Շնայրէր եւ Գրէյն, Պոլիս կը դիմեն եւ կը յաջողին պաշտպանութեան համար հրամանագիր ստանալ, որով Փափագեան Կարապետ քարոզիչ կը նշանակուի ինչպէս նաեւ Պեճեան, որոնք իբր վաճառականներ միայն Մարաշ կը մտնեն:

Անոնց կրօնական առաջին հաւաքոյթը կամ պաշտամունքը փեղի կ'ունենայ Փաթփաթեանի բնակարանին մէջ: Սա արիւստով

(* «Գոյս» Ամերիկայի, 1927, թիւ 1 էջ 7.

պարտիզական ջրլալուն փան մէջ ալ բաւական դրումներ (պալ գապաղը) գրնուելուն, նոյն փեղը հեգնօրէն «գապագ փամը»-ի ժողովարանը յորջորջուած է:

1853-ին, Տօթթ. Փարթ Մարաշ կու գայ եւ հազիւ երկու ամիս մնալէ ետք կը վերադառնայ եւ հարկ եղած տեղեկութիւնները կը հաղորդէ Պօստը ընկերութեան, որ իր կարգին Մր. Պիպի եւ Մր. Փէրինալի անունով երկու գործիչներ կը դրկէ Մարաշ, որոնք ապա 1904 Դեկտ. 3-ին, 16 հոգինոց առաջին բողոքական եկեղեցին կը հիմնեն:

1854-ին, կը կատարուի բողոքականութեան Մարաշ մուտքին յիսնամեայ յոբելեանը:

Մարաշի մէջ բողոքական առաջին հովիւներ եղած են. Աւերիս Կոստանդեան, Մուրափ Կիլէւերեան, որոնցմէ ետք Ա. եկեղեցույ հովիւներն են Գէորգ Գազանճեան, Կարապետ Յարութիւնեան, Աբրահամ Յարութիւնեան. Բ. եկեղեցույ՝ Ահարոն Շիրաճեան, Սիրական Աղապալեան, Գ.-ին համար՝ Աւերիս Պուլկուրճեան եւ Նազարէթ Նեղմեան:

1864-ին Տիգրանակերտցի երէց Կարապետի միջոցաւ եպիսկոպոսականութիւնը եւս մուտք կը գործէ Մարաշ, ինչպէս նաեւ Մկրտչականութիւնը, սակայն ասոնք չեն կրնար զարգանալ եւ կը ձուլուին բողոքականութեան մէջ:

Բողոքական հայեր թէեւ սկիզբները անջատողական գաղափար ալ ունեցած ըլլան եւ հայկականութենէ քիչ մը հեռանալու ալ միտած՝ սակայն վերջերս, իբր քառորդ դար մ'առաջ այդ գաղափարը փակաւ միտքերէ հեռանալով, անոր փեղ ազգային-հայկական ոգիի մը սերմերը ցանուելով արմատ ձգելու սկսած էր եւ կը ձգտէր աստիճան մըն ալ միսիոնարական լուծը թօթափել ուսերէն եւ որդեգրել նոր ուղղութիւն մը, Նայաստանեայց առաքելական պատմական եկեղեցույս հոգեշունչ երգերէն փոխառութիւններ ընել, ինչպէս «Յիշեսցուք», «Առաւօպ Լուսոյ», «Փառք Ի Բարձունս» եւ այլ նմաններ: Եւ այսօր, երբ այլասերումի եւ ձուլումի վտանգին փակ կը գրնուի հայը իր ցրուածութեան մէջ, օտար հորիզոններու եւ երկինքներու փակ, սոյն ճգնաժամային օրերուն ամէն հայու, առանց յարանուանական խորութեան, պարտական-

նութիւնն է աջակցիլ իրարու եւ ազգային ու եկեղեցակրօնական ոգին ու գիտակցութիւնը վառ պահել սրտերու մէջ:

Միւս կողմէ ալ, միթէ Նայաստանեայց Առաքելական ազգային նահապետական Մայր Եկեղեցոյ եւ եկեղեցականութեան վրայ պարտականութիւն չիյնա՞ր արթննալ իր թմբիւրէն եւ բարեկարգչական եւ արդիականացման ջանքեր ու ձեռնարկներ ընել յօգուտ ազգին եւ անոր դարաւոր եկեղեցոյն, որ սկիզբի օրերէն եղած է եւ է, իր իսկ փառքը պատիւը եւ պահապան հրեշտակը:

1855 թուին, իբրեւ առեւտրական ներկայացուցիչ՝ Մարաշ կը գլխաւոր անգլիացի մը, զոր տեղացիք Խաւաճա կը կոչեն: Այդ օրերուն թուրքերը չկրնալով իրենց մէջ եւրոպացիի մը ներկայութիւնը հանդուրժել, օրին մէկը ահագին խուժան մը կազմելով կը յարձակին յիշեալի փան վրայ եւ կրակի կու փան գայն: Խավաճան ու կինը հրոյ ճարակ կ'ըլլան, իսկ երեխայ մը կ'ազատի քրիստոնիայի մը ճարակելութեամբ, որ ապա արտասահման կ'ուղարկուի: Տեղական կառավարութիւնը սկիզբը լուռ կը մնայ անտեսելով ոճրագործները պատժելու անհրաժեշտութիւնը, սակայն ետքէն եւրոպական միջամտութեան կամ սպառնալիքի փակ պարագլուխներէն վաթսունի մօտ թուրքեր Ափանա կ'աքսորէ, որոնցմէ շատ քիչեր կը վերադառնան եւ այն ալ փարիներ յետոյ միայն:

ՄՈՒՏՔ ՊԱՊԱԿԱՆՈՒԹԵԱՆ

1857-ին Նայ-Կաթողիկոսութիւնը, հետագայ պարագաներու փակ մուտք կը գործէ ի Մարաշ: Նալեպարնակ Սուրեան- կաթողիկ մը՝ Նաում Պազգաշ, իբր օղափոխութիւն կու գայ Մարաշ, եւ խնամիտութիւն կը հաստատէ Գոյումճեան Յակոբի հետ, աղջիկը փախով վերջնոյս փղուն՝ Յարութիւնին: Ս. Մարգիս եկեղեցոյ օրուան քահանաներէն՝ Տ. Յովհաննէս Վարժապետեան, եւս փեսան ըլլալով Յակոբ աղայի, կ'այցելեն իրարու: Նոյն թաղի բնակիչներէն Մոմճեան Պօղոս, կառավարական արկղակալի խնդրոյ առթիւ Ս. Գեորգ եկեղեցոյ ազգայիններէն Թօփալեան Յակոբ աղային հետ կը գժփի, որով երկու հակառակ կուսակցութիւն կը կազմուի Թօփալեան - Մոմճեան, որուն հետեւանքը կ'ըլլայ եկեղեցական բաժանում: Նաումն ալ իր մեծ բաժինը կը բերէ սոյն գործին: Սոյն

հերձուածին ուժ կու փայ նաեւ Յովհաննէս քինյ. նպատակ ունենալով իր գլխէն հեռացնել ազդեցիկ անձերը եւ ըստ կամս գործել: Ան կիրականօրեայ ժողովի մը մէջ, գաղափարակիցներու կը պարզէ իր ալ անջարտողական նպատակը: Միեւնոյն ժամանակ, ներկաներուն ցոյց կու փայ Վենետիկ փախած կարգ մը հայերէն գիրքեր, համոզելու համար որ, անոնք ալ հայեր են, եւ մեզմէ գրեթէ փարբերութիւն չունին, ժամ-պատարագ մեզ նման հայ լեզուով կը կարարեն: Վերջապէս կը յաջողի համոզել զոմանս, կ'որոշեն հանրագիր մը խմբագրել եւ դրկել հայ-կաթողիկ առաջնորդին եւ անկէ քահանայ մը ուզել:

Նանրագիրը կը ստորագրեն Տ. Յովհաննէս, Մոմճեան Պօղոս, Զուլամեան Գրիգոր, Ներկիզեան Մարգիս, Կեօգիւպէտոյիքեան Նահապետ, Արըզեան Յարութիւն եւ այլք եւ գաղտնագրողի կը դրկեն Նալեպ: Նակառակորդ խմբակը սակայն, քայլ առ քայլ կը հետեւի իրերուն եւ քաղաքէն երեք ժամ հեռու Գափու Չամ կոչուած փեղը դիպողներ կը դրկէ, որոնք կը ձերբակալեն փայելը եւ ձեռքէն կ'առնեն հանրագրութիւնը: Խեղճը փրփում փխուր կը վերադառնայ քաղաք եւ գլխուն եկածը կը պատմէ Տէր Յովհաննէսի, որ ուրիշ մը կը գրէ եւ Մլաքեան Կարապետի միջոցաւ կրկին կը դրկէ: Թղթափարը այս անգամ կը հասնի Նալեպ ու գիրը կը ներկայացնէ Ն. Կ. առաջնորդին, զոր կ'ենթադրեն ըլլալ Բարսեղ Վրդ. Այվազեանը:

Ասոր վրայ Մարաշի մէջ գրոյց կը շրջի, թէ ֆրանկը կու գայ, արդարեւ ոչ շատ օրեր յետոյ Նալեպէն Մարաշ կը հասնի մի ոմն Յակոբ Ապունա, որ կ'իջնէ Մոմճեան Նիկողոսի փունը, ուր փեղի կ'ունենայ առաջին հայ լեզուով եւ հայ-կաթողիկ ծեսով ժամ-պատարագը, ապա իբր եկեղեցի կը վարձուի Ուզուն Թէրզեանի բնակարանը: Տէր Յովհաննէս եւ կողմնակիցները յաղթանակը փարած էին, ի վնաս ազգին լռութեան անշուշտ: Սակայն քիչ յետոյ Տէր Յովհաննէս կը զգաստանայ ու կը դառնայ իր որոշումէն, բայց արդէն խմբակ մը բաժնուած էր հայ սուրբ եկեղեցոյ գիրկէն եւ կազմած ուրոյն համայնք մը՝ հայ-կաթողիկ անունով, որոնք իբր թէ, ըստ փրոսած հաւաստումներու պիտի ըլլային «Նիւմայէլին», այսինքն՝ զերծ բռնութենէ, փաճկական անիրաւութենէ, «Կեվուր»

և «Խընգըր» կոչուելէ, ինչպէս նաև կարգ մը փուրքերէ: Այսպէս համոզած էին շարերը: Սոյն խոսքումները չեն իրականանար սակայն, դժբախտ իրականութիւնը քաժանումը միայն կ'ըլլայ:

Քահանան, այս ձեռով շուրջի ազդեցիկները հեռացնել վերջ կը սկսի ինքնագլուխ եւ միահեծան իշխել Ս. Մարգիս եկեղեցւոյ մէջ, կ'իրացնէ անոր հարստութիւնը, փութով աւելորդ իրեր հալեցնել կու փայ, (արծաթեղէն եւ ոսկեղէն անօթները- խաչ, ճաճանչ, կանթեղ եւ այլն), ի վաճառ կը հանէ ակեր, թանկ քարեր եւ կուլ կու փայ: Յիրաւի, Տէր Յովհաննէս քաղաքին միակ հարուստ եկեղեցականն էր եւ որ բաց ասփի իրացուցած էր նաև սա կամ նա բարեսիրական եւ եկեղեցա-կրթասիրական հասարակութեանց եկած գումարներէն կարելոր մաս մը:

Սոյն Տէր Յովհաննէս Քինյ. Վարժապետեան երկար փարիներ Առաջնորդական փեղապահի պաշտօնը վարած է Համիտեան շրջանին:

Աս ասանկ ըլլալէ ետք Գրիգոր Պետրոս Ը. Կաթողիկոսի կողմէ առաջին անգամ պաշտօնապէս Մարաշ կը դրկուի Հայր Արիստակէս վրդ. Հաճիպիար:

Հայ-Կաթողիկներու առաջին եկեղեցին յանուն Ս. Փրկչի, կը հիմնարկուի 1861-ին եւ կ'օծուի 1865-ին:

1859-էն առդին հետեւեալ վարդապետ կամ եպիսկոպոսներ պաշտօնավարած են ի Մարաշ իբր կաթողիկոսական փոխանորդներ.

1. Պետրոս Գերապայժառ Աբելեան	1859
2. Կղեմէս վրդ. Միքայէլեան, որ ապա եպիսկոպոս ձեռնադրուած է Մարաշի մէջ	1875-89
3. Էմմանուէլ վրդ. Պոյաճեան	1890
4. Աւետիս եպս. Թուրքեան	1890
5. Էմմանուէլ վրդ. Պոյաճեան, կրկին	1899
6. Յովհաննէս եպս. Մուրապեան	1901
7. Էմմանուէլ վրդ. Պոյաճեան գ. անգամ	1905
8. Ինգնատիոս վրդ. Թէրզեան	1907
9. Աւետիս Եպս. Արփիարեան	1909

Ան մինչև վերջին օրերը 1920-23 վարած է իր պաշտօնը:

1. Յովհաննէս վրդ. Կէփիկեան	1906-08
2. Յովսէփ վրդ. Թաթըրեան	1910-12
3. Խորէն վրդ. Կապապետեան	1914-22

թուականներու իբր մուրախիասսի փոխանորդ, կառավարական գործերով զբաղած են:

Ս. Փրկչի եկեղեցին փեսակ մը մենաստան եւ կուսանոց եւս էր: Ունէր փասնեակ վարդապետներ եւ մայրապետներ, իր հաւաքացեալներուն ընդհանուր թիւը կը հասնէր շուրջ 5500 անձի: Ներկայիս քանդուած է:

Նախ քան կաթողիկոսեան մուտքն ի Մարաշ, Կիլիկիոյ (Զմմար) Ն.Կ. կաթողիկոսներէն Յակոբ Դ. 1752-ին Մարաշի անուանական եպիսկոպոս կը ձեռնադրէ Այնթապցի Ղուկաս Վ.-ը, Գրիգոր ԺԲ. 1806-ին՝ Քիլիսցի Պետրոս Վ. Ճէրանեանը, ինչպէս նաև Յակոբ Ե. 1842-ին՝ Պետրոս Վ. Աբելեանը:

Հոս կ'արժէ յիշել պատմական դէպք մըն ալ, որ կրնայ միեւնոյն արեւն գաղափար մը փալ ժամանակիս հայոց վիճակին եւ թուրք մտայնութեան մասին:

Այդ օրերուն, 1860-61 անշուշտ եւ անկէ ալ առաջ, Մարաշի հայոց եւ փաճկաց փուրքի բաշխումը ուղղակի թրքաց կողմէ կը կատարուէր ըստ քմաց, անփարակոյս մեծ մասը քրիստոնէից բռնցնելով: Հայերը այլեւս ձանձրանալով թուրքերու այս անարդար բաշխումէն, կը սփիպուին բողոքել Կ. Պոլիս դրկելով օրուան կարող քահանաներէն Տ. Նահապետ Տ. Կարապետեանը, Պարիարքարանի միջոցաւ միանգամ ընդմիջտ առաջքն առնելու համար սոյն անիրաւութեանը: Տ. Նահապետ քինյ. կը ժամանէ Պոլիս եւ Մարգիս պարիարքի միջոցաւ կը դիմէ կառավարութեան: Կարելոր եւ դժուարալոյժ խնդիր արդարեւ, սակայն Տ. Նահապետ չի յուսահատիր եւ փարիուկէս Պոլիս մնալով, յաճախակի դիմում կատարելով կը յաջողի Սուլթան Մեճիփէն մասնաւոր հրովարտակ սքանալ, որով կը հրամայուէր յետ այսու թուրքերուն արգիլել ըստ կամս բաշխում փուրքերու եւ հայոց իրաւունք կու փայ իրանք իրանց ընել նոյն բանը ըստ իւրաքանչիւրի կարողութեան եւ փարողութեան, նշանակուած քանակի մը վրայ: Սոյն փուրքին այն արեւն «իրէփրէ» անունը կու փային:

Տ. Նահապետը՝ Սուլթանի ֆերմանով զորացած ու հպարտ կը վերադառնայ Մարաշ, Միւնիֆ փաշայի կառավարչութեան օրով, հայերը ուրախութեան շունչ մը կ'առնեն: Աջապահեան Նիկողոս եպիսկոպոս զգեստաւորուելով, քահանայ եւ երեսելիներով շրջապարուած, Ֆերմանն ալ արծաթ սկուրեղի վրայ դրած, թափօր կազմելով կը մեկնի Ս. Քառասուն Մանուկ եկեղեցիէն դէպի կառավարչարան: Տեղի կ'ունենայ հանդիսաւոր արարողութիւն մը, Միւնիֆ փաշա բարձրաձայն կարդալ կու տայ հրամանագիրը, Նիկողոս սրբազան աւուր պապշաճի ապենաբանութեամբ մը կը գովէ Վեհ. Սուլթանի արդարասիրութիւնը եւ յանուն ժողովուրդի երախտագիտութիւնը կը յայտնէ: Թուրքեր սրբազանի պերճախօսութեան վրայ ափի բերան կը մնան:

Տ. Նահապետ Սուլթանէն ուրիշ շնորհ մըն ալ ստանալու բախտը կ'ունենայ: Ժամանակաւ ի Մարաշ (գուցէ եւ այլուր) հայ մը մեռնելու պարագային, Կրօնական գաղտնի թաղման արտօնագիր ստանալ պարտաւորիչ եղած է. հակառակ պարագային թաղել անկարելի կ'ըլլար: Պոլիս մեկնելու պահուն Տ. Նահապետ սոյն արտօնագիրներէ (իզիմնամէ) բազմաթիւ օրինակներ միասին կը տանի ու կը ցուցնէ Մարգիս պարբիարքին, որ անոնցմէ մէյմէկ օրինակ կու տայ օտար դեսպաններու, թելադրելով միեւնոյն ապեն Տ. Նահապետին, որ ասոր բարձումին համար ալ դիմում ընէ. կ'ընէ եւ կը յաջողի անոր մէջ ալ, ան օրուան մեծ եպարքոսէն Մարաշի կառավարիչին ուղղուած հրամանագիր մը կը բերէ, ուր կը հրամայուէր յետ այսու ջնջել «իզիմնամէ»-ի այդ անվայել դրութիւնն ալ:

Նոյն «իզիմնամէ»ներէն հար մը դնել աւելորդ չի պիտի ըլլայ անշուշտ, որուն պարունակութիւնը բաւական հետաքրքիր, կրնայ գաղափար մը տալ ժամանակին թուրքերու մտայնութեան եւ մոլեռանդութեան մասին: «Մարաշն Շէյխ մահալլէսի սաքինլերինսքէն Տէյիքմէնճի օղլու Փէնիս, զիմմի, միւրս օլմուշ, մերգումըն Կէֆնիսն իշպու րուխասաթնամէ վերիլպի:»

Ուրիշ օրինակ մը, «Էլպիսէսի սիայ րէնկի գաթրանի, իթի-գաթը պաթըլ փըրփըր կիրուիի դօճա փափագ սէնքի... Ֆէլան մահալլէսինսքէն ֆէլան զիմմի միւրս օլմուշ, մերգումըն լէշի խասպիսէ-

սինի պիր հէնպէք աջըպ իչինէ եուվարլայը վերմէնէ իշպու րուխասաթնամէ վերիլպի:» Մա ստացուած է Արանայէն: Տ. Նահապետի Մարաշ վերադառնալէն յետոյ, այդ դրութիւնն ալ կը վերանայ:

Սոյն երկու կարեւոր դէպքերը, քուրքերու առանձին բաշխումը եւ առանց արտօնագրի մեռել թաղելը, իրենց վար ազդեցութիւնը կ'ունենան թուրք մոլեռանդներուն վրայ, որոնք բազմաստորագիր հանրագրութեամբ մը կ'ամբաստանեն զայն իբր խռովարար ոմն, Կեսակ Կեսակ գրպարպութիւններ յերիւրելով եւ կը դրկեն Պոլիս: Սուլթան Մեճիպ չուգելով թուրքերուն ալ սիրտը եւ զգացումները բոլորովին վիրաւորել ու վշտացնել, Ֆերման կ'ընէ, որպէսզի Տ. Նահապետ աքսորուի: Եւ Սուլթանն ալ անունով մէկը յանկարծ 50-ի մօտ գալթիյէներով կու գայ Ս. Քառասուն Մանուկ եկեղեցին եւ կը փնտռէ Տ. Նահապետը: Ճիշդ այդ պահուն, քահանան եկեղեցույ դռնէն դուրս կ'ելլէր, իրեն կը հարցնէ բարկացած «Տ. Նահապետ փափագ պուրափա՛ մը», քահանան վրանգը կռահելով սակայն պաղարունութեամբ՝ «խայրը պուրափա փէյիլ փիր» կ'ըսէ ու կ'ծիկը կը դնէ, կ'երթայ Պօյրագ օղլունց (հայ) տունը կ'ապաստանի:

Սակայն կառավարութիւնը հետապնդումը կը շարունակէ ու զինք ձերբակալելով կ'աքսորէ՝ Կեսովուր Տաղըի (Մեւ լեռ կամ Ամանոս) Նասան Պէյի զիւղը: Միաժամանակ կ'աքսորուին նաեւ ուրիշ երկու ծանօթ հայեր՝ Թօփալեան Նաճի Յակոբ աղան եւ Տէօվլէթ էֆ. Չօրպաճեանը: Վերջինք Ֆռնուզի Ս. Կարապետ վանքը կը դրկուին, ժամանակ մը մնալէ ետք, բոլորն ալ ողջամբ կը վերադառնան:

1865 թուականին առաջին անգամ ըլլալով Մարաշ մուր կը գործէ, քարիւղ-կազի լամբարի գործածութիւնը, նախ քան սոյն թուականը Կրօնական անխտիր իբր լուսաւորութեան միջոց, ձիթախիւղ ճրագակալներ եւ մեղրամոմէ կամ ճրագուէ, ինչպէս նաեւ ծծումբէ պարաստուած լոյսեր կը գործածէին:

1870-ին կը հաստատուի հեռագրական ընկալուցը, որ կը կազմէ արագ հաղորդագրութեան սկիզբը: Թղթապարտութեան կամ փօսթի սկզբնաւորութիւնը աւելի հին է եղած:

1873-ին Մարաշի հիւսիսային կողմը գտնուող Ախրը լեռնէն

մեծ հեղեղ մը կը վազէ, կ'իջնէ քաղաքին վրայ եւ քանի մը ճիւղերու բաժնուելով բաւական նիւթական վնաս կը հասցնէ, շար մը պարփեղներ, մրգաստաններ եւ այգիներ արմատախիլ կ'ընէ կը փանի. անձի կորուստ չի պատահիր սակայն:

1884-ին Ապրիլին, հրդեհ մը փեղի կ'ունենայ քիւլէկի պազարը կոչուած փեղէն, քաղաքին հարաւային կողմը եւ կ'այրէ ընդհանուր շուկային երկու երրորդ մասը, յարակից շէնքերով եւ կանգ կ'առնէ Ս. Քառասուն Մանուկ եկեղեցոյ խիստ մօտիկը. սոյն հրդեհը ծանօթ է (մեծ հրդեհ) անունով:

Օսմ. կառավարութիւնը, մանաւանդ հայ-քաղաքական գոյգ կուսակցութեանց Ննչակեան եւ Դաշնակցական մարմին առած օրէն ի վեր, սկսած էր խեթի նայիլ հայոց վրայ, մասնատրապէս հայկական հոծ բնակչութիւն ունեցող գաւառներու վրայ, Վան, Մուշ, Մասուն, Զէյթուն եւ այլն: Մարաշ ալ վերջնոյս ճամբուն վրայ եւ անոր բանալին ըլլալով գերծ չէ մնացած, հալածանք, բռնութիւն, բանտ եւ քստրէ: Այսպէս կարգ մը հայեր թիւով 90-100 հոգի, երկու կամ երեք խումբերով 1892-ին, զանազան քաղաքական յանցանքներով անբաստանուած, մանաւանդ Զէյթունի հետ յարաբերութեան մէջ ըլլալու եւ հոն ռազմանիւթ եւ զէնք փախցնելու կամ հասցնելու ձրի գրպարութեամբ, կ'աքսորուին Նալէպ ու հոն կը բանտարկուին, ժամանակ մը յետոյ ազատ կ'արձակուին կաշառքի միջոցաւ եւ միջնորդութեամբ: Սոյն քստրէալ բանտարկելոց գլխաւորները եղած են՝ Տ. Ղեւոնդ քինյ. Տ. Նահապետեան, Գեորգ Մուրապեան, Գեորգ Խրլաքեան, Կարապետ Թօփալեան, Կարապետ Քէշիշեան, Աւերիք Աւագեան եւ այլն:

1895-ի ընդհանուր ջարդին (Սուլթան Նամիպի) «Գահիրը Թէփմիր»-ին, Մարաշի հայութիւնը շուրջ իննը հարիւր անձի կորուստ մը կ'ունենայ:

Սոյն ջարդը փեղի կ'ունենայ երկու անգամով, մին Նոկպ.23-ին իսկ միւսը Նոյ.8-ին, հետեւեալ պարագաներու փակ: Առաջինին թուրքեր կը հալածեն հնչակեան փեղական կուսակցութեան ծանօթ ղեմերէն Պ. Սողոմոն Ալիքսանեանը, որ փողոցէ փողոց փախուստ փալով կու գայ, կ'ապաստանի նախ Շահինեան Թորոսի, ապա Տէր Մինասենց փունը, սակայն թուրքերը միշտ կը հետա-

պրնդեն զինք ու կը խռնուին դրան առաջ: Յանկարծ զէնքի պայթիւն մը կը լսուի, որու հետեւանքով կը խուժեն փան վրայ, Սողոմոն խոյս կու փայ ու կ'երթայ կը մտնէ ուրիշ փուն մը: Թուրքերը օձիքը չեն ուզեր ձգել, անմիջապէս կը պաշարեն վերջին փունը ու թէ զինք, թէ մէջի բնակիչները սրախողխող կը սպաննեն: Որպէս հետեւանք շուկային մէջ ալ խուճապ կը փիրէ, նոյն օրը ցան ու ցիր սպաննուածներուն թիւը կը յանգի 150-ի:

Սոյն խառնակ օրերուն, ուրիշ դէպք մըն ալ կը պատահի, որ աւելի կը գրգռէ թուրքերու ջղայնութիւնը: Քանի մը հնչակեաններ զիշերանց, թաղէ մը ուրիշ թաղ պէտք էին փեսած զէնք փոխադրել դազադով, սակայն յակամայս կ'ուշանան ու կը մնան առփուսն՝ մութնուլուսին, երբ կ'անցնին Ույուզ Բունարը-ի բորոտներու աղբիւրին քովէն կը նշմարուին, կը հետապնդուին, օձիքը ձեռք չի փալու եւ գործողութեան երեսն չի գալու համար, կը ստիպուին զէնքի դիմել ու կը դաշունահարեն հետապնդողը՝ քէօյնէքսիզ անուանեալ թուրքին փղան, սակայն չեն կրնար գայն կապարելապէս սպաննել ու կիսամեռ կը թողուն, կ'անցնին: Ան քանի մը օր յետոյ կը մեռնի, սակայն արդէն ճանչցած էր փոխադրողներէն մին՝ Յարութիւն Տիրովեանը, որ ապա կը ձերբակալուի ու կ'աքսորուի Բայասի գնդանը ուրիշ ընկերոջ մը՝ Յովհաննէս Ագրապեանի հետ: Սոյն դէպքն ալ կու գար հրահրել, արդէն բռնկելու վրայ եղող կրակը:

Ուրիշ դէպքեր: Մարաշի մէջ թուրք հազարապետ մը իր քովը հայ կին մը կը պահէ, այս մէկը ազգին նախաքինք սեպելով եւ այդ արաքը մաքրելու համար, հնչակեան Յովհաննէս Չարգճեան կը հետապնդէ հազարապետը եւ օր մը, յարմար առիթը գտնելով Խաթունիյէ թաղի մզկիթէ լոգարանին մէջ կը սպաննէ վեց հարուածի գնդակով մը:

Նոյնպէս իր հայապետաց դիրք ու գործով ծանօթ՝ Խիւրայի Զարէ Տուրքու կը սպաննուի Քիւրպօղլեան Վարդավառի ձեռօք, Տուրքու շարունակ չար աչքով կը դիպէ եղեր Նայոց գործունէութիւնը եւ բնաւ չհախորժիր եղեր լսել Ս. Գեորգ եկեղեցոյ զանգակին ձայնը:

Առաքելեան Մարգիս կը վիրաւորէ դրամահաւաք Տ. Պեր-

րոսեան Կարապետը, որ մարմնիչ կը նկատուէր:

Ինչպէս յիշեցինք, երկրորդ եւ բուն ջարդը փրկի կ'ունենայ Նոյ. 8-ին, որ կը փեւէ մէկ երկու օր, անոր զոհ կ'երթան փասնեակ հարիւրաւոր հայորդիներ: Սոյն թիւը գուցէ աւելի մեծ ըլլար, սակայն «Խավաճայի» հրդեհումէն վերջ 1855-ին, թուրքերէն ոմանց արտոր երթալուն, ոմանց իբր բարի անհաբներ ձեռնապահ մնալուն, ոմանց իրենց դուռ դրացիները խնայել ու պահելուն եւ ոմանց ալ գուցէ Զէյթունի վախը, սահմանափակած է զայն մասամբ: Նրդեհուած է Ս. Գեորգ եկեղեցին եւ Շէքերփրէէ հայ թաղը. ինչպէս նաեւ Ս. Սարգիս եկեղեցոյ մէկ մասը յարակից փուներով եւ Ս. Կարապետը: Բանարկուած են կուսակցութեան անդամներ, ունետոր եւ ծանօթ դէմքեր, զոր օրինակ Տէր Ղեռնդ եւ Տէր Վարդան քահանայք, պատուելի Ա. Շիրաճեան, Նշան Բիրէճեան, Կարապետ եւ Նազարէթ Պիլեզիկճեան, Կ. Զօրպաճեան, Յ. Զօրպաճեան, Փանոս Ֆէթուլլահեան եւ այլ շար շարեր, շուրջ երկու հարիւր անձ, որոնցմէ ոմանք խիստ հարցաքննութեան, ծեծի ու ծանր խոշտանգում եւ պատիժներու ենթարկուած են, անոնցմէ մաս մը չկրնալով փոկալ, հոն իսկ մեռած են ու դապը վերջացուցած. իսկ ուրիշներ ժամանակ մը բանք մնալէ յետոյ յետ դապարավարութեան անպարտ արձակուած են, մինչ ուրիշներ, թէ երկար եւ թէ ցմահ բանարկութեան եւ արտորի դապարարուած են. ասոնք ալ շուրջ երկու փարի պառկելէ ետք, ներման կ'արժանանան ու կ'ազարին: Զարդի սոյն օրերուն Մարաշ կանոնաւոր զինուորներով լեցուն էր, որոնց թիւը օր ըստ օրէ կը ստուարանար, կու գային ու կ'երթային Զէյթուն, որ ապստամբութեան դրօշը պարզած էր արդէն եւ ընդհարումը սկսած: Օսմ. կառավարութիւնը կանոնաւոր բանակ եւ զօրքէ զար բազմաթիւ «պաշտպօզուք»ներ եւս փարած էր հոն, ընդհ. հրամանադրութեամբ Միւշիք Էփեմ փաշայի եւ Ալի պէյի, որոնք կ'երթան եւ բաւական նախճիրներ կը գործեն այն անմեղ հայ գիւղացիներուն վրայ, որոնք չէին կրցած ժամանակին փախչիլ ու ապաստանիլ Զէյթուն: Ասոնց մեծ մասը զոհ կ'երթան բանակին եւ անկանոն զինուորներուն եւ մէկ մասն ալ խեղճ ու կրակ վիճակի մէջ, իբր պատերազմական գերի Մարաշ կը բերին. չենք խօսիր ճամբան սպաննուածներուն մասին: Սոյն եկողնե-

րը կը լեցուին կեղոնական վարժարանի եւ այլ շէնքերու մէջ, ուր ժամանակ մը, բաւական երկար արեւն, հայոց կողմէ խնամուելէ վերջ, յետ հաշտութեան կը վերադառնան իրենց գիւղերը:

Անկանոն զինուորներու մէջ կային նաեւ մարաշցի թուրքեր, որոնք «մամա»ներ՝ զէյթունցի կիներ բերելու փափաք ու հեռակարով գացած էին, սակայն անոնք ամօթաւոր ու կորակոր կը վերադառնան քաղաք, քանզի Զէյթուն կը յաղթէր եւ հազիւ զէնքը վար կը դնէր Նալեպէ եկող Երոպական պետութեանց հիւպատոսներու միջամբութեամբ: Զէյթունցիք ձեռք կը բերեն կարգ մը առանձնաշնորհումներ, որոնցմէ մին էր եւ գլխաւորը յետ այնու նշանակուելիք Գայմագամին քրիստոնէայ ըլլալը:

Դեռ հիւպատոսները չժամանած, Մարաշի կառավարութիւնը, Տ. Ապուածապուր քինյ.Թորեան, Պեքրոս Սէրայարեան, Յարութիւն Մուրաբեան, Յովսէփ Տիշէքէնեան, Կոստան Վարժապետեան եւ Պեքրոս Սալաթեանէ բաղկացած պատուիրակութիւն մը կը դրկէ Զէյթուն, որպէսզի յորդորէ զանոնք, հանդարտ մնալ, զէնքերը վար դնել եւ հնազանդիլ ու յանձնուիլ կառավարութեան, սակայն մտիկ ընող չըլլար եւ պատուիրակութիւնը անյաջող կը վերադառնայ: Պատուիրակութիւնը դրկելով, կառավարութեան բուն նպատակը եղած էր ժամանակ շահիլ եւ արզիլել Մարաշի վրայ յարձակման մը հաւանականութիւնը: Արդարեւ Զէյթունցիներու եւ Մարաշցիներու միջեւ այդ մասին համաձայնութիւն մը գոյացած էր, անանկ որ ապստամբութենէ առաջ որոշեալ օրը իբր 300 զինեալ մարաշցիներ, պիտի երթային անոնց միանալու, սակայն վերջինք չեն երթար եւ խորհուրդն ու գործը կը վիժի:

Զէյթունի սոյն ապստամբական շարժման պարագլուխ եւ ղեկավարները եղած են Ննչակեան կուսակցութենէն Պ. Պ. Աղասի, Նրաչ, Ապահ, Մլէհ, Նշան եւ Կարապետ, ինչպէս նաեւ վեղարաւոր հերոսը՝ Ֆռնուզի վանահայր Տ. Բարթողիմէոս Ծ. Վրդ. Թախաճեան եւ բնականաբար Զէյթունի իշխանները:

Պ. Աղասի եւ իր ընկերները յետ հաշտութեան ապահով կերպով եւ թուրք կառավարութեան ծախք ու պաշտպանութեամբ արտասահման կ'անցնին, երոպական փերութեանց գիտութեամբ

և անոնց հիւպափոսներու միջոցաւ, որոնք Մարաշէն անցնելով գացած էին Զէյթուն: Ապա արեն մը Մարաշ մնալով վերադարձած փեղերնին:

Այդ թուականէն, 1895-էն սկսեալ, Զէյթունի փրուած կարգ մը արարօնութիւն կամ առանձնաշնորհումի մօտէն հսկելու համար, Մարաշի մէջ կը հաստատուէր Ֆրանսական փոխ-հիւպափոսութիւն մը:

Այդ հիւպափոսները եղած են.-

- | | |
|---------------------------|---------------------|
| 1-Մէտիէտ Աբրիէն Պարթէլըմի | (Adrien Barthelemy) |
| 2-Մէտիէտ Ֆերփինանպ Վիէյթ | (Ferdinand Viet) |
| 3-Մէտիէտ Բօլ Թէյլէ | (Paul Theillet) |
| 4-Մէտիէտ Ալպէրթ Պլաշօն | (Albert Blanchon) |
| 5-Մէտիէտ Տընի | (Denys) |
| 6-Մէտիէտ Էմիլ Լօրժու | (Emile Lorgeou) |
| 7-Մէտիէտ Մօրիս Կրաբէն | (Maurice Grapen) |
| 8-Մէտիէտ Նապիպ Էփրէ | (Habib Edde' 1915) |

Անոնց թով իբրեւ փեղեկութիւն փրուած կարգ մը թուղթերը ձեռք անցնիլը, կրնան վրանգաւոր ըլլալ հայոց, յեփազային այրուած են Խորէն վրդ. Կապափեանի պնդումով:

1896-ին, Մարաշէն կարգ մը որբեր, թիով եօթանասուն փարուած են Երուսաղէմ (40), Պէյրութ, Իզմիր, Ամասիա եւ այլն. զանոնք առաջնորդած են Մանուկեան Կարապետ եւ Աստուծեան Աբրահամ: Այս որբերէն մեծ մասը փեղաւորուած էին Երուսաղէմի Շընէլլէր անուն Գերմանական հսկայ որբանոցը, ուր բացի ուսումէ աշակերտներուն կը սորվեցնէին նաեւ արհեստներ, ինչպէս՝ կօշկակարութիւն, երկաթագործութիւն, արագծագործութիւն, բրուրութիւն եւ այլն:

1908-ի զարնան, ազատութիւնը հռչակուած է արդէն, հոգիները ցնծուն եւ երեսները ծիծղուն են, հին երագ մըն էր, որ կ'իրագործուէր, կը կատարուէր. հինը, անցեալը մոռնալ եւ նորով, ներկայով ուրախանալ եւ ապրիլ կը յանձնարարուէր: Այդ օրերուն Մարաշ կը հասնէր իթթիհափական երեք սպաներէ՝ Պէհճէթ պէյը եւ իր ընկերներէ բաղկացած զինուորական առաքելութիւն մը, որուն առաջադրեալ նպատակը կ'ըլլար փեղական այլասեռ փար-

լերուն ազատութեան աւերիսը փալ եւ անոնց միջեւ եղբայրակցութեան, հաւասարութեան եւ արդարութեան կապերը ամրացնել: Անոր սիրով ընդառաջ կ'երթան արդէն ազատութենէ հայեր. կը բացուին ընթերցասրահներ, ժողովարեղիներ, կը սարքուին յարաններ ու կը յեղեղուին միեւնոյն յանկերգները, նոյն իսկ օրուան միութեասրը կը համարձակի այցելել ու քարոզել նոյն նիւթի մասին բողոքականաց եկեղեցւոյ եւ հայոց յարանին մէջ:

Ազատութեան հռչակման օրերուն, հրապարակաւ նախափինք եւ թուք ու մուրի կ'ենթարկուին Ազատեան Մկրտիչ եւ Կէյիկեան Գրիգորը, որոնցմէ մասնաւորապէս առաջինը լաւ եւ բարի համբաւ մը չունէր յաջա հայոց եւ որ յաճախ կառավարութեան մօտ իր թարգմանիչ կամ գրաքննիչ կը ծառայէր, սակայն իր քաղաքականութեամբը սխալ թարգմանելով, շատ անգամ վնասած էր հայ ծանօթ անհապններու: Ողբացեալ Սմբատ Դաւթեան եւս ստոր զոհերէն մէկը եղած է, փարի ու կէս բանփարկուելով Մարաշի մէջ:

Թուրքերու մոլեռանդ դասակարգը հաշտ աչքով չէր դիտեր սոյն համերաշխական փորձերը եւ կ'ուզէր վիժեցնել, սակայն իրենք մէջքեղ ելլել չհամարձակելով, ձեռքի փակել կը գրգռեն կիները, որոնք մեծ ամբոյս մը կազմելով եւ զինուած՝ բրօք եւ քարամբք, օր ցորեկով կ'երթան ու կը քարկոծեն կառավարիչին բնակարանը պոռչալով «կառավարիչը կեալուր է եղեր, չենք ուզեր զինք, չենք ուզեր» եւ այլն:

Եւ արդարեւ կը վախնար միութեասրը փեղի ունեցած ցոյցէն աւելի՝ սրացած սպառնալիքներէն եւ նոյն գիշերն իսկ, փախուսք կու փար քաղաքէն, շունչը ուղղակի Այնթապի մէջ առնելով եւ ուր քիչ յեփոյ կը մեռնէր:

Ազատութեան կը յաջորդէր Կիլիկիոյ կամ Արանայի ջարդը, որուն զոհ գացին մօտաւորապէս 30 հազար հայեր: Յ. Պապիկեան իր փրուած անկաշկանդ եւ անաչառ փեղեկեգրին մէջ կը յիշէ ջարդի մանրամասնութիւնը: Սոյն ջարդէն Մարաշ նոյնպէս անմասն չի մնար եւ կու փայ մօտ 500-600 անձերու կորուստ մը, մեծ մասամբ դուրսերը, Արանա, Օսմանիյէ, Պաղչէ եւ այլ փեղեր: Նոս մասնաւոր յիշատակութեան արժանի են այն հոգեւորական եւ մտաւորական հայերը, պատուելի, քարոզիչ եւ ուսուցիչ, որոնք ողջ ողջ կ'ող-

ջակիզուին Օսմանիյէի բողոքականաց եկեղեցւոյն մէջ եւ որոնք Արանայի մէջ Գեղի ունենալիք եկեղեցական ընդհանուր եւ շրջակային Ժողովոյ՝ Միութեան ներկայ գրնուելու համար, ճամբայ կ'լաձ էին գանազան Գեղերէ:

1914 Յուլիս 21-ին, քաղաքին գանազան կէտ եւ հրապարակներուն վրայ կը փակցուին զօրաշարժը յայտնող եւ հրապարակող ազդերը, որոնց բովանդակութիւնը արդէն նախապէս փարաձայնուած էր, որով ամէն հպարակ անձ, ցեղ կամ ազգ հանդէպ կառավարութեան որոշ պարտականութիւն մը կարարելու են կը հրաւիրուէր են կը պարտաւորուէր, դրամով, ինքքով եւ անձով: Ամէն ինչ կառավարութեան էր եւ ամէն զէնք կրելու կարող անհար, զինուոր պէտք է ըլլար: Բանակի պէտքերը հոգալու համար ժողովուրդը անխափիր փալու էր ամէն ինչ որ ունէր, ինչ որ ուզուէր, կը փրուէր առանց առարկութեան եւ փրփունջի: Անխրաւութիւններ եւ բռնի գրաւումներ եւս ոչ քիչ անգամ կը պարտաւէին. բայց ո՛վ կրնար առարկել:

Զօրաշարժի յայտարարութենէն մինչեւ Մարաշի փարագրութեան թուականը՝ 1915 Յուլիս 27 - 7 Օգոստոս, հայ ժողովուրդը հսկայական զոհողութիւններ ըրաւ, կարելի է ըսել թէ, նախ կողոպտուեցաւ եւ ապա փարագրուեցաւ:

Նախքան ընդհանուր Գեղահանութիւնը՝ շուրջ երեք չորս ամիսներ առաջ, պալատ հրաւիրուելով՝ հոն քանի մը օրեր արգելափակուելէ յետոյ, կ'աքտորուէին եօթը ընտանիքներ, անոնք ճամբայ կը բանային միւսներուն: Անոնք եղած են. 1- Տ. Ղեւոնդ քինյ. Տ. Նահապետեան, 2- Պարուելի Ա. Շիրաճեան, 3- Թորոս Մահիկեան, 4- Մելքոն Նազարապետեան, 5- Մելքոն Պապիկեան, 6- Կոստան Վարժապետեան եւ 7- Կարապետ Նալչաճեան:

Ասոնք ճամբու ընթացքին հնարքով մը կը յաջողին իրենց մասին ոստիկաններու յանձնուած թողթը առնել- բանալ ու կարողալ, սակայն չեն կրնար բան մը իմանալ, որեւէ յանցանք չէր վերագրուած իրենց, այլ -Նիքմէթի Նեօքիմէթ փոլայըսըյա- պարտաւոր էին առ ժամանակ մը թողուլ քաղաքը եւ հեռանալ: Ասոնք կ'երթան Նալչա եւ ապա յընթացս փարագրութեան, ոմանք հոն կը մնան եւ ոմանք ալ կ'անցնին այլուր:

Յետ այսու կառավարութեան կողմէ կը ձեռնարկուի Մարաշի, Զէյթունի եւ շրջակայից զինաթափութեան, զինահաւար խումբեր՝ ոստիկան, զինուոր եւ սպաներ կ'իյնան զիւղերու վրայ եւ բռնի կերպով զէնք՝ մազկեր, մարթին եւ այլն կը պահանջեն: Այս առթիւ շար մը զիւղացի հայեր կը խոշտանգուին, բրածեձ կ'ըլլան այն սստիճան, որ անոնցմէ ոմանց ոտքերուն մաքները կը թափին, զիրենք դարմանելու համար կը բերեն Մարաշի գերմանական հիւանդանոցը:

Ժողովուրդին բարոյական եւ դիմադրական ուժը կոտորելէ յետոյ, կը սկսի Ուզնիոյ մասին խորհիլ, խոնարհեցնել ու հպարակեցնել: Այս ուղղութեամբ քայլեր կ'առնուին, սակայն քաղաքագետքէն, ըստ որում ամէն փեսակ քաղցր խօսքերով ու խոսքով կ'ուզեն համոզել եւ անանկ ցոյց փալ: Պարտուոյ վրայ խօսք փալ, որ առանց պայմանի եւ դիմադրութեան յանձնուելու պարագային իրենցմէ եւ ոչ մէկուն իսկ քիթը պիտի արիւնէր. ըլլալիքը լոկ Գեղի եւ բնակութեան փոփոխութիւն մը, ժամանակաւոր հեռացում մը պիտի ըլլար: Ահա այս խորամանկ ձեւերով Մարաշի Միութեարըժ Ալի Նայար փաշա՝ այդ ձեր աղուէտը, կը յաջողէր համոզել Զէյթունցիները եւ կը խնդրէր, որ լեռները յելուգակութիւն ընող կարգ մը անձերը՝ էշգըյաները յանձնէին: Կառավարիչին պակասը կը լրացնէին Նալչաի Գերմանական հիւպատոսը եւ արտակարգ զինուորական հրամանաւար Ֆախրի փաշան, որ Մարաշ նստած կը յոխորար:

Միւս կողմէ Զէյթունցիք ալ պառակարած էին, ոմանք յանձնուելու, հնազանդելու եւ ոմանք կռուելու, կողմնակից կ'ըլլան: Եւ որովհետեւ կաթողիկոսներէն ալ խելօք կենալու հրահանգ կը փրուէր. վերջապէս կ'որոշեն յանձնուիլ ու յանձնել. ըստ որում 70-75 հոգի, որոնց գլխաւորներն են.- առաջնորդ Յովհաննէս Վրդ. Գարանֆիլեան, Պապիկ փաշայի սերունդէն Նազարէթ Չավուշ, Չօլագեան Փանոս եւ Նաճի Թեօպէեան Խաչեր եւ այլն. կը բերուին Մարաշ ընդ հսկողութեամբ, 1914 Սեպտեմբերին: Ինչպէս նաեւ հարիւրաւոր զօրակոչիկներ բոլորն ալ կապուած:

Ասոնց Մարաշ մուտքի փեսարանը շար յուզիչ կ'ըլլայ. նկողներու կարաւանը երբ կը հասնի զօրանոցի մօտերը՝ ի հիւսիս,

հոս փեսակ փեսակ ծաղր ու անարգանքի նշառակ կը դառնան թուրք ամբոխին կողմէ, մասնաւորապէս՝ Նազարէթ Չավուշ Եէնիփիլինեայեան լուրանքի կենթարկուի, թուրքի եւ հայիոյանքներու եւ գորքիչ երբ բանփին մէջ այն ասփիճան կը ծեծեն քուրով, որ ամէն կողմը վերքեր կը բացուին եւ գոր դարմանելու պարտուակաւ վրան ալ թունախառն սպեղանի քսելով կը սպաննեն ու դիակը կը յանձնուի հայոց: Ահա ասանկ վախճան կ'ունենայ այն անձը, որուն անունէն կը դողային շարեր, ընդ որս եւ կառավարական պաշտօնեաներ:

Բանարկութենէ ժամանակ մը երբ, անոնցմէ առաջնորդ Յովհաննէս Վարդապետ, Չոլաքեան եւ Չաքրեան Փանոս աղաներ եւ Եէնիփիլինեայեան Նշան ազար կ'արձակուին, իսկ միւսները կը մնան բանար եւ ապա կախաղան կը հանուին:

Օրին մէկը սակայն, ազար արձակեալներ կրկին կը կանչուին կառավարութեան կողմէ: Յովհաննէս Վարդապետ կը յանձնուի եւ ձերբակալուած ու բանարկուած քսան դաշնակցականներու հետ, շղթայակապ ու հերիոտն Տէր-Զօր կ'աքորուի, հոն բոլորն ալ կը սպաննուին բանփին մէջ: Վարդապետին հետ էին Մարտիրոս Ժամկոչեան ուսուցիչ, Տաճար Յովնանեան գործիչ, Գրիգոր Մնչիրեան, Յարութիւն Եմէնիճեան, գուլպայագործ Զարեհ Թէնէքէճեան եւ այլք:

Զէյթունցի արձակուածներ չեն յանձնուիր, այլ լեռ կը բարձրանան ու կը կռուին, քիչ յետոյ ասոնց խումբը կը ստուարնայ նորերու յաւելումով եւ կը հասնի երեք փասնեակի: Կառավարութիւնը կը հետեւէր անոնց քայլերուն ու կը հետապնդէր: Ֆախրի փաշա Մարաշ նստած կը սպառնար աւերակ դարձնել Զէյթունը, եթէ չյանձնէին փախստականները*: Անոր անկարող ըլլալը կը յայտնուի, հետեւաբար յաւելեալ երեք հարիւր ձիաւոր զօրք կը դրկուի Զէյթուն, Միւլէյման անուն հազարապետի մը առաջնորդութեամբ: Մա կ'երթայ կը պաշարէ Ս. Աստուածածնայ վանքը՝ ուր մտած էին Էշգրյաները, անոնց գնդակին առաջին գոհը ինք՝ հազար

* Ասոնք եւ մանաւանդ մնացեալ ժողովուրդը յորդորելու համար որ հնազանդին կառավարութեան Մարաշէ կը դրկուին, Խորէն Վարդապետ Կապարեան, Մահակ քինյ, Տէր Պետրոսեան, պար. Ահարոն Շիրաճեան, Կ. Վարժապետեան եւ գերման Ներ Պլանք:

րապետը կ'ըլլայ, ճակտէն զարնուած գետին կը փռուի, անոր սպանումին ի յարգանս Զէյթունի անունը կը փոխուէր Միւլէյմանիլի: Նազարապետի սպանումէն ետք, թնդանօթներով միասին յարձակում մը կը սկսի ու մինչեւ իրիկուն կը շարունակուի, վանք ապաստանողները կը յուսային, թէ վարէն՝ քաղաքէն իրենց օգնական ուժ պիտի հասներ ու գործը փարբեր ընդհանուր ապստամբութեան գոյն առնէր, սակայն երբ կը փեսնեն, որ եկող չկայ, իրենք ալ գիշերուայ մթութենէն օգտուելով կը թողուն, կը հեռանան ու լեռանց ամուր փեղերը կը թաքնուին: Քաղաքը անխըլիր կը մնար: Սոյն դէպքը կը պարտաւորէ 1915-ի Մարտի կիսուն: Վանքի կամարներէն քանի մը հարը կը փլցուի թնդանօթի ռումբերէն ու յաջորդ օրը կրակի կը փրուի:

Զէյթունի եւ յարակից գիւղերուն պարպումը կը սկսի 1915-ի Ապրիլի 18-ին. նախ երիտասարդ զօրակոչիկները կը բերեն, բոլորն ալ չուանով իրար կապած, կը դրկեն անձանօթ ուղղութեամբ. ապա մեծերէն սկսելով մինչեւ գետին ձերուկն ու զառամը, կաղն ու կոյրը, գորս կը բերէին Մարաշ ու մէկ երկու օր սա կամ նա պանդոկի մէջ արգելափակելէ յետոյ, նորերու ժամանումին հետ հիւները կ'ուղարկէին Գոնիայի Մուլթանիէ գաւառակը, ուրկէ կը փոխադրուին Ուրֆայի վրայօք Բասիլ Այն կամ Տէր Զօր:

Ահա ասանկ կը պարպուի ու կը պարպուի Զէյթունն ու իր շրջանակի հայութիւնը, մօտ 50 հազար անձեր, որոնց բազմութեան եւ հարստութեան, ընտանի անասնոց ցեղի ազնութեան վրայ, ապշութեամբ կը նայէին թուրքերը եւ նոյնպէս չէին վարաներ ու ծածկեր առ այս իրենց զարմանքն ու սքանչացումը յայտնելու, մասնաւորաբար՝ ուշադրութիւն կը գրաւէր կապանի ընտանի անասունները, կով, եգ, գոմէշ եւ այլն. որոնք կրնային մրցիլ Նոլանփականներու հետ:

Մեծ եռուզեռ մը կար քաղաքին մէջ, ամէն կողմ առուծախ ամէն փեսակէ առարկաներու, որոնք աննշան գիներով հազիւ կը վաճառուին:

Այս օրերուն նաեւ կը պարտաւորէր բնական աղէր մը: Մարախն էր, որ ահագին երամներով խուժեր էր քաղաքի եւ շրջակայ պարփելգ եւ այգիներու վրայ ու հասցուցեր մեծամեծ վնասներ, կրծելով

ու չորցնելով կանաչեղէն, ծառ, բոյս, խոտ ու ցանք: Կառավարութիւնը վնասին առաջըր առնելու եւ կամ քիչ մը մեղմացնելու համար կը պարտաւորեցնէր ժողովուրդը, անձ գլուխ որոշ չափով սպաննել անոնցմէ եւ կամ բերել ու յանձնել մասնաւոր պաշտօնեաներու, որոնք կիրէ փոս եւ հորերու մէջ կը խեղդէին բերուածները: Թուրքեր մարգարեաբար կ'ըսէին - կեավուրլար կիփիյօր գըսմէթլէրի փէ պէրապէր- այսինքն՝ քրիստոնեաները կ'երթան իրենց բաժինն ալ իրենց հետ կ'երթայ:

Թուրք կառավարութիւնը Զէյթունցիներու կողմէ ցոյց փրկուած հաւատարմութեան եւ կամ ծառայութեան փոխարէն, յերազաները Մարաշի մէջ կը թողուր. իբրեւ թէ ասոնք հոս պիտի մնային գերծ փարագրութենէ, սակայն քանի մը ամիսներ յետոյ զանոնք ալ նախորդներուն եփեւէն կը հասցնէ: Ահա արոնք: Մէրկէնեան Աստուածաբար, Զէլվանսեան Աստուածաբար, Ասմընեան Հայկ Սուրէնեան Աստուածաբար, Մանուկ եւ Յարութիւն եւ Սալաթեան Հաճի:

Մարաշցիին դեռ իր փեղը կը մնար եւ ի փես եկող անցնող կարաւաններու սիրտը կը փրոփէր եւ օրէ օր, ժամէ ժամ, կը սպասէր իր հերթին, սակայն գիպցաւ ճանչնալ ու կապարել իր եղբայրական ու մարդասիրական պարտականութիւնը, խեղճերու ու կարօտեալներու հանդէպ եւ բացի անհարական եւ մասնակի օգնութիւններէ, կազմակերպեց նպաստահաւաք մարմին մը, ընդ հսկողութեամբ ազգ. առաջնորդարանի եւ ղեկավարութեամբ եւ մարակարարութեամբ Մարտիրոս Գոմուրեանի, հայթայթելով ուրնաման, հագուստ, նպարեղէն եւ այլն: Ս. Զառասուն Մանուկ Եկեղեցւոյ բակը փեսակ մը մթերանոց եւ արհեստանոցի վերածուած էր: Հայոցս համար փեսարանը յուզիչ եւ սրբաճմլիկ էր, իսկ ուրախառիթ եւ սփոփարար թուրքերուն, որոնք փաստօրէն իրականացած կը փեսնէին իրենց դարաւոր երազը: Զէյթունի եւ իր ամբողջ շրջանակին հայերէ պարպումը, ամայանալը, այն Զէյթունին, որ Դամոկլեան սուրի նման կախուած կը մնար իրենց գլխուն վերեւ ու ախ վախ քաշել կու փար: Ան չկար այլեւս:



Տ.ՆԱՀԱՊԵՏ Ա. ՔՀՆՅ. Տ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Առաջն. Տեղապահ 1883-87

Կարգը կու գար կամ եկած էր Մարաշին եւ ասոր անմիջական ենթակայ քանի մը գիւղերուն: Թէեւ օրուան կառավարիչը Իսմաիլ Քէմալ պէյ* Մարաշի եւ գիւղերու ժողովուրդը խնայելու խաբեպարիր ու երեւակայական խոստումներ կ'ընէր, ով գիտէ գուցէ իրական ալ լինէին, սակայն յանկարծական եւ անակնկալ դէպք մը վերիվայր շրջեց ամէն ծրագիր: Ս. Աստուածաճնայ վանքէն փախչողներ, Զէյթունի եւ շրջականերուն պարպումէն յետոյ, կ'երթան ու կը մտնեն Մարաշի հարաւ- Արեւմտեան կողմը գտնուող Փընպըճագ անուն 3 հարիւր փնուորնոց զուր հայ գիւղը, ուր կարգ մը ակնյայտնի եւ ուշադրութիւն գրաւող արարքներու մէջ կը գտնուին: Կառավարութիւնը անոնց ներկայութիւնը կը կռահէ, նախ կը կանչուի գիւղապետ Մինաս Աղան՝ հսկայ, քաջ եւ ճշմարիտ հայ մարդ մը, որուն կը թելադրուի համոզել կամ յանձնել ներսի ապաստան:

* Ասոր եւ յաջորդը Աթա Պէլի համար լաւ վկայութիւն փոփոխութիւններ չեն պակսիր:

տանտանները, անոնք կը մերժեն անձնատուր ըլլալ, ապա հոգեւորական եւ աշխարհական բաղկացեալ մասնաւոր պատուիրակութիւն մը կը դրկուի հետեւեալներէ՝ Տ.Սահակ քինյ. Տ. Պեպրոսեան, Տ. Արսէն Յովհաննէսեան եւ Պապ. Աբրահամ: Ասոնց կ'ընկերանան նաեւ Արամայի կուսակալը, հրամանատար Ալի պէյ եւ երկու սպայ բանակէն, հայ կաթողիկոսներ չեն մասնակցած պատուիրակութեան առարկելով, որ այդ կողմերը պապականներ չկան: Ասոնք ալ չեն յաջողիր եւ ձեռնունայն կը վերադառնան, գիւղացիք երկու սուրի մէջ կը մնան. կառավարութեան խոստումներուն հաւարալ ու յանձնել ներելի չէր, մանաւանդ, որ ապաստանելաք բնաւ համամիտ չէին, քանզի օրինակը իրենց աչքերուն առջեւ էր եւ թարմ, այն հինգ մարաշցի ոստիկան հայ զինուորները, որոնք իրենց հետ լեռ ելած էին ու ընկերակցած իրենց, ապա խորհելով իրենց Մարաշ գրնուող ընտանեկան պարագայից անստուգութեան եւ փրուած սպառնալիք ու խոստումներու վրայ, վերադարձած ու յանձնուած էին կառավարութեան, անոնք բոլորն ալ կախաղան հանուած էին խոստումնապահ կառավարութեան կողմէ: Ասիկա իրենք գիտէին, լսած էին, ըստ որում ամէն առաջարկ կը մերժեն եւ բացարձակապէս կը մերժեն անձնատուր ըլլալ եւ իրաւունք ալ չունէին միթէ, ուստի ընդհարումը անխուսափելի կը դառնար:

Սոյն երկար բարակ բանակցութիւնները կառավարութեան կողմէ, ժամանակ շահելու կերպ մը, ձեւ բանի մըն էր. որ արդէն հաւանական ընդհարումի եւ կամ ապստամբութեան մը պարագային պատրաստ գրնուելու համար, Արամայէն զօրք ապահոված էր: Բանակը կը հասներ ու դիրք կը գրաւէր գիւղին դիմաց: Ներսիսները փակաւ ստուարացած էին մօտիկ Քիշիֆլի եւ Տէրէթէօյ, գիւղերու հայ բնակիչներու յաւելումով, անանկ որ 5-6 հարիւր կռուողներ կ'ունենային:

Կառավարութիւնը փեսնելով, որ սպասուած անձնաբերութիւնը փեղի չպիտի ունենար, հրաման կու փայ կրակ բանալ գիւղին վրայ, ներսիսները կը դիմադրեն, սակայն օր մը՝ փասներկու ժամ չկրնալով փոկալ ու դիմակալել անհաւասար ու կանոնաւոր ուժի առաջ, կը պարտուին: Թնդանօթն ու հրդեհը իրենց ազդեցու-

թիւնը կ'ունենային մեծ աւերներ գործելով եւ պաշարուած երկսեռ ու խառնիճաղանճ բազմութիւնը յուսալքելով: Զինուոր եւ խուժան կը յարձակին գիւղին վրայ, կը պարզուի ողորմելի երեւոյթ մը. կողոպուտ, ջարդ, մահ: Ողջ մնացող հայ ժողովուրդը վարը, բաց դաշտին մէջ կը հաւաքեն, հոս կը կազմուի զինուորական արտակարգ արեան մը, կռուողներէն 60 անձեր, անմիջապէս եւ փեղույն վրայ հրացանի կը բռնուին, նոյնչափ մըն ալ Մարաշ կը բերուին իբրեւ մասնակից դիմադրութեան ու կռուին, ապա հայ գերեզմանատան եւ զօրանոցի մօտերը կը գնդակահարուին: Նոյնպէս կը բերուին 100-ի մօտ վիրաւոր կիներ, զորս ժամանակ մը կեղոնական վարժարանի մօտիկ շէնքի մը մէջ դարմանելով, կրկին կը փարագրեն փեղացիներուն խառնելով: Իսկ մնացեալը առանց քաղաք մտնելու ուղղակի գիւղին քովէն կը դրկուին աքսոր:

Ահա ասանկ կ'իյնար հերոսն Փընքըճագը: Թուրքերու կռուտին պաշտօնական թիւը կ'ըլլար 12 սպանեալ նոյն չափ ալ վիրաւոր կը բերուէր Մարաշ, մինչդեռ իրականին մէջ հարիւրաւորներ էին անոնք: Ոչ սակաւ թիւ մը կը կազմէր հայոց վնասն ալ: Բանակ եւ խուժան թմբուկ եւ փողերով կը մտնեն քաղաք, խիստ մեծ յուզում եւ յուսալքում պատճառելով քրիստոնէից, այս դէպքին մէկ օրով կը յաջորդէր Մարաշի հայոց փարագրութիւնը:

1915 Օգոստոս 6, Ուրբաթ օր, երիւնքի պահուն հոգեւոր պետեր՝ Արփիարեան Աւերիս Գերապայժառ, Տ. Պեպրոսեան Տ. Սահակ քինյ., Վեր. Աբրահամ եւ քանի մը երեւելի ազգայիններ կը կանչուին կառավարչատուն, ուր հաւաքուած էին քաղաքային եւ զինուորական պաշտօնեաներ: Անոնք ներկաներուն կը հաղորդեն ժողովուրդին - հայոց - յաջորդ առփու իսկ ճամբայ ելլելու անդառնալի հրամանը, բացառելով կաթողիկոսները, մինչ հայեր եւ բողոքականներ պարտ էին մեկնիլ անմիջապէս, քիչ ետքը մնալու նոյն հրամանը կը հաղորդուէր նաեւ բողոքականաց, սակայն ասոնք բոլորն ալ խաղեր եւ սաքանութիւններ էին, քանզի իրարու ետեւ առանց զանազանելու բոլորն ալ փարագրեցին, ինչպէս պիտի փեսնենք:

1915 Յուլիս 25- 7 Օգոստոսն է, շաբաթ օրը. նախորդ իրիկուրէն լուրը արդէն ամէն շրջանակի մէջ փարածուած էր, թէ քրիս-

փոնեայք պէտք էին վաղուան համար պապրասպուիլ, սա պայմանաւ, որ նախ ամուրիներ- երիպասարդներ փան մը մէջ նեցուկ մնալով, միւս այրերը պարտ էին մեկնիլ եւ ետքն ալ ընփանիքի փրկերը. սակայն շարեր չուզելով բաժնուիլ իրենց սիրելիներէն եւ փան անդամներէն, միասին ճամբայ կ'ելլեն՝ գրեթէ յանպար- րասպից եւ խումն բազմութեամբ. անանկ որ ճամբու երկայնք ու դաշտ կը ծածկուին ամբոխով մը: Անոնց ի փես կը զարմանար կա- ռավարութիւնը եւ Արանայէ եկող զինուորներու հրամանաւարը, ճամբուն վրայ նստած բաւական մը շալակաւորներ ետ կը դարձը- նէր, կամաց կամաց ու ետքէն գացէք ըսելով. քանզի զսա անանկ համոզած էին փեղական թուրքեր, որ Մարաշցիներն ալ պիտի ապստամբէին ու դէմ դնէին. իսկ այժմ սոյն գաղափարը կը ջրուէր:

Եւ այսպէս, օր օրի վրայ, թաղ թաղ եւ կամ ընփանեօք ցան- կեր կը պապրասպուէին ու կը հաղորդուէին փրկերուն պապրասպ ըլլալ որոշեալ օրը մեկնելու համար: Կառավարութիւնը ոմանց կը փրամադրէր փարապարիակ բռնուած փոխադրութեան միջոց- ներ, գրաստ, էջ եւ այլն, որոնք սակայն ճամբու ընթացքին զիշե- րանց փախուստ կու փային, յաճախ բեռով միասին ու անդարձ:

Ասանկ օրեր ու շաբաթներ կ'անցնէին, քաղաքին քրիս- փոնեայ բնակչութիւնը կը ցանցառնար, զամ քան զգամ, օր մ'ալ հրաման կ'ելլէր, թէ բողոքականք չպիտի երթան եւ յիրաւի ոմանք ճամբէն եւ ոմանք ալ մինչեւ իսկ Այնթապէն կը վերադարձուին, բայց ոչ շաբ ետք, կրկին անգամ կը դրկուէին:

Կառավարութիւնը լքեալ գոյգերու եւ կալուածներու արձա- նագրութեան համար մասնաւոր յանձնախումբ մը կազմած էր, որ թէ գացողներու փուններուն մէջ մնացած կահ կարասիները կ'ար- ձանագրէր եւ թէ գիւղերէ բերուած կամ քաղաք մնացածները, ինչպէս նաեւ անշարժ կալուածները, օրին մէկը բոլորն ալ իւրացը- նելու եւ կողոպտելու համար անփարակոյս: Ոմանք ալ օտարներու՝ այն է ամերիկացիներու եւ գերմաններու կը յանձնէին իրենց ապ- րանքներէն մաս մը:

Այսպէս կը շարունակուի գաղթը 3-4 ամիս, ապա արեւն մը, իննը ամիս դադար փրուելէ վերջ, կրկին անգամ մնացեալներէն մաս մը կ'աքսորուի, որ կը զուգադիպէր Այրան- Ինթիլի փապու-

դիին եւ շրջակայից մէջ աշխատող հայ գործաւորներու փարագ- րութեան. այսու հանդերձ քաղաքը բոլորովին չի պարպուիլ եւ րաւական թիւով հայեր՝ մօտ 3 հազար անձ կը մնային, ընդ որս կը մնար նաեւ իբր հոգետր հովիւ Տ. Խաչատուր Ծ. Վրդ. Տ. Ղազար- եան, ան Զէյթունի վանուց եւ եկեղեցեաց անօթ եւ կահկարասին ըրած կը նստէր Ս. Սրբեփաննոս եկեղեցոյ մէջ:

Մարաշի պապերագմական արեանը պարասպ չէր կենար, կը գործէր, ան մէկ կողմէ կը փարագրէր, միւս կողմէ կը կախէր եւ այսպէս քաղաքին փարբեր կէտերուն վրայ Գանլը Զէօփրիլի, Գանլը Տէրէի եւ Ռէժիի մօտ փասնեակ եւ հինգ փասնեակ խում- բերով կախաղան կը հանէր երեք հարիւրի չափ բանարկեալները ու կը պարպէր բանարը:

Սոյն բոլոր սպաննուածները խոստովանութիւն ստացած են Տ. Յակոբ քինյ. Ալանեանէ, Շիվիլի գիւղի Տ. Մանուէլէ եւ Խաչա- փուր վարդապետէ:

Ի փես սոյն կախաղաններուն, հայ ժողովուրդը կը սահմռկի եւ շարեր առանց կարգի սպասելու ինքնաբերաբար կը մեկնին, առանց գիտնալու, թէ ինչ դժբախտութիւն կը սպասէր իրենց քիչ անդին կամ երթալիք փեղին մէջ: Մնացածը ծանօթ է արդէն:

1915-18 պապերագմի փարիներ եղան, հայ ժողովուրդը, փարագրութեան եւ ջարդի դառն բաժակը ցմբուր քամեց, որուն նկարագրութիւնը դուրս է մեր կար եւ նպատակէն, իւրաքանչիւր վերապրող կենդանի վկայ եւ անգիր պատմութիւն մըն է ինքնին:

Ինչպէս փեսանք 1915-ին ընդհանուր եւ հայաջինջ փարագ- րութեան կը մասնակցէր մարաշցին ալ, որ սակայն մեծ մասամբ Սուրիոյ կողմերը գացած ըլլալուն, բաղդադամամբ հայաբնակ այլ գաւառներու, քիչ կորուստով դուրս կու գայ, գրեթէ առ հարիւր 35- 40 գոհ փալով եւ ողջ մնացողները շուրջ 26-27 հազար անձ կը վերադառնային 1918-1919-ին, սոյն թիւին մէջ կը գրնուին նաեւ շրջակայ գիւղերէն եւ այլ հայկական նահանգներէ մաս մը հայեր, շարերը այրիներ:

Տէր-Զօրի եւ Ռաս-Էլ-Այնի կողմ գացողները առանց բացա- րութեան ջարդուած կամ մեռած են:

Ընդհանուր պապերագմի փետողութեան միջոցին, Ամերիկ-

ևան Պօրպ Ընկերության միսիոնարներէն Մր. Լայմըն մեծ բարիք ըրած եւ ծառայութիւններ մաքուցած է Մարաշի հայերուն, ինչպէս նաև Մերձաւոր արեւելքի գոծիչ եւ հիւանդանոցի բժիշկ Տօթթ. Վիլսոն եւ այլք նիւթապէս եւ բարոյապէս նպաստած են:

1920-ի ֆրանքո-թուրք ընդհարումին մասին առանձին պիտի խօսինք գրքոյկիս Գ. մասին մէջ:

Բ. ՄԱՍ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ԴԻՐՔԸ

Քաղաքս փափարակ կամ հարթ գեպնի վրայ շինուած չէ, այլ 7-8 բլուրներու վրայ կը բարձրանայ, որոնց մէջտեղի ձորերէն կը վազեն առուակներ, բլրակներու գագաթներէն մինչեւ ձորերու մէջ շինուած փուները հեռուէն նայողին ամփիթափրոնի ձեւը կը յիշեցնեն: Ինչպէս որ նախապէս ըսած ենք, հին քաղաքը այժմեանին հարաւային արեւելեան կողմը, զարդիս Գարա Մարաշ կոչուած փեղն է եղած: Տիմակուան փեղը այն արեւն անփառ, աւագակներու եւ ոճրագործներու ապաստանարան էր: Ասոր կը վկայեն փեղերու անուններն իսկ: Յիշենք անոնցմէ, Գանլը Տէրէ (արիւնոփ կամ արեան ձոր), Չանդալ (կախաղանի փեղ), Պօղազ Քէսէն (գլխափման կամ կառափնափեղի) եւ այլն, ասոնց վրայ կրնանք նոր մը՝ ժամանակակից մըն ալ աւելցնել, Գանլը Քէօքրի (արեան կամուրջ), որ կը գտնուի Պօղազ Քէօյի շուկային եւ Ուլու Ճամիի միջեւ, որուն վրայ 150-է աւելի անմեղ հայեր կախաղան բարձրացուեցան 1914-ին, անկախ Ղայաստան կազմելու դիտարութեամբ ամբաստանուելով:

Քաղաքին հարաւային կողմը, արեւելքէն արեւմուտք կը փարածուի դաշտ մը 30 քմ. երկայն, եւ 10-15 քմ. լայն. որուն հարաւ արեւմտեան կողմը գտնուող լեռներու կող եւ ստորոտները ծածկուած են մեծ մասամբ հայ եւ սակաւ թուրք գիւղերով, ասոնցմէ կ'արժէ յիշել Ֆընփըճագը, որ միւսներէ ոմանց հետ միանալով, անսաստեց փեղահանութեան հրամանին ու չզնաց: Կառավարութիւնը բանակ հանեց լեռնային թնդանօթներով եւ խաժամուժ ամբողջով ու ռմբակոծեց զայն, փեղի ունեցաւ ընդհարումը, ան թէև երկար չտեսց եւ գիւղացիք պարտուեցան, սակայն միշտ ալ բարոյական յաղթանակը մնաց իրենց կողմը, ժառանգելով քաջի անմահ անունը:

ԿԼԻՄԱՆ

Մարաշի օդը բարեխառն է, ո՛չ ամառը սաստիկ ջերմ է ոչ ձմեռը խիստ ցուրտ կ'ընէ, բացառիկ ձմեռներ եւ եղանակներ կը պատահին անշուշտ եւ ամէն փեղ, սովորաբար ամէն փարի կը ձիւնէ, յաճախ Ս. Յակոբ Մծբնայ հայրապետի փօնի եօթնեակէն սկսած, որուն փեղացիք «Ս. Յակոբ մօրուքը սանտրեց» կ'ըսեն:

Երբեմն ամառներ խորշականման քամի մը մեծապէս կը վնասէ կանաչեղէններուն:

Ածուխ, փայր, կամ վառելանիւթ առաք է, շնորհիւ շրջակայ անտառներուն, որոնք օրէ օր քաղաքէն հեռանալու եւ նուազելու վրայ էին, կը կտրէին, սակայն նորեր հասցնելու հոգ չէր փարուեր:

Մօտաւորապէս յիսուն փարի է, մանաւանդ քառորդ դարէ մը ասդին, փեղացիք գրեթէ սիրահար եղած էին ամառ ապեն շրջակաները օդափոխութեան ելլել, այգի եւ մրգապարտէզներու մէջ, որոնց մշակումին եւ զարգացումին մեծ զարկ եւ ուժ փրուած էր, ի մասնաւորի Քրիստոսէից - Նայոց կողմէ, որովհետեւ ամէն կողմ զուլայ եւ սառնորակ ջուրեր առաքօրէն կը գրնուին:

ՋՈՒՐԸ

Մարաշի հիւսիսային դին, Ախըր փաղի սփորոտը բլուրի մը երկու կողերէն կը բխին ականակիւր աղբիւրներ, գոր փեղացիք, «Գըրզ Կէօզ» (քառասուն ակեր) կը կոչեն: Մոյն ջուրերը լիովի կը գոհացնեն քաղաքին պէրքերը եւ կը դարձնեն շաք մը ջրաղացներ, կ'ոռոգեն արտ ու մրգաստաններ ու կը ջրեն պարտէզ ու բանջարանոցները եւ որոնք միեւնոյն ապեն ժողովուրդին զբօսավայրերն են զարնան ու ամրան եղանակի փաքուկ օրերուն: Տեղւոյն դիրքը, օդը, մանաւանդ ջուրը հրապուրիչ եւ սքանչելի են, հոն այցելող մը ամէն դիէ կը լսէ ջուրերու խոխոջը, փերեւներու սօսափիւնը, քաղցրաձայն թռչնոց զմայլելի երգերը, որոնք դաշն ու քաղցրահնչիւն եղանակներ կը յօրինեն եւ կանաչ մարգերու վերայ ընկողմանած զբօսասէրը լիովի կ'ըմբռնի փեղւոյն վայելքը:

Մոյն ջուրերը փոշի եւ այլ աղտերէ գերծ եւ մաքուր պահելու համար 1904-ին, օրուան կառավարիչ Նիւսնի փաշայի ջանից շնորհիւ, մասնաւոր ագուզներու մէջ առնուած է, որ մեծապէս նպաստած է նաեւ զով մնալուն:

ԳԵՏԵՐԸ

Արեւմտեան կողմը, քաղաքէն մէկուկէս ժամ հեռու հիւսիսէն իջնելով, գոռալով կը հոսի անհանդարտ ու պղպորն ճիւղան (Պիւռամիս) գետը, իսկ Ագսու եւ Էրթէնէզ արեւելքէն արեւմուտք ընթանալով Գառնիի (Նարունիյէ կամ Խառնը) մօտերը կը միանան ճիւղանին: Վերջին երկուքը մանաւանդ մեծապէս կ'օգտագործուին բնակչութեան կողմէ, ցորենի մշակութեան, ձմերուկի, սեխի, վարունգի եւ այլ նմաններու ոռոգման համար:

ԲԵՐՔԵՐԸ

Գերմանիկի գլխաւոր բերք կամ արտադրութիւնը կը կազմեն, բրինձ, ցորեն, գարի, գահրի(ճէիրի), փորոն, փախտակ, մարդակ եւ այլ նման արտադրանք, ինչպէս նաեւ ընկոյզ, սեկ, ձիւ կազմած, ալաճա եւ այլն: Առիթ ունեցանք յիշելու, որ վերջին քանի մը փարիներու ընթացքին զգալի կերպով առաջ գացած էր այգեգործութիւնը, բացի իր արտադրութենէն սիրելի եղած էր օդափոխութեան համար եւ իբր հովոց: Գրեթէ ամէն փուն, քրիստոսէայ եւ թուրք, ունէր իր այգին եւ ամբողջ ամառը ինչպէս նաեւ աշնան առաջին ու երկրորդ ամիսները, մրգապարտէզներու, (ծիրան, կեռաս, բալ եւ այլն) եւ այգիներու մէջ կ'անցընէր: Այգեկութիւնը աշխատութեան մեծ մասը իգական սեռը կը կատարէր, ան էր, որ կը քաղէր ընկոյզ, որմէ կը պարաստուէր այլ եւ այլ ձեւերով կրշիկներ (սուճուխ), խաղողի քաղցուն կը շինուէր նաեւ փեսակ փեսակ անուշեղէն. ինչպէս բանդակ(ռէչէլ) պաստեղ, փեստիլ, սամսա ռուփի եւ կամ մաթ եւ այլն:

Ունի քարի հարուստ հանքեր, փեսնուած են նոյնպէս կապարի եւ արծաթի բովեր, որոնք սակայն չեն շահագործուած. մեկնաշնորհ չէ փրուած. միայն Ուլնեցիք բաւական նպաստաւորուած են երկաթի հանքէն, զայն հանելով կը գործածէին թէ իրենց փեղական պէրքերուն եւ թէ կ'արտածէին մօտիկ գիւղաքաղաք կամ քաղաքները եւ ասոնք շնորհիւ ժամանակին Պոլսոյ կամ միացեալ ընկերութեան կողմէ դրկուած բնագէտ ուսուցիչներու, որոնք Զէյթուն գալով վարժեցուցած են զիրենք այդ բանին, իբր ապրուստի միջոց: Նանուած երկաթը յարգի էր եւ կը փնտրուէր, ծանօթ՝ «Զէյթուն փեմիրի» անունով, որմէ լաւ փեսակէ հրացան եւ մարթին

կը շինէին Զէյթունցիք: Կը լսենք թէ այժմ գերման գաղթականներ փեղաւորուած ըլլան այդ կողմերը:

ԱՐՏԵՍՏՆԵՐԸ

Արհեստներուն մեծ մասը ինչպէս՝ ալաճաճիութիւն (փեսակ մը խսարուփիկ կերպաս, գծաւոր կամ ծաղկեայ), ոսկերչութիւն, դերձակութիւն, կօշկակարութիւն, պղնձագործութիւն, կլայեկութիւն, հիւսնութիւն, երենագործութիւն, ջաղացպանութիւն եւ այլն. մեծ մասամբ հայոց սեփականութիւնն էր, նաեւ մեծ ու փոքրաբանակ վաճառականութիւն եւ բժշկութիւն, խաղախորդութիւնը, երկաթագործութիւնը եւ սառածութիւնը, թուրքերու մեկնաշնորհն էր եղած: Խառն էին նպարավաճառներ եւ մանրավաճառներ (աթթար) եւ այլ նման փեսակէ զբաղումներ: Երկրագործութիւնն ալ երկու երրորդով թուրքերու կը պատկանէր գրեթէ:

ԳԻՒՂԵՐԸ

Մարաշի սանճագը ունէր բազմաթիւ թուրք եւ քանի մըն ալ հայ գիւղեր. Զէյթուն եւ շրջանակը դուրս է ասկէ, որոնց հոգեւոր հովուութիւնը կը կատարուէր ծխափէր քահանաներու ձեռքով եւ Ազգ. Առաջնորդարանի միջոցաւ, ամէն գիւղ ունէր իր սեփական եկեղեցին, սոյն գիւղերը եղած են,

1-Ֆընպըճագ, 2-Քիշիֆի, 3-Տէրէ Բէօյ, 4-Ճամուսթըլ: Ասոնցմէ առաջինը ամենամեծն էր, ունէր մօտաւորապէս երեք հարիւր փուն զուպ հայ բնակչութեամբ, անոնց մէկ աննշան մասը բողոքականներ էին:

ԲԵՐՂԵՐԸ

Բացի քաղաքի կեդրոնիներէն, ի հնումն մօտերը գտնուած են հեքլեւալներն ալ:

Ընկուզեկ Բերդ. դէպի արեւելք, քաղաքէն չորս ժամուան չափ հեռու, բարձր լեռներու մէջ, սքանչելի օդ եւ ջուրով փեղ մը, որուն իբր առաջնորդ յիշուած կը գտնենք Տ. Միխնթար մը (Միսուան.) գիւղը, որ զարդիս Գէօզլու- փերէ կը կոչուի, փակաւին կան սակայն բնակիչներ անոնք կրօնափոխ-իսլամ եղած են եւ բերդը կործանած:

Ճանճիկ Բերդ. հիւսիսային արեւելեան կողմը, հազիւ ժամուան մը հեռաւորութեան վրայ. ցարդ կը նշմարուին աւերակները:

Ընդդը կը գտնուի բարձր եւ լայնանիստ ժայռաբլուրի մը գագաթը, իր անունը փուած է նաեւ շուրջին, ուր կան շաք մը այգիներ, ձիթասփան: Պեղումներու արեւն երեւան ելած են հին դրամներ, գարդեր եւ այլն: Նոյնանուն բերդ մըն ալ Կապանի մօտերը եղած է: Տէրերէն յիշուած կը գտնենք Կոստանդին իշխան մը, որ Լեւոն թագաւորի թագադրութեան հանդէսին ներկայ գտնուող իշխաններէն մէկը եղած ըլլալ կը կարծուի: (Միսուան.)

ՎԱՆՔԵՐԸ

Մարաշի շրջանակի մէջ, մասնաւորաբար Սեւ լերան (Ամանոս) վրայ նշանաւոր եղած են. 1- Արեգի, 2- Բարսեղեանց, կամ Անապատ, 3- Ս. Գէորգ, 4-Ընկուզուպ, Շուղրի վանքերը, որոնք 12 եւ 13-րդ դարերուն նշանաւոր ուսումնավայրեր եղած են:

Ս. Յակոբ անուն վանք մըն ալ ծերերու յիշողութեան մէջ արձագանգ կը գտնէր, քաղաքիս արեւմտեան կողմը գտնուող Նայրթաղի բլուրին վրայ. վանքը շուրջ 1750-ին կործանած է թուրք մոլեռանդ բղեշխի մը եւ խուժանին կողմէ, վանականներէն ոմանք վախած եւ ոմանք սպաննուած են: Տեղիս մօտերը կը գտնուի հայ գերեզմանատունը, ուր մինչեւ վերջին օրերը կը ցուցնէին վանքիս միաբաններէն Շերուն անուն վրդ.-ի գերեզմանը, նահապակուած ինն եւ քաղաքացիք ինն փանելով կը լուսային երկար արեւնէ ի վեր հիւսնողութենէ փառապող կամ փխեղծ մանուկները, որոնք յետ յուսացման կ'առողջանային եւ կամ կը մեռնէին:

Վանքին մօտիկ եւ ստորոտի թաղը ցայսօր կը կոչուի «Թէ-Բէ: մահալլէի»- վանքի թաղ, կամ Զիմմեան:

ՈՒՆՏԱՎԱՅՐԵՐԸ

Ս. Թաղէոս Առաքեալի ուխտավայրը, որ կը գտնուի Մարաշի հիւսիսային կողմը, նախապէս յիշուած քառասուն ակերու բխած լրտրին գագաթը, ասոր մասին ժողովրդական աւանդութիւնն է, թէ Ս. Թաղէոս առաքեալ իր դէպի Նայասփան ուղեւորութեան պահուն քաղաքս ալ հանդիպած, քարոզած եւ բժշկութիւններ կատարած է. ցորեկը քաղաքին մէջ, իսկ գիշերներն ալ հոս կ'անցընէ կղեր, փեղական բարբառով Ս. Թաքսառաքով կը կոչուի: «Թաղէոս Ռարթողիմէոս առաքեալ եկեալ յաշխարհն Գերմանիկեցոց քառովեաց նոցա գ-Քրիստոս... եկն յերկիրն Նայոց ի Գողթն գաւառ...»

(Տաշևան ցուցակ թիւ 7):

Վարդավառի փօնը իր ուխտագնացութեան օրն է, կէս գիշերը սկսեալ մինչեւ առփու ժողովուրդը մեծ ու պզտիկ, հարս թէ փեսայ այր թէ կին, խումն բազմութեամբ մը կը բարձրանային լեռը, ուր կը կարարուէր բացօթեայ ժամերգութիւն եւ Ս. Պատարագ ասպողագարդ եւ ասմագուն երկինքի փակ:

Օրուան փօնի յիշարակը, Ս. Լեռը, գիշերուան խորհրդաւորութիւնը, փիրացուներու ներդաշնակ երգերու հնչիւնները, մարդուս հոգին յիրաւի դէպի աւելի բարձր՝ դէպի երկինք կը վերացրնեն, հոգեխառն գմայլանք եւ խորհրդաւոր յափշտակութեամբ մը: Ուխտատրներու կողմէ կը մորթուէին մաքաղներ ու կ'ըլլային դրամական եւ այլ նուէրներ:

Բորոպներու Աղբիւրը. քաղաքին հարաւ արեւելեան կողմը, կան գուլպ ջուրի ակեր, որոնցմէ մէկը գմբէթով եւ միւսը կամարով մը ծածկուած է, ջերմ եւ այլ վերքի նման մորթային հիւանդութիւններ ունեցողներ եւ խիստաժերներ հոն կ'երթան կը լոգնան, բժշկութիւններ ի հնումն եւ ի նորումն շար կարարուած են: Տեղուոյս համար ալ կը պարմուի, որ Ս. Թաղէս հոս կը մկրտէ եղեր նորադարձ քրիստոնեաները եւ կը բուժէ բորոպները, իբր նոր իմն Պրոպպարիկէ կամ Սելովամ:

Ս. Թորոս. ուխտավայրս կը գտնուի դէպի արեւելեան հիւսիս, Ս. Յակոբ վանքէն քսան վայրկեան մը հեռու բլուրի վրայ: Տօնի օրն է, մեծ պահոց երկրորդ շաբթուան Կիրակին, յորում կ'ընդունի շար այցելու եւ ուխտատրներ, որոնք քուրջերով կամ լաթի կտորներով կը ծածկեն հոնաւորի մեծ ծառը, իրենց հիւանդութիւնը կը կապեն, կը փոխանցեն ծառին կամ հովին կու փան, ինչպէս կ'ըսէին մամիկները:

Ս. Կարաբինէ. անուն աղբիւր մըն ալ կը գտնուի Թաքառաբոլ բլուրին արեւմտեան կողին վրայ, հոս ալ շարեր, մասնատրապէս փենդէ (սըթմա) փառապողները կը լուացուէին առողջութիւն գտնելու յոյսով:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Նայ ազգային, առաքելական եկեղեցւոյ ժողովուրդը ուներ քաղաքին մէջ վեց եկեղեցիներ, որոնց մէջ ամենէն բազմամարդ

Մայր Եկեղեցին էր Ս. Քառասուն մանուկը, հոս էր նաեւ Ազգ. Առաջնորդարանը: Ընդհանուր պատերազմի (1914)-ի նախօրեակին ուներ երեք քահանայ, Արժ. Տ. Ղեւոնդ Աւագ քինյ.Տ. Նահապետեան,Տ. Վարդան Ա. քահանայ Տ. Մինասեան եւ Նմայեակ Վարժապետեան:

2. Ս. Սրեփանոս, Կրիկիոյ հանգուցեալ Մկրտիչ Ս. Կաթողիկոսը Մարաշ այցելած պահուն, ընդհանրապէս հոս կ'իջեանէր կառավարութեան աւելի մօտիկ ըլլալուն: Ուներ երկու քահանայ, Տ. Սահակ Տ. Պետրոսեան եւ Տ. Յակոբ Ասլանեան: Եկեղեցին Երկրորդն էր հաւաքացեալներու բազմամարդութեան կողմէ:

3. Ս. Սարգիս. Գմբէթի թաղին մէջ, դէպի արեւելք կը բաղկանար երկու բաժիններէ մէկը ձմեռնային, միւսը ամառնային: Ուներ մէկ քահանայ Տ. Մովսէս Տ. Յովհաննէսեան: Նին կամ ձմեռան եկեղեցին ցած էր եւ մութ, քանզի շինութեան արքեն թուրքեր արգելք եղած են բարձրացուելուն, ասոնցմէ պարագուիսը գիշեր ժամանակ մը կը պարժուի եկեղեցւոյ սուրբէն, որ իր ձիովը ոտնակոխ կ'ընէ զինք յերազի թէ յարթմնի, չգիտեմ, որուն հետեւանքով ինք ալ կ'օժանդակէ շինութեան եւ փարեկան որոշ գումար մը կը սահմանէ եկեղեցւոյն: Քահանայք Տ. Մովսէս Տ. Յովհաննէսեան եւ Տ. Գրիգոր Վարժապետեան:

Եկեղեցւոյ շինութեան եւ կոչնակին համար ՌՃՂ-ին 1190+551=1741, Սուլթան Մահմուտէ հրովարտակ սրացուած է. միւսներէն ալ ոմանք արքունագիր ունեցած են:

4. Ս. Գէորգ Շէքէր Տէրէ թաղին եւ ձորին մէջ 1890-ին հրոյ ճարակ եղած ըլլալով, 1908-ին առաջնորդ հանգ. Կորին վրդ. Եսախանի ջանից շնորհիւ ի հիմնանէ կառուցուած էր, 1920-ին կրկին այրուած է, ուներ մէկ երեք, Յարութիւն ժամկոչեան:

5. Ս. Աստուածածին, որ 1920-ին ընդհարումին հրկիզուած է իր մէջի 2000 երկսեռ բազմութեամբ եւ Տ. Յակոբ քինյ. Տալգրլըճեանով:

6. Ս. Կարապետ Ազ Տէրէ փողոցին մէջ կը գտնուէր, սա ալ հրկիզուած է, հովին էր Տ. Ներսէս քինյ. Շահինեան, որ փարագրութեան ընթացքին վախճանած է Սուրիոյ կողմերը:

Սոյն վեց եկեղեցիներէն զարդիս միայն Ս. Սրեփանոսն է

կանգուն մնացած, զոր փեղական կառավարությունը մթերանոց վերածած է:

Եկեղեցիներու շինութեան մասին եղած պարմական աւանդութիւններ:

Եթէ ուշադրութիւն դարձուի պիտի տեսնուի, որ Մարաշի եկեղեցիներուն բոլորն ալ քաղաքին չորս կողմը, այն է շուրջը եւ քաղաքէն դուրս շինուած են, թէւ ժամանակի հոլովմամբ եւ նորաւոր շէնքերու կառուցումով այժմ ներս ըլլալ կը կարծուի, առ այս կ'աւանդուի, թէ ասոնց շինութենէն քիչ առաջ հայեր եկեղեցի չունին եղեր, այդ նոյն օրերուն սաստիկ ժամապարտեմը մը փեղի կ'ունենայ սակայն հայերէ քիչ մեռնողներ կ'ըլլան եւ աս պարագան թուրքերու ուշադրութիւնը գրաւելով կ'երթան կը յայտնեն օրուան իշխանաւորին, ան հայոց հոգեւոր պետը իր մօտ հրաւիրելով կը պարուիրէ աղօթել Աստուծոյ, որ սոյն փորձանք պարիժը վերնայ քաղաքին վրայէն եւ երբ սա կ'առարկէ թէ եկեղեցի չունինք, որ աղօթք ընենք, նա կը հրամայէ, քաղաքին ոչ միայն չորս, այլ վեց կողմերը եկեղեցի շինեն, հետեւաբար կը կառուցուին անոնք քաղաքէն դուրս:

Ուրիշ աւանդութիւն մը կ'ըսէ թէ, երբ հայու թաղի Ս. Յակոբ վանքը կը փլցուի, մէջի ողջ մնացող վարդապետները չեն համարձակիր քաղաք իջնել կամ մտնել, այլ կ'ապաստանին եզերքի փուները եւ որոնք որոշ ժամանակ ետք եկեղեցիներու կը փոխարկուին:

Բողոքական հայեր ունէին երեք ժողովարան, Ա.Բ.Գ. անուններով, Ա.-ը Տիվանլը թաղի մէջ հիմնուած, 1854: Բ.-ը Շէքեր Տէրէի մէջ հիմ. 1865-ին եւ Գ.-ը Ազ Տէրէի մէջ, մէյ մէկ քարոզիչ հովիւներով, սոյն երեք ժողովարանները, եւս այրուած են 1920-ին: Նայ- Կաթոլիկները ունէին Ս. Փրկիչ անուն եկեղեցի մը հիմ. 1857-ին. հոս կը նստէր իրենց առաջնորդ Գերապայծառը, որ 1920-ին Աւերիս Արքեպ. Արփիարեանն էր: Եկեղեցին ունէր փասի չափ վարդապետներ, նոյնչափ մըն ալ մայրապետներ եւ նախակրթարան մը:

Ֆրանչիսկեան լափին կրօնաւորներն ալ ունէին գեղեցիկ դիրքի մը վրայ կառուցուած եկեղեցի մենաստան մը եւ դպրոց,

սակաւ ժողովուրդով. վանուցս վանահայրը եւ վարդապետն էր հայր Մաթէրն Միրէ, որ 1920-ի դէպքը համառօտակի գրի առած է, Le massacre de Marache en 1920 Fevr. վերնագրով:

Իսկ թուրքերը ունէին Մեվլադիներու յափուկ թէքքէ մը եւ 50-60-ի մօտ մզկիթ, մէսհիտ եւ կամ մէտրեսէներ: Մզկիթներու մէջէն մեծն ու նշանաւորն էր Ուլու ճամին, որ ի հնումն յունական եկեղեցի ըլլալ կը կարծուի: Մզկիթին նոր անունն է Սպանդանոց, քանզի 1920-ի Ֆրանքո- թուրք ընդհարումին, ձեռք անցուած հարիւրաւոր հայեր մեծ ու պզտիկ, ծեր կամ երիտասարդ առանց խարութեան մորթուած են հոս: Աստուծոյ փունը սպանդանոց, ջարդավայր, ինչ հակասութիւն, Աստուած իմ:

Սոյն մզկիթին արեւմտեան դրան վրայ աղբիւր եւ աւազան մը կայ, որուն վրայ կը նշմարուէին գոյգ մը գլուխներ եւ այլ բարձրաբանդակ ծաղկանկարներ, կ'ըսուէր թէ մզկիթին ներքին մասին մէջ ալ նման հետքեր գտնուած են:

ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ

Մարաշի քաղաքամէջի բնակչութիւնը նախ քան ընդհանուր պարտերագմը եւ հայոց փեղահանութիւնը կը բաղկանար մերձաւորապէս 75-80 հազար խառն ժողովուրդէ, որուն գրեթէ մէկ կրողդէն աւելին հայ քրիստոնէանէր էին, զորս կրնանք այսպէս բաժնել հաւանական թիւերով 5.500 հայ կաթոլիկ, 8 հազարի մօտ հայ բողոքական, 16.500 ալ հայ ազգային, կար նաեւ 50 փունի մօտ Նրեայ եւ մարի վրայ համրուող յոյն՝ 35 փուն միայն:

ԿՐԹԱԿԱՆ ՆԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՔ

Ամէն մէկ եկեղեցի ունէր իր ուրոյն ծաղկոցը, երկսեռ նախակրթարանը եւ ոմանք մանկապարտգ:

1880-ին բացուած էր բարձրագոյն նախակրթարան մըն ալ, Կեղրոնական Վարժարան անունով, որուն պիտիւնէ կը գոցուէր աշակերտներէ գանձուած թոշակներով եւ եկեղեցիներէ ստացուած գումարներով: Ընդունուած սակացոյցի մը համեմատ, Նայոց Միացեալ Ընկերութիւնն ալ ստարած է վարժարանին, ուսուցիչ կամ դրամ ղրկելով:

Շենքը կառուցուած է քաղաքին հայաշատ կեդրոնը, օդատուն է քրատար գերնի վրայ: Մինչեւ 1910 միայնակ էր. այդ թուականին օրուան առաջնորդ Մկրտիչ Եպս. Վեհապետեանի նիւթական մեծ նուէրներով եւ ժողովրդային հանգանակութեամբ ու ճիւղ աշխատութիւնով երկրորդ յարկ մըն ալ աւելցած էր, (ուր դասարան եւ մէկ ընդարձակ սրահ): Յետ այնու վարի մասը, ինչպէս առաջներն ալ՝ ծառայած է կիրակնօրեայ լսարաններու, երբեմն հանդէս, թատրոն եւ սինեմայի, անձրեւոյր օրեր ալ աշակերտաց գրօսավայր:

1912-ին հայ ազգայինք եւ բողոքականք, երկուստեք կարգ մը գիջողութիւններով համերաշխած, միացեալ պիւրճեով բացած են վարժարանս, հայ կաթողիկները չէին պարասխանած հրաւերին: Սոյն կրթական միութիւնը, գեղեցիկ եւ գովելի ձեռնարկ մը ինքնին, երբէն կարգ մը սնոյի առարկութիւն եւ հաշիւներով խզուած է բողոքականաց կողմէ, հակառակ որ աւելի իրենք եղած էին օգտուողները, քանզի հայ ազգայինք, ի սէր համերաշխութեան, փրամադրած էին շէնքը եւ նիւթականի ծանր բաժինը իրենց ուսերուն վրայ առած:

1919-ին, գինադադարէն ետք, վարժարանս կրկին վերաբացուած էր հայոց առաքելականներու եւ կաթողիկներու միացումով, այս անգամ ալ բողոքականք դուրս կը մնային:

Տայերս ունեցած ենք նաեւ աղջկանց առանձին երկրորդական վարժարան մը եւ փիպար դպրոց մը Կեդրոնականի շրջափակին մէջ:

Քաղաքիս մէջ կային նախ ամերիկեան միսիոնարաց Աստուածաբանական վարժարանը, որ 1865-ին Այնթապէն Մարաշ կը փոխադրուէր, ուրկէ ուսուցիչ, քարոզիչ եւ հովիւներ կը հասնէին. Աղջկանց գոլէժ մը, հիմնուած 1892-ին, ամերիկեան եւ գերմանական երկսեռ որբանոցներ, արհեստանոց եւ գերմանական հիւանդանոց մը, 1904-ին:

Տայ կաթողիկները եւս ունէին իրենց առանձին նախակրթարանը, իսկ բողոքականք, բացի եկեղեցիներու կից վարժարաններէ ունէին երկրորդական դպրոց մը Ազգաբեմի անուամբ, Ա. եկեղեցւոյ մէջ 1891 թ. ղեկավարուած ամերիկացիներէ ու անոնց նի-

թական օժանդակութեամբ:

Թուրքեր եւս ունէին մէկ իրապի եւ քանի մը րիւշպիյէ վարժարաններ եւ մզկիթներու մէջ նախակրթարաններ:

ԿՐԹ-Ա-ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՆԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՔ

1880 ական թուականներուն կազմուած են հետեւեալ ընկերութիւնները:

1. Կիլիկեան Տայրենասիրաց. որուն ջանից եւ աշխատութեան շնորհիւ, քաղաքին ամէնէն յարգի մասին մէջ կառուցուած է բացուած էր վերեւ յիշուած կեդրոնականը: Վարժարանիս շինութեան գործին նախաձեռնակ եղող, յառաջացման մղում փուող եւ ստարաող ազգայինները, ի մէջ այլոց, եղած են Առաջնորդական փեղապահ Տ. Նահապետ քահանայ, եւ որդին Տ. Ղեւոնդ Տ. Նահապետեան (այժմ ողջ ի Գահիրէ), Մկրտ. Չօրպաճեան, Յարութիւն Մուրաբեան եւ այլք:

2. Ռուբինեան Ընկերութիւն. Ս. Սրեփանոս թեմի երիտասարդներէն կազմուած, նպատակ ունենալով որք եւ անպաշտպան փողոց համար գիշերօթիկ վարժարան մը բանալ եւ անոնց ճիւղ կրթութիւն եւ ուսում քալ, վարժարանին նիւթականը ապահովելու հասութաբեր կալուածներ ձեռք բերել: Ընկերութիւնը սոյն նպատակին ծառայելու համար եկեղեցւոյ կից շինել փուած էր «Նոր Բաղնիք»: Ընկերութեան հիմնադիր եւ քաջալեր հանդիսացեր է, ի մէջ այլոց Կարապետ Չօրպաճեան:

3. Մամիկոնեան Ընկերութիւն.որ Ս. Աստուածածին եկեղեցւոյ երիտասարդներէն կազմուած էր: Սա ալ սոյն եկեղեցւոյ շրջափակին մէջ շինել փուած էր երկու յարկով եւ չորս սենեակներով վարժարան մը: Անդամներուն մէջ իր անշահախնդրութեամբ եւ անխոնջ աշխատութեամբ նշանաւոր եղած էր Մարտիրոս Գոմորեան(Գամբեան):

4. Ընթերցասիրաց Ընկերութիւն. ինչպէս իր անունն ալ կը յայտնէ, անոր նպատակը եղած է օրուան նորահաս սերունդին կամ երիտասարդութեան մէջ, մասնաւորաբար անոնց, որոնք կիսաթողած են իրենց ուսումը, ընթերցասիրութեան ոգին արթնցնել եւ վառ պահել: Այս ուղղութեամբ եւ նշանաբանով կը հիմնուէր նաեւ զրադարան մը: Տիմնադիրներէն եղած են ուսուցիչ Մարգիս Մամ-

վելան եւ Դաւիթ Տ. Ղազարեան:

5. Նայուհեաց Ընկերութիւն. կազմուած Ս. Քառասուն Մանուկ եկեղեցոյ զարգացեալ կիներէ, ասոնք ալ իրենց նշանաբան ունեցած են իզական սեռին կրթութիւնը: Սոյն միութիւնները շինել փութած էին Կեդրոնականի մէջի աղջկանց վարժարանը, անոր գործօն անդամուհիները եղած են Տիկնայք Թամամ Մուրաբեան, Վարդիկ Փարթամեան, Նամմալ Պուրունսուգեան եւ այլք: Աղջրկանց համար առաջին դպրոցը կը բացուի Ս. Քառասուն Մանուկ եկեղեցոյ շրջափակին մէջ, ուր կը դասախօսուէ Տ. Սրեփան քահանայ:

6. Լուսինեան Ընկերութիւն. միեւնոյն կրթա-բարեսիրական ոգիով եւ ուղղութեամբ Ս. Գեորգ եկեղեցոյ ժողովուրդէն կը հիմնրի ընկերութիւնս, որուն հիմնադիր եւ առաջաւոր անդամները կ'ըլլան, Յովհաննէս Գալայճեան եւ Յովսէփ Տիշէքէնեան ազգայինները:

7. Երկրորդ Նայուհեաց. որ Ս. Սրեփաննոս թեմի կիներէն բաղկացած էր, անոր նշանաւոր գործիչները եղած են Տիկնայք Մայրիկ եւ Էլմաս Չօրպաճեան, բացած են աղջկանց նախակրթարան մը համանուն եկեղեցոյ քակին մէջ, առաջին վարժուհին կ'ըլլայ Աննա Գազանճեան, ան կը յաջողի աշակերտուհիներուն կրած փափակ եւ երիզաւոր ֆէսերը վերցնել:

1887-ին Մարաշի մէջ կը բացուի Կիլիկիոյ Մկրտիչեան (Քէֆ-սիգեան) գիշերօթիկ վարժարանը, փնօրէն ունենալով Նշան Թէրգեան եւ Տեսուչ Յովհաննէս քինյ. Վարժապետեանը:

1888 թուականին Ննչակեան կուսակցութիւնը մուտք կը գործէ ի Մարաշ, Սեբաստիոյ առաքեալներէն Մ. Չուգասգեանի գալուստով, որուն առաջին հետեւողները կ'ըլլան, Տ. Ղեւոնդ քինյ., Նշան Չօրպաճեան, Սարգիս Սամուէլեան եւ այլք:

Ննչակեան կուսակցութեան Մարաշի մէջ վերակազմութիւնը փրեղի կ'ունենայ Տօքթ. Սմբատ Բարեջանեանի ձեռամբ եւ աջակցութեամբ Սարգիս Թիւլպեանի: Նին հնչակեաններու գործօն անդամները եղած են քահանայք՝ Տ. Ղեւոնդ եւ Տ. Ներսէս, Ս. Սամուէլեան, Ե. Ամիրապեան, Նշան Չօրպաճեան, Ս. Առաքելեան, Յովհ. Չարգեան, Յովհ. Չօրպաճեան, Յովհ. Սահակեան, Փանոս Պիլէ-


զիկճեան, Յրթ. Տիլլովեան, Նազարէթ Ախրապեան եւ այլ շարքեր:

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՕՏԱՐ ՈՐԲԱՆՈՑՆԵՐ

1. Իսահակ Ժամհարեանց որբանոցը հաստատուած էր 1898 Մարաշի եւ մարակարարուած Մոսկուայի Ազն. Ժամհարեանց հարազապներու նպաստի թոշակով, զոր սահմանած էին ի պատիւ յիշաբակի իրենց հանգուցեալ իօր: Պարսպարած է 90 որբեր եւ փասնեակ մը պաշտօնեաներ: Որբանոցին մէջ աւանդուած է ուսում. ունեցած է նաեւ արհեստանոց մը, հաստատուած նոյնպէս բարերարներու մասնաւոր ծախքով, ուր որբեր հետեւած են մուճակագործութեան եւ կօշկակարութեան: Նոգաբարձութեան նախագահը եղած է Առաջն. Փոխանորդ Յովհաննէս քինյ. Վարժապետեան, իսկ անդամներ՝ Վարդան քինյ. Տէր Մինասեան, Տիգրան քինյ. Մէրճանեան, Յարութիւն քինյ. Թապազեան, Յարութիւն Էֆ. Տապեան, Մովսէս Առաքելեան եւ Նշան Մոմճեան:

2. 1896-ին՝ համիտեան ջարդէն յետոյ, Պար. Յարութիւն ճէնանեանի նիւթական նպաստով, Մարաշի Ս. Սրեփաննոս եկեղեցոյ մէջ բացուած է որբանոց մը «Ճէնանեան» անունով, որ գործած է մինչեւ 1914, ասոր փեւականացման մեծապէս նպաստած է նաեւ Ս. Սրեփաննոս եկեղեցոյ ժողովուրդը: Պարսպարած եւ ուսում ստացած են մօտաւորապէս 35-40 որբեր, բոլորն ալ մանչ: Պարտելի ճէնանեան Մկրտութեան խորհուրդը սոյն եկեղեցոյ մէջ ընդունած ըլլալուն ի յիշաբակ, բացած է որբանոցը: Պ. Սողոմոն Ոսկերիչեան երկար արեւն իբր ուսուցիչ եւ պարասխաւարու անձ, ընկերակցութեամբ եկեղեցոյ թաղական խորհրդոյ կառավարած է դպրոց- որբանոցը, ուրկէ ելած են բաւական ուսում ստացող անհապներ:

3. Ազգային որբանոց. որ 1909-ին Կ. Պոլսոյ Ազգային խնամակալութեան կողմէ գաւառի մէջ բացուած եօթը որբանոցներէն մէկն է եղած, պարսպարած է 115 մանչ եւ 90 աղջիկ սաներ, որոնք հաւաքուած են թէ դուրսէն եւ թէ ներսէն: Տեսչութեան պաշտօն վարած է Խաչատուր Էֆ. Գռուգեան, այժմ քահանայ, 7-8 ամիս յետոյ Այնթապինն ալ հոս կը միանար, որով որբերու թիւը կը բարձրանար 360-ի (1910 Յունիս): Որբանոցը կը շարունակէ մինչեւ 1920, պատերազմի ընթացքին գայթ ի գայթ, իր գոյութիւնը կը



ՏԵՍՈՐՆԵՆ ԵՐ ՄԱՐՈՒՆԵՆ

պահէ, շնորհիւ ջանից հայ ազգայնոց եւ մասնաւորաբար Տօքթ. Յարութիւն Տէր Ղազարեանի: Գերմաններ եւս մեծապէս նպաստած են որբանոցին յարաբեւման, որ ապա կը յանձնուի Մերձ. Արեւլք. Նպաստամարոյցին:

Որբանոցը արեւն մը երկուքի բաժնուած էր, մանչերու հսկողութեան հոգը յանձնուած է Վարդան Զարոյեանի, իսկ աղջկանցը Օր. Սօֆի Շիշմանեանի: Մր. Վուլքի, Ամերիկեան Պօրտ Ընկերութեան ներկայացուցիչը եւս մեծապէս ձեռնարու եղած է որբանոցի գոյութեան յարաբեւութեան:

4. 1909-ին քաղաքիս մէջ բացուած է նաեւ այրիանոց մը, ուր 25-30 մօտ անտէր կիներ աշխատած են ժամանակ մը, թէ իրենց գործ եւ թէ նիւթական շահու մը ակնկալութեամբ: Բերուած էին գուլպայի մեքենաներ: Գործը թէեւ սկիզբը այնքան արդիւնք չէր տուած, սակայն ետքը բաւական նպաստաւոր պայմաններու մէջ դրուելով օգտագործուած է:

5. Էպիսէզեր (Աբբեննեզեր) որբանոց. ամերիկեան հաստատութիւն մը, Մարաշի օդատուն եւ ջրարփի մէկ դիրքին վրայ, մեծ եւ ընդարձակ հաստատութիւն մը: Միս Սալմընտ երկար արեւն վարած է փնօրէնուիլի պաշտօնը: Որբերը ուսման կողքին հետեւած են ջուլիակութեան, կօշկակարութեան եւ հացագործութեան, որբերու թիւը եղած է 120-150-ի միջեւ, բոլորն ալ տղայ. բացուած 1898-ին:

6.«Պէյթ Շալօմ» Որբանոցը, Քիւմպէթ թաղի մէջ գերմանական հաստատութիւն մըն է սա, որուն փնօրէնութիւնը վարած են Նախ Մր. Սիիեր եւ ապա Մր. Պլանք, ան պատերազմի ընթացքին ջանացած է կանգուն պահել զայն: Որբանոցը վերջը անցած է ամերիկացիներուն ձեռքը: Պատասպարած է մօտաւորապէս 300 որբեր, որոնք թէ՛ կ'ուսանէին եւ թէ՛ արհեստներու կը հետեւէին, 1898-ին:

7. Պէյթէլ(Բեթէլ) որբանոց, գերմանական հաստատութիւն, աղջիկներու յարուկ՝ որոնց թիւը հասած է 250-ի: Տեսչութիւնը վարած են Միս Ընդր եւ Միս Ապէլին. 1898-99:

8. Գումրուեան Յակոբ պատուելիի հսկողութեան փակ եւս բացուած է որբանոց մը, որուն կեանքը կարճ եղած է սակայն,

յևրոյ իրարու ետևէ անցած է ամերիկացիներու եւ գերմաններու ձեռքը, պարսպարած է մօտ 100 որբ փղայ:

9. Միս Սալմընփի Բ. աղջկանց որբանոց, պարսպարեալներու թիւը 200:

10. Իւվէզեան Աւերիսի որբանոց, որ նախ առանձին եւ զարկառավարուած է, ետքը անցած է Միս Սալմընփի:

1908-ին Օսմ. Սահմանադրութեան եւ ազատութեան հռչակումէն ետք, կարգ մը ուսումնարանէ երիտասարդներէ կազմուած էր «Նայկազնեան Ընթերցասիրաց»ը, որուն նպատակը եղած է երիտասարդներու մէջ ընթերցասիրութեան եւ ինքնագարգացման ճաշակը եւ ոգին արթնցնել, բանալով ընթերցարահ մը եւ գիշերային դպրոց մը արհեստարար պատանի եւ երիտասարդներու համար, կեդրոնականի շէնքին մէջ: Սա ունէր նաեւ իր մասնաւոր լսարանը: Այդ օրերուն գոյութիւն առած էր նաեւ «Եկեղեցասիրաց» մը, սա ալ ուզած էր եկեղեցւոյ պայծառութեան եւ ապագայ եկեղեցական - քահանայից մօտաւորապէս բարձրանալուն նիւթապէս ստարտել եւ օժանդակել: Սոյն երկու ընկերութիւնք ապա համերաշխելով ի մի ձուլուած են եւ աշխատած միացեալ ուժով: Ունեցած են համեստ դրամագլուխ մը, եւ 2300 հապոր գիրքերով գրադարան մը: Ընկերութեան կանոնագիրը վաւերացուած էր Կիլիկիոյ Շնորհագարդ Տ. Սահակ Վեհ. Կաթողիկոսէն, հիմնադիրները եղած են՝ Տաճար Յովնանեան, Նապիպ Գալբագեան, Յովսէփ Տէր Վարդանեան, Արմենակ Աբրիկեան, Նրանդ Թովմասեան, Մինաս Ալլահվերդեան, Երուանդ Նեղնեան, Միհրան Ուրֆալեան եւ այլք:

ԼԵԶՈՒՆԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Մարաշի շրջակայ հայ գիւղերուն լեզուն Նայերէն էր. անբարակոյս անցեալի մէջ, օր մը Մարաշցին ալ հայախօս էր եղած, ստոյգ չի գիտցուիր թէ երբէն կը սկսի քաղաքացի հայուն թրքախօսութիւնը, կ'ենթադրեն թէ շատ հեռու չպէտք է ըլլայ այդ թուականը, հազիւ 150-100 փարի մ'առաջ գուցէ, այսուհանդերձ բոլորովին փունտէ դուրս վճարուած չէր ան՝ հայախօսութիւնը, կը յիշեն բազմաթիւ ընտանիքներ, որոնք այսօր իսկ կը խօսին փեղական բարբառը, զոր օրինակ, Գալայճեան, Մելեպոնեան, Տէր-Նա-

հապեպեան, Տէր-Ղազարեան, Յ. Տօլպաճեան, Մ.Տիլէնեան, Տէր-Մինասեան, Յ. Շէքերճեան, Մ. Մալճեան եւ այլն, իսկ հայ-կաթոլիկներէն բացառաբար Գրիգոր Շարարեւեան:

Մարաշցի այր մարդը թէն գիտէր իր գաւառաբարբառը խօսիլ, սակայն շուկայի մէջ առուարի առթիւ թրքախօսութեան գործածութեան ստիպուած ըլլալուն չէր գործածեր յաճախ, որուն թուրքը կ'ըսէր, «կիմէ կեալուրճայա պաշլափընըզ» (դարձեալ սկսաք հայերէն խօսիլ:)

Պարանելութեանս, երբ երբեմն եկեղեցւոյ մկրտութեան փոմարը կը պրպպէի, դեռ որոշ կերպով կը յիշեմ, կը պատահէի շատ մը հայերէն արձանագրութեանց, զոր օրինակ, «Եօթըփորճանքեանց (Եփիպէլեան)..... անուն փղան մկրտեցաւ..... կնքահայրն է Մկրտիչ քահանան:» Եւ ասոր նման շատեր, եւ ասի ասկէ 75-50 փարի առաջ միայն. 1890-է առդին արձանագրութիւնք բոլորովին հայերէն էին եւ կանոնաւոր: Կենթադրեն թէ Եէնիչէրիներու բռնութիւնը եւ Չափան Օղլուի վախը պարճառ եղած ըլլան թրքախօսութեան: Կը պարմուի նոյնիսկ, որ փեղպեղ ոմանց լեզուն ալ կարուած ըլլայ, այդ շրջանին հայերէն խօսած ըլլալուն համար, սակայն եւ այնպէս կարելի չէ եղած արմարախիլ ընել զայն, հայեվարը:

Մարաշի գաւառը իր գաւառակներով 400-է աւելի գիւղեր ունի, որոնց մեծ մասը սակայն թուրք, (բացառելով Զէյթունը) անշուշտ թրքացած բռնութեանց եւ ջարդերու հետեւանքով, որոնցմէ շատերուն մէջ մինչեւ մեր օրերը կը նշմարուէին հնաւանդ քրիստոնէական սովորութեանց հետքեր եւ նշաններ, զոր օրինակ, ոմանց խմոր շաղելէ ետք վրան խաչի նշանը դրոշմելը ձեռքով կամ խաչակնքելով, իսկ ոմանց մէջ ալ պահուած էր հաց բեկանելու սովորութիւնը:

Ուրիշ բան թէ ցարդ թուրքերու իսկ բերնին մէջ պահուած կը գրնենք կարգ մը փեղերու հայերէն անուններ, ինչպէս «Անապար» վանք, որ Մարաշի հիւսիսային արեւմտեան կողմն է, հոս մօտիկն էր նաեւ Բարսեղեան վանքը, երկուքն ալ նշանաւոր ուսումնավայրեր էին միջին դարուն: Անապար վանուց մօտիկն է բարձր լեռնաշղթայ մը, երկու գագաթ կամ բաժանումով ինչպէս

Մասիսները, որոնց մին՝ մեծը կը կոչուի Աւգասըր, միթէ սա աղաւաղ մէկ ձեւը չէ՞ «Աւագ Մար»ի, իսկ միւսը կը կոչեն Սըր Մար: Սոյն լեռներու մէջ ցրուած կան բազմաթիւ թուրք գիւղեր, որոնք փարակոյս չկայ, թէ ամբողջ հայեր էին ժամանակին եւ որոնցմէ բաւական նմոյշներ մնացած են իսկ, Տէօնկէլ, Մուճուգփէրէ, Եէնի-գալէ են:

Նման պարագաներու շարք մը կարելի է գտնել. սակայն սաչափն ալ կը բաւէ մեր ըսածը հաստատելու:

Այսու հանդերձ, այլ եւս իրականութիւն էր, որ (նախքան ընդ-հանուր պատերազմը) շնորհիւ դպրոցներու փրուած ուժ ու կարե-ւորութեան, նորահաս երիտասարդութիւնը սկսած էր հայերէն բարբառիլ եւ անցուկ կամ ծերուկ այրն ու մայրը, փունը թէ շուկայի մէջ, ուներ իր խօսելու հայերէնը՝ գաւառաբարբառը, որ թէեւ թերի ու աղաւաղ, բայց դարձեալ սիրելի:

Ինչպէս շաք մը հնաւանդ սովորութիւններու նոյնպէս եւ լեզուին աւանդապահը եղած էր այր մարդէն աւելի իգական սեռը՝ կինը, մասնաւորաբար հայ առաքելական մամիկը, քանզի պա-պական կամ բողոքական կինը ոչ միայն չէր գիտեր ու չէր խօսեր գուցէ եւ կը ծաղրէր իսկ նման լեզու մը, մինչ ինք անկէ ալ զուրկ ու անտեղեակ կը մնար իբր հայ:

Բողոքականին թրքախօսութեան պատճառ մը եւս կարելի է համարել եւ սա պարագան, որ երբ ամերիկեան միսիոնարներ Թուրքիա, մասնաւորաբար Մարաշ մուփ կը գործեն, իրենց բա-ցած փարրական եւ նախակրթարան դպրոցներու մէջի հայ մանու-կին ձեռքը փոխանակ բուն հայերէնի՝ հայափառ- թրքաբարբառ հեգերէն ընթերցարաններ կու փան, որոնց նմոյշներ կարելի է գուցէ գտնել, ասով անփարակոյս ասփիճան մըն ալ քաջալերած եղան թրքախօսութիւնը եւ երկու եղբայրներու մէջ խրամափը լայնցնել: Բաւական ուշ է, որ անդրադարձուած է նման սխալի եւ սրբագրելու ելած էին զայն գիտակից բողոքական հայեր, նման դասագրքերը վարարելով վարժարաններէ:

Ներաբրքիրներու եւ բանասէրներու համար սփորել կու փանք նմոյշներ փեղական գաւառաբարբառէն, որոնցմէ ոմանց մէջ սփեղծող ոգի իսկ կը նշմարուի:

ԵՐԳՄԸ

Իմ աղջինս հիւնէր 1 ունայ
Մէփնից 2 կիմի պինոր 3 ունայ
Քիրոզ կիմի փոփոխ ունայ,
Չոց 4 փոմ պաճըմ չիմ կանի փոյ 5,
Տիրերմնան 6 լող է չունան
Թիւմ թողմընան 7 հով 8 է չունան
Պաղնաք 9 ըրթոն 10 կով 11 է չունան
Չոց փոմ պաճըմ չիմ կանի փոյ,
Տիներ մ' ունան օլուխ չունան
Թիւմ թողմընան սուլուխ 12 չունան
Փիս կը հագնան կըլըխ չունան
Չոց փոմ պաճըմ չիմ կանի փոյ,
Պէօլմէճմընան 13 թախըլ չունան
Ըռոֆմընան պախըր չունան
Պէզոր 15 երթոն խաթըր չունան
Չոց փոմ պաճըմ չիմ կանի փոյ,
Տուն մ' ունան ախըր 16 չունան
Մէկ է 2 մ' ունան դաթըր չունան
Նադնըլոյ է լաթիր չունան
Չոց փոմ պաճըմ չիմ կանի փոյ,
Տիներմընան դայի փոկ 17 է
Իմ աղջինս 18 մահիթօփ 19 է
Էս 20 է նոճմընան չըխլա իթօպ է
Չոց փոմ պաճըմ չիմ կանի փոյ,
Տիներմընան փուռնօ չունան
Պաղնաք կ' ըրթոն գուռնս 22 չունան
Տավուլ ունան գուռնո չունան
Չոց փոմ պաճըմ չիմ կանի փոյ,
Տիներմնու առջելը օփոյ
Իս աղջինսս փոյ կփոյ
Աշխարհ փահ 23 մ' ըննոյ չիմ կանի
Չոց փոմ պաճըմ չիմ կանի փոյ,
Մէկ դագի մը պիրի 24 նիշոն
Տուն մընան շոպ է փերիշոն

պարբնպոպր25 պէգիրոյ շուն

Չոց փոմ պաճըմ չիմ կանի փոյ:

Տունմընան թաղո չունան

Ճերոմընան էղ26 է չունան

Մէկ ապրցու օղ27 է չունան

Չոց փոմ պաճըմ չիմ կանի փոյ,

Տէգկոհ մ'ունան առէջ28 չունան

Սընփոկմընան չամաչ29 չունան

Տղոյ մ'ունան էէէ30 չունան

Չոց փոմ պաճըմ չիմ կանի փոյ,

Պորց31 ունան փուշակ չունան

Պլուգ32 մ'ունան փուրշոկ չունան

Պլուզը կ'ըլոյ 33 իւրիցք34 չունան

Չոց փոմ պաճըմ չիմ կանի փոյ,

Տիներ ունան փոռ35 է չունան

Թիւմ թողմընան ճօր36 է չունան

Պարմէր մ'ունայ էջը37 կիր38 է

Չոց փոմ պաճըմ չիմ կանի փոյ,

Տուն մ'ունան ասմա չունան

Մէկ ֆիսփանցու պասմա չունան

Վըլոցք39 էնին40 թէշփ է չունան

Չոց փոմ պաճըմ չիմ կանի փոյ:

ԲԱՌԵՐ.- 1.արուեստ, 2.մաքնոց, 3.բերան, 4.ինչպէս, 5.չեմ կրնար փայ, 6.փանիք, 7.թաղ, 8.հաւ, 9.բաղնիք, 10.կ'երթամ, 11.կաւ, 12.արտաքնոց, 13.մառան, 14.ռաֆ, 15.շուկայ, 16.ախոռ, 17.փակ, 18.աղջիկ, 19.լուսնակ, 20.աւ, 21.անարգանք, 22.գունա, 23.ղեհ, կողմ, 24.բերին, 25.պարմոն, կապ, կեսրայր, 26.իւղ, 27.աղ, 28.արիշ, 29.չամիչ, 30.աւաչ, երգ, 31.բարձ, 32.փոյայ, 33.կու լայ, 34.օրօրոց, 35.դուռ, 36.ջուր, 37.աչք, 38.կոյր, 39.լուացք, 40.ըրին :

Ինչպէս կ'երեւի իմաստէն, մէկը միւսէն աղջիկ մը կ'ուզէ, իսկ մէկայը մէջ բերուած պարճառաբանութիւններով, փողուն կողմը չափազանց խեղճ գրմելով չուզեր փայ, որով եւ աշուղը աղջկան մօրը կողմէն կը յօրինէ ներկայս:

Բ.ՕՐԻՆԱԿ

ԻՍ ՔԻՆ ՔԵՌԱԴ ՉԻՄ (արձակ)

Կեղցա1 մը քաղոք2 իկիլէ3, պէգորը պիլլիլիքէն4, փօլանփըրըճը մը կո հասկնոյ քի իւսիւր5 քէօվի6 փարոյ կոյ, ույունմուշկոննոյ7 իւսիւր, եոր քի8 փեսնոյ «քեռա պարիվ իկիր9, չոց իւ,ըռընդ իս10...» կոսէ: Կեղցան է կոսէ քի«լա փոյ11, իս քին քեռաղ12 չիմ»-«Չէ իլլէ փոն13 իմ քեռա իս, իս քիննէ չիմ անցնա» ինպէս կոսէ փօլանփըրըճըն:

Էօր մ'է կ'ոսէ քի «Քեռա, իկոյ14 իսկի15 քէպապճըվա իս-նույթ մը փանամ փէ քէպոպ մը կըրցընիմ քեգ», կեղցան էս լսոնը կիմի քէֆ կո էնէ, առջիւր կո ինկնայ պարապոր կորթոն16:

Խանութը կո մփնան, իվիրի17 կո իլլին, քէպոպը ուփըլէն սօնրո՞ փօլանփըրըճըն կ'ոսէ քի «քեռա կիցեր իվեր18 ըրթոմ փէ ալրոն մը պիրիցընիմ փէ խումիք»:

Իվեր կո իջնա քէպապճըվան կ'ոսէ քի « ահա իս կորթոմ իվիրի կիցող մորդէն19 փարէն օռ փէ փրցուր». հերիֆի ինպէս կոսէ, փորս20 կո իլլէ կորթոյ:

Կեղցան մէկ պէլլէմիշ կո էնէ, իրկու պէլլէմիշ կո էնէ՝ սօն-սօնու ի վեր կո իջնայ, կո փիսնոյ քի հերիֆը կացիլ21 է, քէպապճըն է ինքիրնէ փարոյ կո ուզէ:

Կեղցան մէկ իրիսի22 լացոն, մէկ իրիսի ծծաղոն, « հազոր փապու իս քին քեռաղ չիմ ըսա փէ, չէ իլլէ փոն իմ քեռա իս ըսոց, ըսելէն փարին ծրորը23 կո աձկէ24:

ԲԱՌԵՐ.- 1.գիւղացի, 2. քաղաք 3.եկեր է, 4.պփրպած ապէն, 5.ասոր, 6.քով, 7.կ'ըլլայ, 8.ուր որ, 9.բարի եկար, 10.աղէկ, 11. ծօ փոյայ, 12.ես քու քեռիդ չեմ, 13.դուն, 14.եկուր, 15.գքեգ, 16.կ'երթան, 17.վեր, 18.վար, 19.մարդ, 20.դուրս, 21.գացեր է, 22.երես, 23.ծրար, 24.կ'արձակէ, կը բանայ, կը քակէ:

Գ.ՕՐԻՆԱԿ

ԿԵՂՅՈՒ ՄԸ ԽՈՒՄՏՈՒՎԱՆՈՆՔՈՒ

Էօր միւ1, կեղցա մը իժոմու2 փերպապուն խուսփուվա-նիլլիքէն կ'ոսէքի «փեր պոպ, մորդ մը սպաննըցի էն մեղք չիմ

համրի, մորդ մը կեղվըցի3 էն է 4չիմ համրի5, փուն մը պարըըըցի էն է չիմ համրի, ամմա պոք6 եօր միւ իչ եաղը միմէն7 չըպուխ վառըցի, էս մեղքաս հագոր փապու մեղոյ, թողութան8 փուր:

Տեր պոպնէ կ'ոսէ քի, իլ իլ9 էր մեղքն է իս չիմ համրի:

ԲԱՌԵՐ.- 1.օր մը, 2.ժամ, եկեղեցի, 3.կողոպտել, 4.ան ալ, 5.չեմ սեպեր, 6.պահք, 7.մոմ, 8.թողութիւն, 9.ել:

ՅԱՆԳԱՒՈՐ ԽՕՍՔԵՐ ԿԱՄՆԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Կացանք 1 թօխոփ, աղօնք2 սախօփ: Անթըպոյ կուսեօ3 անապին4 խուսող5: Զնացիլ արթնցիլ է վորդէ ճօրը մարիլ է, (կարմրիլ) նէննի ըսիմ քնացընէմ, շաքրեվ մեղրեվ կշրացընէմ: Անմէր մանուկ, անսկեսուր հարսուկ:

Ճօր ճօր ճօր կընոյ

Տափուն պէշօր6 օռ կընոյ

Նասար7 ճամբօքը կեր8 կընոյ

Տափուն է ձծիկղ օռ կընոյ9.

Ճօր ճօր ճօր ալլա

Ախճին10 մ'ունանք մաշալլա

Ինքը լման լուսնկայ

Նարսուկ կէնիք իշալլա:

ԲԱՌԵՐ.- 1.գացինք, 2.եղանք, 3.աքաղաղ, 4.անժամանակ, 5.խօսող, 6.պաշար, 7.նիսփ, 8.կէր, 9.առ գնա, 10.աղջիկ:

ՆԱՆԵԼՈՒԿ

Փուխերիկէն հեյեցոյ1 քի մէրս2 փասար մը փուռուշուկ խաշըլլամը2 կո էնէր(քագերթ, իշկէմպէ3 կը խաշէ): Իւրքիս4 փէրէ կլոխը5 մագէ, իս կը քէշիմ6 ինք կը վագէ,(լօղանը): Ալըցի երթեցի7 փէր8 խաթունը նստըըըցայ: (Չահր, չըգորգ):

Առաձներ.- Էշը էշան խէշը9 կապես նը եա արուցը կ'առնու եա բարուցը: Չեկեր յարկէն չեկեր գարկէն եկեր աղցոցը Երկուշարթէն: Խեւը ըսոց խըլանան աւրոց10: Խեւը վէլիլէ11 իլանան կեցի հեյիլէ: Մուր սիրեմ անճիւր պագնեմ: Տալուկ քիզ կըսիմ հարսուկ փօն հասկցիր: Խեւը եա հարսնաքը եա պաղնաքը: Մորդ 12 մարդու հալէն չուպէ13, իլք իրիկոնէն իժոմ կը ճվո: Չիւր շուշոնը

գարդըրուայ իժոմը կարծըկուա:

Անէժք.- Պապենիկ14 էջքիդ, պապենիկ երեսիդ, մէկ պապենիկ քիչ է Եփուր15, հագար հոփ թոննոյ: Չը կանո իգոյ16, իւրքը կըրրա: Ղըրոն մըրնա մէջըդ, միւննիւրվէթ17, կրոկ թափա կլոխդ, Էօձ խէթէ, կիպէնը մըրնաս, կիւրիւր 18 կիւրիւր ըննոս, պէօյեդ պէօզ դերձոն չափուա, խըշըմ թափա կլոխդ, Ասրվօժ հիգէդ առնու, ծան19 արկընէ վիրէդ, փէրնոս20, մուռոս ընկըռա 21, մէօսպէճ ըննոս, էջքափ լասը խաւարա, եւ այլն:

Օրինութեան նմոյշներ.- Միածինը հիպդ22 ըննո, իրի23 է օրըդ պարա իգոյ, Ասրվօժ խելք փոյ, պոնըդ կիւրծըդ24 ըռոսփ ի գոյ, խիւդ25 փէյի ճանկոժըդ իսկի26 թոննոյ, էջքըդ պացուա, փունդ շինուա, իւրքը դարէմլի թոննոյ, մուխանէթան մօթթան չըննոս, Ասրվօժ ծեռոց ուրոց27 չը ձգէ, քէսիդ28 մէջը Նայր Աբրահաման պարաքօթը ըննո:

Աւելորդապաշարութիւնք.- Ախոցկան իլք շաբոթը իսպլա29 շովրոյ կամ քոֆթոյ չափի էնիս, մէջէն իսկիւր30 կիլլէ: Աս.ածին չիքոժ խայիւղ ուրելը շոփ մինձ մեղք է: Միշամ նամագըվէն սօնրօ դրացանան 31 փունը պղանձ մը պիրիսնի, արոպ մը կո պիրիս պիրի ըսիս, չըսիս նի մեղք կէնիս: Էյէր նիւր 32 պլուզ մը ըննո նը կէլիրի ճօրան33 պինորը պոց չափի թողվա, չիւնքիւ օլը կուգոյ, պլուզը կը խիստ: Ախոցկան իլք շաբոթը սընփուկ, հացամոն, գահրի քուրձ չափի պացուա, չիւնքիւ էն եօրը մէրէօն է, կիշիրի ծարթ34-ծամիս նը մեռելոց մասը35 կը ծամիս: Թարխան էնիլիքէն ճօր խումիսնը անձրիւ կարկընէ: Պուլուզան իրիւցկի36 պարոպ իրիսնի կը մեռնայ: Կընդոցը37 կէժլացքը38 պարոպ փեղ չափի փարձընիս, փիւրիւջի կլոխը կը ցաւա: Իրոզար39 մէջ թուրք փիսնասնը40 սուրբ է: Մաս ծիծիլիքէն ծըկարոնը41 ուրոդ կը գոյ, ձնօթը կըծոնը դըսմէթ կը գոյ: Կէնէջը կարմար42 կուփան կիրիզմոնան իվրէն ծէթանը ըռընփ չէ կըսին: Էյիր մարդու մը փուլուզը թէօրէմիշ չըննոնը եօթը թէվիւր43 լաթիր պիրի հագընիս: Կիշիրի այնո հէյիսնը դուրպէթ կը ըրթոն: Պըրիկ պլուզոցը ձեռքը պապուն քէսէն կը խէթին քի փըրոնիսպէթը44 թափա, եւ այլն:

ԲԱՌԵՐ.- 1. հայեցայ, 2.մայր, 3.սան, 4.ոքք, 5.գլուխ,

6.քաշկ, 7.յարդարեցի, 8.փայտ, 9.քով, 10. հաւարաց, 11.վայելկ, 12.մարդ, 13.չգիտեր, 14.վերքի մը անունը, 15.ապոր, 16. չկրնաս գալ, 17. վայ քեզ, 18.կպոր կպոր, 19.ծին, 20.փայտ դառնաս, 21.օտար, 22.հետ, 23.եպքի, 24.գործ, 25.հող, 26.ոսկի, 27.ձեռքով ոտքով, 28.աղու հաց, 29.ոսպ, 30.ոսկոր, 31.դրացի, 32.նոր, 33.ջուր, 34.ծիղ, 35.միս, 36.օրօրոց, 37.կիմար, 38.կարժեց, 39.երագ, 40.տեսնել, 41.ցափկել, 42.ծիրանի գօփի, 43.թեւ, 44.եղունգ:

Ասոնց շարքը կարելի էր երկարել, սակայն գաղափար մը փրումը ըլլալու համար, կարծեմ այսքանը կը բաւէ:

Մարաշցին ընդհանուր առումով կրօնասէր ժողովուրդ մը եղած է, վկայ իր եկեղեցիներու շարութիւնը, ան կը սիրէր ամէն առօրէի շուկայ իջած պահուն, խանութը բանալէ առաջ, նախ եկեղեցի այցելել, անձնական կամ առանձնական աղօթքը ընել ապա ձեռնարկել գործի, զբաղումի: Իր եկեղեցւոյն պաշտօնէին հանդէպ ալ յարգանք ու սէր կը փածէր:

Կրօնասիրութեան չափ ալ քարոզասէր էր, յեկեղեցւոց հոգեւոր խրատը կամ քարոզը լսելէ ետք կը դիմէր ազգային լսարան, ուր մտիկ կ'ընէր նաեւ մասնաւոր արեւնախօսութիւններ կրօնաբարոյական նիւթերու շուրջ:

Մարաշի փրօնները ընդհանրապէս երկյարկանի էին, որոնց վերինը բնակութեան, իսկ վարինը, գերնայարկը փնական առարկաներ՝ այն է փայտ ածուխ եւ նմաններ, ինչպէս նաեւ անասուններ պահելու կը ծառայէր: Տիրանոցը վերի յարկը կը գրնուէր, երբեմն սա բոլորը մէկ կամ երկու սենեակի մէջ իսկ:

Տուները մեծ մասաւր, մանաւանդ հիւներուն հիմերը պարզ քարէ եւ վրայինը աղիսէ կը շինուէին, եւ փանիքն ալ հողով ծածկուած կ'ըլլար, զորս ձմեռը կը պնդացնէին լողքարով, իսկ վերջերը գրեթէ յիսուն փարիներէ ի վեր, սկսած էին եւրոպական ճաշակ ու ճարտարապետութեամբ, սրբափայտ քարերով եւ շար մը սենեակներէ բաղկացած, երկու կամ երեք յարկերով շինել եւ փանիքը փեղական կամ եւրոպական կղմիտներով ծածկել:

Տեղային ընդհանուր փարագն էր ալաճայի կամ այլ կերպասէ: շինուած պարեգօփը, մէջքը շալէ գօփի եւ կոնակը ապա գործածել (ալաճան ու ապան փեղական կերպասներ են եւ փոկուն),

ձմեռն ալ սեւ բուրդէ կամ մագէ շալվար (անդրավարտիկ), գլուխին ֆետ, վրայէն ալ փաթթոց կը կապէին:

Թուականէս 75-70 փարիներ առաջ Մարաշցի հայը չէր կրնար գլուխը ֆետ դնել եւ եւրոպական կերպասէ զգեստ հագնիլ, այլ՝ պարտաւորուած էր գլուխը թաղիքէ գղակ (քիւլահ) դնել եւ կապոյտ կտուէ պարեգօփ կամ շալվար հագնիլ, իսկ իբր կօշիկ՝ մուճակ (եւմէնի) գործածել, անասարողները ձեռով կը քաւեն եղեր իրենց յանցանքը, հակառակ անոր, որ Սուլթան Մահմուտ 1830-ին հրամայած էր զգեստաց առանձնաշնորհու մներու խարութիւն:

Ծերունիներէ ականջալուր վկաներու հաւաստումով, կը հաստատուին թէ՛ այդ օրերուն եւ կամ քիչ մը աւելի առաջ, հայքրիստոնեաներ չեն կրնար եղեր համարձակ շուկայ իջնել, այլ անպարճառ սփիւտուած են եղեր իրենց աւարապետին կամ ենթակայ պէյին փունէն որեւէ նշան թամբ մը, համետ մը կրելով իջնել շուկայ, որպէսզի որեւէ վնասի կամ չարչարանքի չենթարկուին, չծեծուին: Թուրքիոյ մէջ ի՞նչը անկարելի եւ աներեւակայելի էր, որ սա չըլլար:

Ուրիշ իրողութիւն մը, դէպք մը եւս, որ դարձեալ սոյն շրջանին կը պարկանի:

Օրին մէկը եօթը չարագործ կամ մահապարտներ կը բերուին դուրսէն, անոնք պիտի կախուէին Մարաշի մէջ. թուրքեր նկատելով, որ ասոնց կախուէլու պարագային հրապարակի վրայ, անշուշտ Չանչալի կողմէն, քրիստոնեաները պիտի ուրախանան, գոնէ ներքնապէս, կ'երթան կ'ըսեն քաղաքի պետին, որ առ այս ճար մը մտածէ: Սա ալ կը հրամայէ, որ երթան եւ նոյնչափ ալ քրիստոնեայ բռնեն ու միաբերդ կախեն, որով ոչ մէկ կողմ ուրախանալու պարճառ մը պիտի ունենար: Ինչպէս, աղէտ չէ՞ք գտներ սա փրամաքանութիւն եւ սա գիւրէ միթէ:

Տին օրերուն, կնոջ փարագը եղած է, պարեգօփ՝ փեղական կերպասէ, մէջքը կամար կամ գօփի: Իբրեւ զարդ կը կրէր օղ եւ մանեակ, ճակտին վրայ բիրբիրիմ կոչուած զարդը, բազուկին ապարանջան եւ մափին մափանի:

Նարսեր, կիներ իրենց գլուխին կը կապէին գունաւոր եւ ծաղկենկար եագմա, մէկ ծայրը հանգուցուած կզակին ներքեւ,

միւսը երիզի նման ճակարհին, հանգուցուած ծոծրակին վրայէն, իսկ աղջիկներ գլխաբաց էին:

Նոր հարսեր մինչեւ քառասունքէ ելլելը երբեմն ալ աւելի երկար ապեն, երեսնին քողով մը (փուլլու), կը ծածկէին, օտարներու հետ բնաւ չէին խօսեր, հարսնութիւն կ'ընէին, իսկ փան առողամներէն միայն պզտիկներու եւ աղջիկներու հետ, փեսան բացառութիւն կը կազմէր անշուշտ: Վերջին ժամանակներ այս սովորութիւնները վերցուած էին սակայն:

Տղաբերքի ժամանակ կը կանչուէր դայեակը, որ պէպէր կը կոչուէր, ան փորձառու կին կամ պառաւ մը կ'ըլլար. վկայեալ մանկաբարձ դեռ գոյութիւն չունէր այն ապեն: Մանուկը ծնելէն յետոյ կ'աղէին զայն. քանի մը ժամ աղի մէջ մնալէ վերջ կը լուային ու նոր շորեր հագցնելով խանձարուրի մէջ կը փաթթէին: Ութ կամ առ առաւելն փասնըհինգ օրեր յետոյ, քնեցիք հարսեր կամ աղջիկներ դայեակի ընկերակցութեամբ կը փանէին եկեղեցի առ ի մկրտութիւն: Կնքահայրը եւ մօտիկ ազգականները զանազան նուէրներ կ'ընէին մանկան, իսկ նորածինին ծնողաց կողմէ ալ կնքահօր նուէր մը կը փրուէր: Բանուած կամ մեքաքսէ թաշկինակ մը պայմանագրական էր, նաեւ մաքանի կամ ուրիշ բան մը:

Աղջիկպես կամ խօսքկապ: Նախապէս քանի մը կիներ, ապա փղան մէկ երկու փարեցներով կ'երթան աղջկան փունը եւ համաձայնութիւն գոյանալէ վերջ, փղուն կողմէ մասնաւոր հրաւիրեալներ, բազմութիւն մը ազգականներէ եւ դրացիներէ բաղկացած, կ'երթան աղջկան փունը եւ պաշտօնապէս կը խնդրեն օրիորդին ձեռքը, պապասխան խօսքին մէջ գրեթէ հօրը հաւասար ձայն կ'ունենար նաեւ կնքահայրը: Կարգ մը այլաբանական եւ ձեւական բաներէ յետոյ ծնողաց հաւանութիւնը կ'առնեն, զիրար կը շնորհաւորեն ու յետ այսու կը դառնան խնամիներ: Կ'ըլլան պապուասիրութիւններ, օշարակ, մրգեղէն եւ այլն աւուր պապշածի. խնամեխօսութեանց յաճախ կ'ընկերանար նաեւ քահանայ մը:

Խնամեխօսութեան յաջորդ առփուն փղուն կողմէ, մեծկեկ խանի (սինի) մը մէջ շաքարեղէն կը դրկուէր աղջկան փունը, որ կը բաժնուէր ազգականներու, ծանօթներու եւ դրացիներու, փարոսը

ձեր փունը ըլլայ բարեմաղթութեամբ. յետոյ ալ աղջկան կողմէ փղուն փունը կ'երթային, սա ալ կը կոչուէր «շէքերէ գարշը», մօտիկ ազգականներու ընկերակցութեամբ: Կ'առնուէին նուէրներ, մասնաւորապէս փեսացունին ժամացոյց շղթայով մը, որ մերթ կ'ըլլար ոսկի:

Խօսքկապէն քանի մ'օրեր յետոյ, ժամանակամիջոցը կարելի էր աւելի կարճ կամ երկար եւս լինել, պաշտօնական նշանփութը փրեղի կ'ունենար եկեղեցոյ մէջ եւ հոն երկու խօսեցեալք աղջիկն ու փղան մաքանի եւ կամ ոսկի գարդ մը կը փոխանակէին:

Նարսանիքը կը կարարուէր, բացի պահք, Կիրակիէ եւ արգիլեալ օրերէ, Բշ. Գշ. Եշ. բացառաբար նաեւ Շաբաթ օրեր, ի հնումն Կիրակի օրերն ալ փրեղի կ'ունենար, եւ այդ ապեն հարսն ու փեսան ձիով փուն կը փանին եղեր ու գուցէ զիշեր ժամանակ: Պսակէն ետք փուն դարձին դրսի դրան առաջ, նորապսակ գոյգի ուրբին ոչխար կամ այծ մը կը մորթուէր եւ ասոնք անոր վրայէն պէտք է անցնէին:

Նրաիլեալք յետմիջօրէն կու գային եւ հարսանեկան ուրախութեանց նախապտօնականը կարարելէ ետք, ոմանք կը մեկնէին եւ ոմանք հոն կը մնային: Յաջորդ օրը, այն է պսակի ցորեկը հարսնիքի օրն էր, ամէն կողմէ կու գային, կը հաւաքուէին եւ երկուստեք հարս-փեսայի զգեստուց փոխանակութենէն վերջ, կէսօրուան մօտ կամ աւելի յետոյ փեսայի փան եւ հրաւիրելոց կողմէ մարդիկ կ'երթան հարսնցունին փունը, կ'առնեն զայն ու կը փանին եկեղեցի, ուր արդէն փեսացուն քանի մը բարեկամներով զացած կ'ըլլար: Նարսնիքի օրուան ամբողջ փրեղութեան հարսնցունին փոյգը չուաններու վրայ նեպուած ի ցոյց կը դրուէր հրաւիրեալներուն, եւ երբ պսակի համար ամէն ոք եկեղեցի կ'երթար, այդ պահուն կը հաւաքուէին անոնք եւ ձեռք մը անկողնի եւ այլ ընտանեկան առարկաներու հետ, զարդարուած ձիու մը վրայ բեռցնելով կը փարուէր փեսային փունը:

Քահանաներ «հալալ օրհնէքը» կը կարարեն «Այսօր երկնայինը» շարականով եւ ապա «Խորհուրդ Խորին» երգելու պահուն կը հագուեցնեն փեսան, աւանդաբան մէջ, յետ որոյ կը կարարուէր ձեռնփոխութիւնը-պսակը: Կը խօսուէր նիւթին յարմար

խրատական մը եւ ապա կը մեկնէին, ուր կը կատարուէր ընդուն-
լութիւն, շնորհատրութիւն եւ խնդակցութիւններ եւ մինչեւ ուշ
արեւն, երբեմն մինչեւ առօրն ուրախութիւն կը կատարուէր: Փե-
սան այդ օրը փեղական բարբառով կը կոչուէր «թէքվիւր»= թա-
գաւոր: Պսակի օրուան եւ կամ յաջորդ իրիկունը քահանայք փե-
սին փունը երթալով կը քակէին նարօփը, որուն կ'ըսուէր «թագ-
վերաց»: յետ այնօրէն ետք կը մտնէին առագաստ:

Յաջորդ առօրն աղջկան մօրը փունէն մէկ երկու կնիկ կու
գային, որոնց պաշտօնն էր պռոյգի սնարուը բանալ փնեցիներու
եւ քանի մը դրացիներու ներկայութեամբ, եւ ցուցադրել օժիփը,
ապա անկէ բաժին հանել, պարոնփափին, սկեսուրին, փագրոջ,
փալոջ, կնքաօր եւ այլ մօտիկ ազգականներու եւ փնեցիներու:
Պատուասիրուել վերջ կը մեկնէին: Սա կ'ըլլար վերջին արա-
րողութիւնը գրեթէ, որմէ յետոյ հարսը եւ փեսան աղջկան մօրը
կողմէ փուն կը կանչուէին, հոս ալ երկուքին նուէրներ կը փրուէր եւ
այնուհետեւ յարաբերութիւնը մտերմականի կը փոխուէր:

Նիւանդութիւն, մահ եւ թաղում: Երբ մէկը հիւանդանար մա-
նուանդ մերձ ի մահ, ազգականք եւ բարեկամք փեսութեան կ'եր-
թային, մահուան պարագային կը լուային, կը պատանքէին եւ եկե-
ղեցի կը փանէին: Առօրն յաւարտ ժամերգութեան եւ Ս. պատա-
րագի եւ թաղման աղօթից կը փանէին գերեզման, յուղարկաւորք
այր թէ կին խառն կ'ընկերանային դագաղին: Թէեւ մասնաւոր եղե-
րամայրեր չկային, ինչպէս ի հնումն, սակայն ամէն կին եղերամայր
մը կը կտրէր այդ պահուն, որը կը դրուարէր բարեմասնութիւն-
ները հանգուցելոյն:

Եթէ վախճանալը հոգեւորական մը ըլլար կամ մտաւորա-
կան, ընդհանրապէս դամբանականներ կը խօսուէին եկեղեցոյ
կամ գերեզմանափան մէջ:

Յետ թաղման յուղարկաւորք կը վերադառնային ննջեց-
եալին փունը, ուր կը ճաշէին (հոգեհաց) եւ փնեցուց «գլուխնիդ ողջ
ըլլայ, Տէրը սիրածնիդ պահէ, Ս. հոգիով մխիթարուիք» եւ այլ նման
մխիթարական խօսքեր ընելէ ետք կը մեկնէին: Քահանայք պար-
տաւոր էին մահուան փեղի ունեցած օրուան մօտիկ, Շաբաթ իրի-
կուն կրկին երթալ եւ «անբիծք»ը ուտել եւ հանգստեան շարական
ընելէ ու մխիթարելէ վերջ մեկնիլ:



Նիւանդութեան մնացած Սարաշի(Սարքազի) բերդին վրայ առիւծին նկարն է, որ ծածկուած է
արձանագրութիւններով, որոնք փեղական իշխաններու եւ բարաքներու անուններ ըլլալ կը
կարծուի, գործ
լուսանկարած է Եւնան գիւրուը: Առիւծին խակակամը կը գրտուի Կ. Պոլսոյ կայսերական
ննութեանց
բաժնումբումբ, իսկ նկարը՝ Պիլիկի-Ֆրեդերիկ Թանգարանին մէջ:

Գ. ՄԱՍ

ՎԵՐՋԻՆ ԴԷՊԵՐ

ՋԱՐԴ ՆԱՅՈՅ ՄԱՐԱՇԻ ԵՒ ՆԱՆԱՆՋ ՖՐԱՆՍԱՅԻՆԵՐՈՒ

Սուրբ սպանողաց բթեցան, եւ նոցա
պարանոցքն ոչ ձանձրացան: ԵՂԻՇԷ

Նամաձայնական փերութիւններ- Անգլիա, Ֆրանսա, Իտալիա եւ այլն - կը յաղթեն, իսկ զինակիցներ՝ Գերմանիա, Աստրիա, Նուեգարիա եւ Պուլկարիա ընդ որս եւ Թուրքիա կը պարտուին չարաչար եւ կը պարտաւորուին զինադադար եւ հաշտութիւն խնդրել, որ կը կնքուի Մուստրուի մէջ, 1918 Նոկտ., 25-ին: (1918 Նոյ., 11-ին ընդհանուր զինադադար):

Յեթ այնու խաղաղ յառաջխաղացումով մը կը գրաւուին Թուրքիոյ զանազան մասերը: Արդէն այդ օրերուն Նալէպ գրաւած էր Անգլիացիներու կողմէ, ինչպէս նաեւ Կիլիկիոյ վրայ ձեռք կը դնէր Ֆրանսա, եւ այլք իրենց կարգին, բաժին ինկած աւարներու վրայ կը նստէին:

Նալէպի գրաւումէն յետոյ, 1918 Նոկտեմբերի վերջերը, Անգլիացիք կը սկսին հեղափոխել յառաջանալ աւելի ներսերը ու կը մտնեն Քիլիս, Այնթապ եւ Մարաշ, 1919 Փետր. 18-ին ընդհ. հրամանադրութեամբ Գօլօնէլ Բոքրոֆթի եւ Նըթսըն Նօրսի:

Ներգաղթը՝ Ֆրանսայի հովանաւորութեան փակ կը կատարուէր այլեւս, ուրիշներու կարգին, ողջ մնացող Մարաշցիներ եւս փութացած էին վերադառնալու հայրենիք եւ կը ցանկային բնականոն վիճակով մը շինարարական աշխատանքի եւ առուարորի լծուիլ, սակայն, դժբախտաբար այդ ժամանակամիջոցը խիստ կարճատեւ կեանք մը կ'ունենայ, հագիւ իննը ամիս (1919 Փետր.- Նոյ.) քանզի 1919 Յուլիսին Անգլիոյ եւ Ֆրանսայի միջեւ գոյացած համաձայնութեան հետեւանքով որոշուած էր Անգլիական զօրքին փեղ Ֆրանսականին անցնիլը, ընդ որում Մարաշ եւս իր զիւղերով Ֆրանսական ազդեցութեան կամ հովանաւորութեան շրջանակին մէջ կը մտնէր 1919 Նոյեմբեր 1, Շաբաթ

օր:

Սոյն փոխանցումը, որ փեղի կ'ունենար 1919 Նոյ.ի սկիզբները հայ կամաւոր առաջապահ գունդերու մուտքովը ի Մարաշ, որմէ մէկուկէս ամիս յետոյ, Օսմանիէյի կառավարիչ հարիւրապետ Անարէ՛ կառավարիչ կը կարգուէր Մարաշի, սա հաճելի չէր թուած փեղական թուրք իշխանութեան եւ ժողովուրդին միանգամայն, անոնք ընդ ակամբ կը նայէին գացող եկողներու վրայ, ինչպէս նաեւ հայերու, որոնք գրաւող ուժերու քաղաք մտնելու պահուն, մանաւանդ Ֆրանսացիներու փառաւոր ընդունելութիւն մը կը կատարէին, այս պարագան իր վար ազդեցութիւնը կ'ունենայ թուրք մոլեռանդներու, արդէն իսկ յուզուած մտայնութեան վրայ, որոնք կը սկսին յետ այնու չար խորհուրդներ յղանալ եւ միջոցներ խորհիլ, այն է գաղտնի եւ յայտնի զինուիլ կազմակերպուիլ եւ քաղաքին զանազան կէտերուն վրայ պատնէշներ շինել, խրամներ բանալ եւ դիրքեր որոշել, Ֆրանսացիներու իսկ աչքին առաջ եւ ասոնց իսկ դէմ:

Թրքական Միլլի ուժը արդէն շարունգ գոյութիւն առած էր եւ կը գործէր թուրքիոյ մէջ, անկախ՝ Պոլսոյ Մուլթանական կառավարութենէն, կեդրոն ունենելով Սեբաստիան եւ գլուխ՝ Մուսթաֆա Բեմալ փաշան:

Ֆրանքօ-թուրք ընդհարումէն քիչ առաջ, Մարաշի թուրք երեսելիներէն Նասան գաբի, հաճի Գօճապաշ օլլու Օմար, Տօթթ. Մուսթաֆա, Խիւպայի Թահսին եւ դեղագործ Լութֆիէ բաղկացած պարզամաւորութիւն մը կ'ուղեւորուի Ալպուսթան (Մարաշի մէկ զիւղը դէպի հիւսիս-արեւմուտք), ուր այդ օրերուն կը գտնուէին Միլլի պետեր եւ ոյժեր, եւ ասոնց հետ, հանդէպ Ֆրանսացիներու իրենց բռնելիք դիրքին եւ ուղղութեան մասին գաղափարի փոխանակութիւն կատարելով, հարկ եղած հրահանգը ստանալէ ետք կը վերադառնան Մարաշ: Նայեր կը կռահեն գայս, եւ թուրքերու մշակած ծրագիրը կը յայտնեն Ֆրանսացիներուն, թէ թուրքերը գէնք կը բաժնեն եւ փենդոպ պարտաստութեան մէջ են, որուն պարտախան կը փրուի թէ «մենք ալ գիտենք պրոնք, մենք ունինք մեր գաղտնի լրտեսները, որոնք օրը օրին կը բերեն մեզ հարկ եղած փեղեկութիւնները քաղաքին մէջ անցնող դարձող

գործունեության մասին. դուք հայերդ անհոգ եղեք»:

Սակայն հայերը չէին կրնար անտարբեր մնալ ի փես վրանգին ու կը սկսին առօրին կանխագուշակյան ձեռնարկներ ընել եւ գրաւոր ու բերանացի կը դիմեն կեդրոնական հրամանատարութեան Պէլրոյթ եւ Արանա, սակայն ի գուր եւ նոյնիսկ իրենց այս արթնամիտ գործունէութեան համար կը յանդիմանուին ժէներալ Քէրէթի կողմէ, որ իրեն համար նուաստացուցիչ կը գտնէր նման դիմումներ հայոց կողմէ կատարուած:

Եւ սակայն օրերն ու գիշերները անակնկալներով յղի էին:

Խնդիր մըն ալ, որ իր գորաւոր ազդեցութիւնը ունեցած է թուրքերուն վրայ եւ փութացուցած գոնէ ռումբին պայթումը, ահա թէ ինչ:

Ֆրանսացիք քաղաքին մէջ փեղատրուելէ յետոյ, (գօրանոց, գօլէժ, աստուածաբանական վարժիւն. եւ այլն) օրին մէկը նորընփիւր կառավարիչ Անպրէ, կը հրամայէ թուրքերուն, որ Ուրբաթի աղօթքին պէտք չէ թրքական դրօշ պարզել բերդին վրայ: Թուրքերը այդ մէկ անգամուան համար ձայն չեն հաներ, կը համակերպին, սակայն յաջորդ շաբթուն հազարաւորներու զինուած բազմութեամբ մը կը հաւաքուին «Ուլու ճամի» մզկիթին մէջ, կը մերժեն աղօթել մինչեւ որ դրօշակը պարզուի բերդին վրայ, ըստ որում եւ ահագին ժխտով կ'երթան, կը բարձրանան բերդ ու հոն կը պարզեն թրքական դրօշակը, վար առնելով Ֆրանսականը, ապա կը վերադառնան մզկիթ ու կ'աղօթեն հանդարտ սրտով. ասոր ի փես սակայն ֆրանսացիք ձայն չեն հաներ եւ առ ժամս կարգ կանոնը պահելու միայն կ'աշխատին:

Այդ օրը ֆրանսական կառավարիչը իր թարգմանին՝ ողբացեալ Վահան Խուպէրեանի հետ, կառավարչատուն կ'երթայ, բերդն ու կառավարութեան ղեկը ստանձնելու թուրքերէն,* անոնք կը մերժեն, մինչեւ իսկ կը համարձակին նախապէս եւ ծեծել թարգման Պ. Վահանը, որ հազիւ կ'ազատի մահէն:

Սոյն դէպքերը հարիւրապետ Անպրէի կողմէ հեռաձայնով

* Անգլիացիք իրենց գրաման շրջանի փետողութեան բնաւ նման ձեռնարկ չեն ըրած. այլ քաղաքի մօտիկ պարտէզներու մէջ բանակ դնելով, ներքին եւ արտաքին խաղաղութեան պահպանումն իսկաձ. միայն դիպող եղած են:

կը հաղորդուի Այնթապ, Ֆիլ Սէնթ Մարիի եւ օգնական ուժ կը խնդրուի, քաղաքին մէջ խաղաղութիւնը պահպանելու համար: Վերջինս փոխանակ զինուոր դրկելու, Անպրէն իր մօտ կը կանչէ, որ կ'երթայ սակայն անօգուտ: Ֆիլ Սէնթ Մարի զինք Արանա՝ գօրաբաժնի հրամանատարին կը դրկէ:

Ժէն. Քէրէթ նոյն ուղղութիւն եւ ընթացքը կը բռնէ հանդէպ թուրքերուն եւ քիչ մը աւելի թոյլ, սակայն թուրքերը բնաւ չեն ուզեր մագի չափ փեղի փայ: Կը ջանան ամէն զին ու միջոցներով վրարել Ֆրանսացիները Մարաշէն:

Ոմանք նման դէպքերու պատճառ եղած կը նկատեն հայ կամաւորներու գործածութիւնը եւ կամ ներկայութիւնը՝ ինչ որ սխալ է, ասոնց թիւը այդ օրերուն շատ նուազեցուած էր, հազիւ 400-500 էր եւ Մարաշի մէջ շատ փոքրիկ թիւ մը կը կազմէին անոնք եւ որոնք Մարաշի եւ կամ Այնթապի մէջ դժգոհութեան փեղի չեն փուած եւ ֆրանսական հրամանատարութիւնը նոյնիսկ ասոնց այս լաւ ընթացքին համար շնորհատրուած է:

Մեծ դէպքէն հազիւ երկու օր առաջ, 500 հայ կամաւորներ Մարաշ կը հասնին, բայց դէպքէն օր մը առաջ, անոնք ռազմանիւթ բերելու համար կը դրկուին Էսլահիյէ, որով դէպքի միջոցին Մարաշի մէջ հազիւ 50 հայ կամաւորներ կը գտնուէին, անոնց ներկայութիւնը փուշ մըն էր թուրքերու աչքին ու միշտ կը գանգալէին անոնց ներկայութենէն: Արդեօք կամաւորներու քաղաքէն դուրս դրկուիլը ժէն. Քէրէթի կողմէ, թուրքերու հաճոյ երեւելու համար խաղցուած խաղ մը չէ՞ր միթէ:

Սոյն դէպքերու միակ պատճառ եղած է միլլի ուժ կամ կառավարութեան կազմութիւնն ու գօրանալը եւ անգլիացի կարգ մը սպաներու, ֆրանսացիներու հանդէպ նուազ բարեացակամ արամադրութիւնները:


Ինչպէս վերեւ յիշեցինք, հարիւրապետ Անպրէի մեկնելէ յետոյ, կառավարիչ Մօռպիէօ կը ստանձնէ քաղաքին վարչական գործերու փնօրհնութիւնը եւ գօրաց հրամանատարը կ'ըլլար գօմանսպան Ռօզ փր Զօրպէն, իսկ ժէներալ Քէրէթ, որ Մարաշ Այնթապ եւ Ուրֆայի ֆրանսական ընդհանուր գօրաց հրամանատարն էր, այդ պահուն պատահաբար Մարաշ կը գտնուի, երբ իբր

քննիչ շրջանային պրոյքտի ելած է:

Քաղաքական այս շփոթ ու խառնակ օրերուն հայ Ազգային Միության անդամները, Աստուածաբանական Վարժարան ժէներալ Քէրէթի մօտ կ'երթան, մօտալուր վրանգը յայտնելու, կանխազգուշական միջոցներու վրայ ուշադրութիւն դարձնելու եւ հայոց ինքնապաշտպանութեան համար զէնք ուզելու դիտարկութեամբ, սակայն, այդ դիմումը ֆրանսացիներու հանդէպ, հայոց կողմէ անվստահութեան եւ կամ փկարութեան նշան համարելով, ժէներալ Քէրէթ կը խոժոռի ու կ'ըսէ, «մենք քաղաքը եւ քրիստոնեայ բնակչութիւնը պաշտպանելու չափ զինուորական ուժ ունինք եւ ձեր աջակցութեան պէտք չունինք», ու կը դրկէ եկողները: Սոյն խօսքերուն արժէքը, քիչ յետոյ դէպքերը պիտի ցուցնեն:

1920 Յունուար 21-ին, թուրք կառավարութեան ղեկը ձեռք առնելու համար, ժէներալ Քէրէթ քաղաքին քաղաքական եւ զինուորական պաշտօնէութեան երեսելիներէն Շիշման օղլու Սրիիֆ, Գօճապաշ օղլու Նաճի Նաճի, թաղապետ Նաճի Պէյ, Թահրիրաթ միսիրիի Ճէվրէթ, Գօմիսէրը եւ այլ շարքեր շուրջ իննը անձ, կառավարչաբուն կը հրաւիրէ եւ կը յայտնէ յանձնումի այս պարագան, ասոնք նախապէս խորհած ու որոշած էին իրենց ընելիքը, սակայն կ'ըսեն, «թողուցէք մեզ որ երթանք եւ համոզենք ժողովուրդը, մենք համամիտ ենք» եւ ժէներալ Քէրէթ թոյլ կու տայ, որ ներկաներէն երկուքը կառավարչի փոխանորդ Ճէվրէթ եւ Գօմիսէրը երթան, (միւսները նահանջի պահուն միասին առնուելով, Արանա կը փոխադրուին Ֆրանսացիներու կողմէ):

Արոնք դուրս կ'ելլեն եւ հազիւ քսուր վայրկեան անդին, Պէքթոյթիյէ թաղը, Ճէլլան օղլուներու փունին քովերը, գերմանական հիւանդանոցին մօտ հասած, Գօմիսէրը թիվովերի հինգ հարուածներ կը պարպէ օդին մէջ: Աս է իրենց նշանն ու կարգախօսը գործի ձեռնարկելու համար: Ատոր վրայ, իսկոյն բերդին վրայ ահագին բազմութիւն մը կը խռնուի, ապստամբներու կամ չէթներու խումբ, որ կը ղեկավարուի ոստիկան զինուորներու պէտին կողմէ, հոսկէ կը սկսի կրակի փեղափարափ մը քաղաքին վրայ, կեավորները ջարդելու համար. շարժումին անմիջապէս կը հետեւի նաեւ փեղական թուրք ժողովուրդը, որ իր կարգին կը դիմէ



ԿՐՐՈՒ ՂՐՍՈՐԳՑ ԿՍՏՈՂՆԵՐԻ

զենքի եւ կը սկսի հրացանաձգութիւնը քրիստոնէից փունտրուն վրայ:

Դէպքէն քանի մը օր առաջ, թուրք երեսելիներ թաղապետարանին մէջ մեծ ժողով մը կը գումարեն, ուր կը հրաւիրեն նաեւ կարգ մը ծանօթ հայեր, անոնց կ'առաջարկեն հաւանական ընդհարումի մը պահուն իրենց միանալ եւ կամ չեզոք մնալ, հայերը չեն կրնար վստահիլ թուրքերու հաւաստումներուն եւ կարելի չըլլար համաձայնութեան մը գալ, թուրքերը անով անշուշտ կ'ուզէին չեզոքացնել հայերը եւ նախ ֆրանսացիներու ու եւրքն ալ քրիստոնէից հաշիւը մաքրել:

Թուրքերն ալ իբր զինուորական ազդ նկատելով զայս, այն է ֆրանսացիներու ակամայ դիմադրութիւնը եւ հայոց անզէն ու անպաշտպան մնալը, կը յանդգնին յաջորդ օրն իսկ, չորս յօդուածէ բաղկացեալ վերջնագիր մը դրկել Ժէներալ Քէրէթին, յորում չափազանց խրոխտութեամբ պայման կը դնեն, որ միայն զօրավարը եւ սպաները կրնան ազատ կերպով մեկնիլ քաղաքէն, մինչ միւս Մարաշ գտնուող բոլոր ֆրանսական զօրքերը եւ պարերազմական նիւթ եւ իրեղէնները պէտք է յանձնուէին իրենց թուրքերուն. ֆրանսացիք որքան ալ մեղմ ըլլային, բայց բնական էր, որ նման սպորնացուցիչ պայմանի մը չէին կրնար հաւանիլ ու կը մերժեն:

1919 Նոկտ. 30-ին մտած էին Մարաշ, որուն խաղաղ գրաւումը նոյնիսկ թուրքերու կողմէ գնահատուած էր, իբր պարտեալ մը համակերպելու սփիւտուած էր անշուշտ, սակայն եւ այնպէս ընդհանրապէս կը դիտուէր թուրք կառավարութեան կողմէն, ան չուշանար իր դժգոհութիւնը ի յայտ բերել, նոյն իսկ օր ցորեկով եւ բացայայտօրէն զէնք բաժնելով ժողովուրդին (1919 Դեկտ., Յունուար 1920): Անանկ որ դէպքը պարահելէ առաջ արդէն ամէն ինչ պարաստ էր, խրամներ բացուած, պարտէշներ կանգնուած եւ քարտիճոցներ (միթրայեթօզ) զեպրեղուած էին: Թուրքերը կը կարծէին թէ գաղղիացիք ի փես այս պարտաստութեանց կամ պիտի քաշուէին եւ կամ իսկոյն ընդհարումի պիտի սկսէին, սակայն, ընդհակառակը ֆրանսացիք ոչ այն կ'ընեն եւ ոչ միւսը եւ յաճախ կրկնելու առիթը ունեցած էին թէ «Իրենք կռուելու համար եկած

չէին, այլ խաղաղութիւնը փեսականացնելու եւ ձեռք ձեռքի փալով երկիրը զարգացնելու եկած էին»:

Այս խօսքերը ըսուած էին թուրքերուն Ժէներալ Քէրէթի կողմէ, թուրք երեսելիներու հաւաքոյթի մը մէջ:

Սակայն թուրքեր մտիկ չեն ըներ եւ կ'ուզեն միայն վերէն, Մուսթաֆա Քէմալէն եկած հրամանը կատարել, ֆրանսացիները Մարաշէն վարարել ամէն գնով: Ահա այս եղած է միակ պարճառը թուրքերու ապստամբութեան, եւ առ այս պարտաւար դէպքերուն համար հայերը դրդապարճառ նկատելը անարդար եւ անիրաւ է*):

Այս օրերուն մէջ, Մարաշ եկող ֆրանսական պաշարաբեր կարաւան մը, թուրքերու կողմէ յարձակում կը կրէ եւ մեծ քանակութեամբ աւար կը թողու անոնց ձեռքը: Սա քաղաքին խիստ մօտիկ հագիւ 3 ժամ հեռաւորութեան վրայ:

Թուրք չէթէներ արդէն գործունէութեան սկսան եւ քաղաքը գրեթէ ամէն կողմէ պաշարած շղթայի փակ առած կ'ըլլան:

Ինչպէս ըսած էինք քիչ անդին, Յունուար, 21 Չորեքշաբթի կէսօրէ վերջ ժամը 1:00-ին, կը սկսէր ընդհարումը: Թուրքերու գնդակին առաջին զոհերը կ'ըլլան նոյնիսկ ֆրանսական զինուորներ, որոնք կառքերով շուկայ իջած էին եւ որոնցմէ վեցը կ'իյնան թուրք ոստիկանի գնդակէն: Նինգ հոգիէ բաղկացեալ զինուորներու խումբ մըն ալ թրքական գերեզմանոցի մը մէջ կը խողողուին, սեւամորթ զինուոր մըն ալ կը բռնեն, որ թղթափարի պաշտօն ունի եղեր եւ որուն սեռանդամը կտրելով ձեռքը կու փան ու կ'ըսեն «ահա թղթափարդ շուր հասցուր զայն զօրանոց»: Խեղճը թէ կ'երթայ, սակայն քանի մը օր վերջ հոգին հիւանդանոցի մէջ կ'աւանդէ:

Ապա կրակ կը բացուի հիւանդանոցին վրայ եւ կը սպաննուի պահակ զինուորը, հոս երկրորդ եւ երրորդ զոհերը կ'ըլլան երկու հայեր, Նշան Մեսիայեան եւ Մելքոն անուն ոմն: Ասոնց մահը կը փեղեկագրուի ֆրանսական հրամանաւարին, որ հաւար ընծայել չուզեր նման սուտերու, խորհելով որ կարելի չէր հիւանդանոցի

* « Le Massacre de Marache » P. Materne Mure' 1920

վրայ փամփուշտ արձակել: Խեղճը ինքզինք քաղաքակիրթ երկրի մը մէջ կը կարծէր: Եւ երբ հիւանդապահուհիներ, հիւանդանոցի վերի յարկը կ'ելլեն, ասոնց վրայ ալ կրակ կը փեղայ: Ներքին թժիշկը Տօթթ. Վիլսըն կրկին ու երրորդ անգամ ըլլալով իմաց կու փայ: Ասոր վրայ թէեւ զէնք արձակուած փունին վրայ թնդանօթի քանի մը ռումբեր կը ձգեն, սակայն մեծ վնաս չի պատճառեր, ապա փունը հայոց կողմէ ներուած ռումբերէն կը փլի:

Դարձեալ նոյն օրը կը զարնուի զօրանոցի պահակներէ մին՝ ֆրանսական զինուոր մը, երբ լուր կը փրուի թէ գնդակը այսինչ կողմէն կամ փունէն է որ կու գայ եւ թէ հրամայուի պատրաստ եւ հոն կրակ բանալ, սակայն այդ մէկը կ'արգիլուի:

Սպաննութեանց սոյն դէպքերը բարեգուշակ նշաններ չէին անտարակոյս: Նայ ժողովուրդը ուրիշ առիթներով 1895-ին ու 1909-ին անոնց փորձը ճաշակած էր եւ կը հասկնար երեւոյթները: Ակներեւ կը փեսներ փոթորիկը, որ կու գար պայթիլ իր գլխուն վրայ, ըստ որում կը սկսէր ինքնապաշտպանութեան միջոցներու դիմել կամ ֆրանսական դիրքերու մօտիկը, ապահով կարծուած վայրեր՝ եկեղեցի եւ այլն, ապաստանիլ, փախչիլ:

Նակառակ ֆրանսացիներու լուսաբնութեան, ընդհարումը իրողութիւն մըն էր եւ անկէ խուսափիլ կարելի չէր: Այլեւս սփախուած էին կամայ թէ ակամայ մասնակցիլ: Մակայն ինչ ասփիճանի էր ֆրանսական բանակին դիմադրութիւնը եւ ժողովուրդի պաշտպանութեան գործը, այդ մասին թող խօսին յետագայ դէպքերը:

Քաղաքին հիւսիսային կողմը կը զարնուէր Ս. Գէորգ եկեղեցին, Շէքեր փէրէ թաղին մէջ, յորում խռնուած կ'ըլլան մօտ ժողովուրդի երկու հազար խումն բազմութիւն մը եւ ֆրանսական խումբ մը զինուորներ հարիւրապետ Տէլմասի հրամանին փակ, ան դուրսէն թուրքերու յարձակում մը կռահելով կը լքէ եկեղեցին ու մօտիկ ֆրանս. կեդրոնը կը փեղափոխուի: Ներսի ապաստանեալները ինքնապաշտպանութեան միակ միջոցէն գրկելով, որոնք սոյն անելէն ազատելու միջոցներու վրայ կը խորհին ու չեն կրնար մէջէն ելլել եւ մահը աչք առնելով կ'որոշեն վերջապէս երթալ ու ապաւինիլ ի Ս. Քառասուն Մանուկ եկեղեցի, որ քսան վայրկեանի

չափ հեռու էր սոյն վայրէն դէպի հարաւ եւ ուր վաշտ մը ֆրանս. զօրք կը զարնուէր: Անվախները ու սրտոտները դուրս կ'ելլեն եկեղեցիէն, ճամբու ընթացքին բաւական զոհ փալէ յետոյ, վերջապէս կը մօտենան եկեղեցիին, սակայն վերջնոյս պահակ զինուորը կ'արգիլէ մօտենալ կամ ներս մտնել: Նրամանափարին լուր կը փրուի, սա ալ իր կարգին եկած փեղերնին վերադառնալ կը հրամայէ, ինչ որ անհնար էր: Կու լան, կ'ողբան, կ'աղաղակեն, այլ ի զուր. զինուորականը անդրդուելի կը մնայ իր խօսքին վրայ. չի լսեր նաեւ ներսի հայոց աղաչանքը, եւ երբ կը փեսնէ, որ չեն հեռանար (Բան որ կարելի մը չէր, քանզի ասոնց հոնկէ մեկնելէն ետք թուրքեր կրակ փուած էին եկեղեցիին, հոն մնացողները՝ ծեր, կին եւ մանուկները սպաննելէ յետոյ) կը հրամայէ բազմութեան վրայ կրակ բանալ, մաս մը եկողներէն փեղն ու փեղը դիտապաստ կ'իյնան գետին, ոմանք խելակորոյս հոս ու հոն կը ցրուին եւ զոհ կ'ըլլան թրքական գնդակներուն եւ սուրերուն. փոքր խումբ մը միայն ներս կ'ընդունուի, երբ ասոնց հայ ըլլալը կը ստուգուի:

Ս. Գէորգի հրկիզումը եւ սպանող փեղի կ'ունենար 26 Յունւարին, դէպքը սկսելէ չորս օր յետոյ: Ասի անուղղակի կերպով նշան կ'ըլլար շրջակայ թուրք գիւղերուն, որպէսզի իրենք ալ սկսին «նուիրական» կռիւր, յարձակին մօտիկ քրիստոնեայ գիւղերուն վրայ եւ մաքրագործեն զանոնք, ինչ որ կը կատարուի մոլեռանդ խուժանին կողմէ:

Յաջորդ օրը, 26 Յունուարին, թուրքերը քաղաքին չորս կողմէն կրակ կու փան, որպէսզի սփախեն քրիստոնեաներուն դուրս ելլել իրենց թաքստոցներէն. այդ օրուրնէ սկսեալ մինչեւ վերջ կրակն ու բոցը չեն դադրիր գիշեր ու ցորեկ անընդհատ, անոնց ուղղութիւնը կը փոխուի մերթ դէպի հիւսիս եւ մերթ դէպի հարաւ: Կրակէ լեզուները եւ կայծերը երբեմն նոր հրկիզումներու ալ պատճառ կ'ըլլան:

Սոյն օրերուն ամէն դիէ կը լսուին նաեւ հրացանի հարածներ, արագահարուածներու շահուններ եւ թնդանօթի ռումբերու պայթիւններ, որոնք եւ ոչ մէկ վայրկեան կը դադրին: Պաշարուածներն ալ հայ թէ ֆրանսացի բնականաբար չէին կրնար ձեռնպահ մնալ:

Գրեթե միեւնոյնը րեղի կ'ունենար նաեւ հայոց թաղի Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ: Նոս ալ խռնուած կ'ըլլայ մօտ երկու հազար հաշուող ժողովուրդ, ընդ որս եւ 20 հոգիւնոց ֆրանս. եւ հայ գօրաց խումբ մը: Թուրքերը ամէն կողմէ կը յարձակին ու կը պաշարեն զայն. բազմութիւնը եւ զինուորները 12 օր կը դիմադրեն ներսէն, սակայն պաշար փամփուշտները կամ ռազմանիւթը կը սպառի, օգնութեան փող կը հնչեն, ֆրանս. դիրքերէ ոչ ոք կը շարժի. կ'ուզեն ներկաներէն փայել մը դրկել զօրանոց կամ ի Ս. Քառասուն Մանուկ, ոչ ոք կը համարձակի դուրս ելլել սրոյգ մահուան մը առաջ. հուսկ ուրեմն, 12 փարու աղջնակ մը, դիւցազն Շաքէի սեռէն, յանձն կ'առնէ արհամարհելով մահը, յանձնարարական թուղթ ի ձեռին կը մեկնի դէպի զօրանոց, մօտ ժամուան մը միջոց կ'որելով հրաշիւք իմն ողջամբ կը հասնի եւ գիրը կը ներկայացնէ հրամանաւարին. իսկ երկու անձ ալ կ'երթան ի Ս. Քառս. Մանուկ, մէկը կամաւոր զինուոր մը իսկ միւսը Պ.Գ. Սէրբէկեանը: Սակայն ցաւ է յիշել, թէ՛ երկու կողմերն ալ կը մերժեն որեւէ օգնական կամ ազարարար ուժ դրկել: Ժողովուրդը կը մնայ յուսալքուած ու կը սպասէ անողոր ճակատագրի վճռին՝ մահուան, ինչ որ չուշանար: Թուրքեր րեսնելով որ դիմադրութիւն չկայ ներսէն, աւելի կը նեղեն պաշարման շրջանակը եւ մօտիկ րանիքներէ քարիւղ կը նետեն շէնքին րանիքին վրայ թիթեղներով, ապա բոցավառ քուրջեր ու կը յաջողին հրկիզել եկեղեցին եւ կ'ողջակիզեն հօտն ու հովիւ ի միասին: Եւ հոտրութեամբ անշուշտ Տէր, ի հոտր անուշից ճեաճերի ծառայից իւրոց:

Ծանօթ է, որ զինուորական կարեւոր ուժ մը կը գրնուէր ի Ս. Քառասուն Մանուկ, միւսներուն նման սա ալ լեցուած ու խռնուած էր շրջակայ թաղերէ եւ այլ փախստականներէ, եկեղեցւոյ արեւելեան կողմը պողոտայ՝ իսկ հարաւ կողմն ալ պանդոկ մը կար, ուր հայերը դիրք կը բռնեն, թուրքերը թէեւ քանիցս կը փորձեն յարձակիլ ու ջարդել նման միւսներուն, սակայն միշտ ալ ետ կը մղուին եւ երբ օրին մէկն ալ հրամանաւարը պանդոկին մէջինները ետ կը կանչէ եւ զէնքերը անոնց ձեռքէն կ'առնէ, պարուիրելով միեւնոյն արեն պահակին ոչ ոք դուրս հանել րունէն, թշնամոյն գործելակերպը աւելի կը դիւրանայ, թուրքերը րեսնելով պանդոկին

պարպուիլը, իսկոյն ներս կը մտնեն ու դիրք կը գրաւեն, ասոր վրայ հայերը իրենց զէնքերը ետ կ'ուզեն, որպէսզի թէ զանոնք դուրս ընեն եւ թէ դիմացի սրճարանին րէր դառնան, որ կարեւոր կէտ մըն էր եկեղեցւոյ պաշտպանութեան եւ հաւանական հրդեհի առաջըր առնելու համար: Այս խնդրանքն ու առաջարկն ալ կը մերժուի, չուշանար թուրք չէթէներու սրճարան մտնելը, ուրկէ կը սկսին փամփուշտները արձակել եկեղեցւոյ վրայ եւ չգիտեմ, դժբախտարար թէ բարեբախտարար, առաջին զարնուողը եւ իսկոյն մեռնողը ինքը՝ հակառակող հրամանաւարը, Գօմանրան Մարթին կ'ըլլայ. 18-րդ բանակէն (որուն իբր թարգման կը ծառայէր Երուանդ Տէր Վարդանեան), եւ կը թաղուի եկեղեցւոյ բակին մէջ Մկրտիչ Եպս. Վեհապետեանի զերեզմանին մօտիկ, ուրկէ քիչ անդին կը հանգչէր նաեւ Կորիւն Վրդ. Եսայեանը: Թուրքեր երեք կողմէ եկեղեցին շրջապարելով, կը սկսին հրդեհելու փորձեր ընել ու կը յաջողին, իսկ մօտակայ խանութին ու դպրոցին րանիքները քարիւղով բռնկցնելէ յետոյ եւ հակառակ ներսի հայոց բուռն ճիգերուն, ամբողջ եկեղեցին իր յարակից մասերով կ'այրի, ժողովուրդը ու զինուորները ի փախուստ կը մտնուին եւ կ'ապաստանին ի Թաշ Խան, մեծ պանդոկ մը եւ սա:

Գմբէթի (Գիւմպէթ) Ս. Մարգիս եկեղեցւոյ մէջ հաւաքուած հայոց վիճակը քիչ մը միսիթարական կ'ըլլայ, անոնք կրնան ինքնապաշտպանուիլ ու քիչ գոհ րալ, քանզի թաղիս ժողովրդեան մեծամասնութիւնը հայ եւ լաւ զինուած էր, դեկավարութեամբ Մարգիս Ղարբեանի, անոնք զօրաւոր դիմադրութիւն ցոյց կու րան քաջալերուած միեւնոյն արեն հոն գրնուող ֆրանսական զօրաց պարէն, որ րեսնելով ժողովուրդին դրութիւնը, ինքնապաշտպանութեան ու մեռնիլ չուզելու ոգին, անկեղծօրէն կ'օժանդակէ, ըստ որում ժողովուրդը եւ զինուոր իրար լրացնելով ի փախուստ կը դարձնեն յարձակող խուժանը, զգալի կորուստ մըն ալ պարճառելով անոնց, սակայն անհաւասար ուժի առաջ կը պարտաւորուին լրել եկեղեցին եւ գալ ապաստանիլ աւելի յարմար կեդրոն վայր մը՝ Պէյթ Շալօմի որբանոցը եւ հոսկէ կը դիմադրեն: Թուրքերը կը մտնեն Ս. Մարգիս եւ աւարելէ ետք կրակի կու րան զայն եւս:

Սոյն թոհ ու բոհին մէջ հայերը մահուան ի րես արիացած,

կարևորության սահմաններում մէջ հոս ու հոն անառիկ կարծուած եւ հայկական կեդրոններու մէջ դիրքեր բռնելով կը պաշտպանուին, յորս ի մէջ այլոց նշանաւոր կը հանդիսանայ Զէյթունցի Սարգիս Չալուշ եւ Արամ Մամուկեան, որք 15 օրի չափ իրենց գրնուած Շէյխ թաղի եւ շուրջի մէկ մասի ժողովուրդը ջարդէ ազատելով կը փանին եւ Լափինաց եկեղեցին կը յանձնեն, որը բաւական անառիկ դիրք մը ունէր: Կեցցեն նման անձնուէրներ: Բաւական մեծ թիւով հայեր ալ ապաւեն կը գրնեն հայ-կաթողիկներու եկեղեցին, որ գերծ կը մնայ հրդեհէ:

Գիմադրութեան եւ ինքնապաշտպանութեան գործին մէջ կարգ մը անձեր նշանաւոր եւ աջքառու դերեր կատարած են, յորոց կարելի է յականէ յանուանէ յիշել. խմբապետ Սեդրակ Խրլաքեան, նախ բողոքականաց Ա. եկեղեցւոյ եւ ապա հայ կաթողիկաց մէջ եւ ի Գույուճագ թաղ. Լեւոն Պարպագճեան ի Շէքերլի թաղ. Գրիգոր Գարակեօզեան ի Խաթունիյէ թաղ. իսկ իրենց մասնակի անվախութեամբ եւ յանդգնութեամբ նշանաւոր եղած են Յովհաննէս Գուրբուեան, Իսկէնպէր Թալաթինեան, Յովսէփ Նաճի եւ Պեպրոս Նաւանճեան եղբայրք, Միհրան Քարկոպորայեան, Մամուկ Գարաօղլանեան եւ այլ շարքեր: Գիւղացի հայեր եւս գործօն մասնակցութիւն ունեցած են:

Ինչպէս ըսինք ֆրանչիսկեաններու եկեղեցին ալ ապաստանած էին, հին եւ նորեկ, ընդամենը 3000-4000 հոգիներէ բաղկացած խառն բազմութիւն մը, հոս գրնուած է նաեւ 200-է աւելի ֆրանսական զօրք, ընդ որս հայոց ցոյց փուած անվեհեր եւ քաջ ոգին, խիստ գովելի կը գրնէ հայր Մաթէրն Միւրէ վանահայրը:

Սակայն հոս ալ նեղը կը մնան ֆրանսացիք եւ Գարիթէն Պ. դռնէն երկու զինուոր դուրս հանելով կը դրկէ զօրանոց (որ ոչ այնքան հեռու էր անկէ՝ հազիւ երկու քիլոմէթր), իրենց նեղ դրութեան եւ կացութեան մասին լուր փալու համար Ժէն. Քէրէթին: Ճամբայ ելած այս երկու զինուորները հազիւ քիչ մը հեռացած, կը սպաննուին թուրքերու կողմէ: Միեւնոյն նպատակով հոնկէ հայ-կաթողիկներու եկեղեցին դրկուած չորս հոգինոց հայ խումբ մը նմանապէս քիչ վար, Գանլը Տէրէի կամուրջին վրայ կը սպաննուի:

Փեպրուար 1-ին փեղակալ Վան Գօբանօլ, վանուցս զան-

գակաբան վրայ ֆրանս. դրօշ մը կը պարզէ: Յաջորդ օրը քաղաքին մէջ 15 փեղ, ուր ֆրանսացիք կը գրնուէին եռագոյնը կը ծածանի նմանապէս: Պաշարեալներ կը կարծեն, թէ ասով իրենց օգնութիւն եկած է կամ պիտի ըլլայ եւ կամ քաղաքը ֆրանսացիներու ձեռքը անցած է, բայց մեծապէս սխալած ըլլալնին եւ դրօշակներու բացուելուն նշանակութիւնը հազիւ եօթը օր յետոյ կը հասկնան: Այդ հրամանը փրուած է զինուորական կեդրոնէն. որովհետեւ Արանայի զօրասիւն մը ճամբայ ելած է դէպի Մարաշ, եւ այդ դրօշակները ռմբակոծումի մը պահուն զինուորական կեդրոնները կամ դիրքերը ցուցնելու պիտի ծառաէին:

Դրօշակներու փեսքը քրիստոնեաները յուսադրած, իսկ իսլամները յուսալքած է առ ժամս: Անոնք իրենք զիրենք կորած նկատելով նմանը չքանուած կատարութեամբ մը կը շարունակեն կռիւր եւ քաղաքը հրդեհի լիճի մը վերածելով, աւերակ եւ մոխրակոյր մը դարձնել կ'որոշեն, նախքան ֆրանսացիներու կամ քրիստոնէից ձեռք ձգելը:

Այսպէս թուրքերը անպաշտպան թաղ կամ փուններու մէջ ձեռք անցուցած կամ անձնաբուր եղած հայերը փեղոյն վրայ սպաննելէ զար, կարեւոր թիւով բազմութիւն մըն ալ շուրջ 400-500 հոգիներ ամէն սեռէ եւ փեսակէ, աւելի կին եւ մանուկներ իբր թէ պահպանելու համար, կը համախմբեն Ուլու Ճամի մզկիթը, ապա ամէնն ալ անխնայ կերպով դանակէ կ'անցնեն, կը խողխողեն, մայրերու ճիչն ու արցունքը զաւակներու արեան եւ ողբ ու կոծին մէջ խեղդելով: Սոյն ջարդէն միայն պատանի մը կ'ազատի՝ Երւանդ Սէֆէրեան, ինքզինքը յարմար պահու մը դիակներու մէջ նետելով, ան կը պարսէ պատահած անգութ սպանողը, խժոժութիւններու որպէս կականարես վկայ:

Ասոնց մէջ կը գրնուէր նաեւ սոյն փողերը գրողին փիկինը՝ Մարիամ եւ երեք զաւակները՝ Նորայր 12, Ասանթթ 10 եւ Սրեփանէ 1 ամեայ:

Նման խմբական սպանդ մըն ալ կը պատահի Ուզուն Օլուզ թաղին մէջ, ուր խումբ մը քաջարիներ օրեր հերոսաբար դիմադրել կ'իյնայ, ռազմանիւթի սպառման հետեւանքով: Քանի մը ծանօթ թուրքեր՝ հին թաղապետ Տէրվիշ, իմամ եւ աղի մաքսապետ

Նաճի, հաւասարում, խոսարում եւ երդում պատրառ կ'ըլլան: Սակայն այդ պահուն իսկ անվեհերները կը փախչին, ոմանք կը զարնուին փախուստի պահուն, շարեր ալ կ'ազատին ապահով վայրեր իյնալով: Մնացեալք անճրկած փեղի կու փան եւ կը յանձնուին թիով 300 անձ, որոնք կը թխմուին ընդարձակ թուրք փունի մը մէջ, ուր երկու օր անօթի ծարաւ պահելէ ետք, մէկ մասը սուրերով կը սպաննեն նախապէս փորում խորունկ փոսի մը մօտը ու վար կը ձգեն, մէկ մասն ալ կը մորթեն մօտիկ ձորի կամուրջին վրայ ու վար կը ձգեն, անոնց թիւը այն աստիճան մեծ կ'ըլլայ, որ կամուրջին ջրի անցքը կը լեցուի, կը գոցուի, գետնին կը հաւասարի եւ կամուրջին պատերն ալ արեամբ կը ներկուին ամէն կողմէ: Սոյն կոտորածէն կ'ազատի միայն մէկ անձ Շիւքրի Թաշճեան, ան զարհուրելի գոյնով կը պատմէր կոտորածը: Մա հոգին բերանը առած, դահիճներու իսկ պահպանութեան եւ աչքին առջեւ գրնում պահուն, առիթ մը օգտուելով կը փախչի, կ'ազատի երեւէն արձակուած գնդակներէն կը վիրաւորուի, բայց չի մեռնիր:

Կամուրջին վրայի արիւնը, ինչ որ ալ ընեն կը մնայ դրօշմըւած, եւ անխօս ու անբարբառ բարձրաձայն վկայելով իրենց բարբարոս եւ անգութ արարքին մասին, որմէ ազատիլ կը կարծեն փլցնելով կամուրջը եւ նոր մը շինելով: Ի՛նչ հեզնանք:

Քսանըչորս օր փետող 1920 Յունուար, 22-12 Փետր. սոյն ընդհարումի, ջարդի, սուրի, հուրի եւ թալանի գոհ կ'երթան փասնըչորս հազար հայեր, առանց սեռի եւ հասակի խտրութեան: Արիւնախանձ եւ մարդախոշոշ թուրքին անասնական բնագող իր ծայրագոյն աստիճանին հասած եւ արեան հոտէն գինովցած, կը ջարդէ, կը խողխողէ, կ'արեւ, կ'արշարկէ ու կ'այրէ ամէն դի, նոյնիսկ թրքական վկայութեամբ քաղաքին փուններէն երկու երրորդը հրոյ ճարակ ու աւերակ կը դառնայ, անշուշտ՝ մեծ մասամբ հայոց: Կը սպաննուին 14.000 -է աւելի անձեր եւ 500 ֆրանս. զինուորներ քաղաքին մէջ, 200 հոգիներ ալ անդամահար կ'ըլլան ձիւնէն:

Մարաշ ունէր երեսունվեց թաղ, որոնցմէ վեցը՝ 1. Շէքեր փրէ, 2. Տիվանլը, 3. Ղուլաղը դուրթու, 4. Տուրազը, 5. Պոսթանճը, 6. Զիմեան, 7. Խաթունիյէ, 8. Ղույթուլ, համարեայ թէ ամբողջութեամբ, իսկ ուրիշ չորս ալ 1. Տալդնը, 2. Շէյի, 3. Ղումարը, 4. Չա-

վուշու, մասամբ հրկիզուած են:

Նրկիզուած կարեւոր շէքերու մէջ յիշուելու արժանի են (ինչպէս փեսանք) հայոց հինգ եկեղեցիները, բողոքականաց երեք ժողովարանները, մեծ շուկան (պէտէսթէն), բազմաթիւ խանութներ, գուցէ մէկ երկու մզկիթ:

Մեծ թիով կիներ ու մանուկներ ալ հոս-հոն կրակի բոցերու ճարակ եղած են:

Քստմնելի՛ փեսարան արդարեւ ... :

Ընդհարումի միջոցին ֆրանս. ուժերու ցոյց փուած սառնասրտութիւնը ինչի՛ վերագրել արդեօք: Նման արարք մը մասամբ՝ զօրաւոր բանակով մը կարելի էր պաշտպանել ու փրկել ժողովուրդ մը, որ ոգի ի բռին կ'աշխատէր եւ ջմեռնելու, չփճանալու համար ամէն զոհողութեան յանձնառու կ'ըլլար, եւ եթէ քիչ մը կորով ցոյց փրուէր ժէն. Քէրէթի կողմէ, քաղաքը ինքնին կը յանձնուէր իրենց, խնայելով 14 հազար հայերու կորուստը, որոնք, աւանդ, ի գո՛ւր գոհ գացին:

Կռիւին 17-րդ օրը, 1920 Փետր., 6-ին Արամայէն թղթաբեր օդանաւ մը կու գայ, որ թէեւ չի համարձակիր ցած իջնել, սակայն փրձակ մը թուղթ կը ձգէ բանակապետը եւ վարէն նշանացի սրացած փեղեկութիւններով կը մեկնի: Ժէն. Նորմանի զօրաբաժինը, որ օրեր առաջ մեկնած էր դէպի Մարաշ, պաշարեալներուն օգնելու կամ ազատելու համար Փետր. 7-ին կը հասնին 3000 զինուորներով 8 թնդանօթներով. սակայն չի մտնէր ներս, այլ քաղաքէն 4-5 քիլոմէթր հեռու դէպի հարաւ բաց դաշտին մէջ կը նստի եւ հոնկէ կը պաշարէ քաղաքը, մասամբ հարաւէն հիւսիս: Ասով հաղորդակցութիւն եւ կապ կը հաստատեն զօրանոցին կամ ընդի. հրամանատարութեան հետ ապա կը սկսին թեթեւ ռմբակոծումի մը, որ կը շարունակուի Փետր. 8-էն 10, գէթ նպատակ ունենալով, ոչ թէ քաղաքը փրկել, այլ ֆրանս. ներսի բանակին ամփոփումը եւ փախուստը դիւրացնել, ինչպէս պիտի փեսնենք:

Ժէն. Նորմանի բանակին ժամանումը մեծ բարոյալքում կը յառաջացնէ թրքական շարքերու մէջ, այնպէս որ, ալ սկսած էին թերահաւարիլ եւ փախչիլ դէպի շրջակայ մօտիկ գիւղերը, գործող ուժերն ալ, որք էին իթթիհապականք, ղեկավար ունենալով Գրլըճ

Ային, կացութեան առաջըր առնելու եւ ընդհարումին վախճան մը փալու միջոցներուն մասին կը խորհին եւ ճարահար կ'որոշեն երթալ Գօլէժ, փեսակցիլ ժէն. Զերէթի հետ եւ թշնամութիւնները դադրեցնելով համաձայնութեան գալու, կամ անձնափութը ըլլալու առաջարկ ընել: Ըստ որում, իբր բանագնաց սպիտակ դրօշակ պարգելով կ'երթան, Տօքթ. Մուսթաֆան չորս ընկերներով եւ ինչ կ'ուզէր որ պարահէր: Տօքթ.-ը կ'երթար այնպիսի արեւն մը, երբ արդէն ֆրանսացիք քաղաքը պարպելու եւ լքելու որոշումը փութաւ էին, սակայն նահանջի հրամանը փակաւին գաղտնի կը մնար (փակագծի մէջ ըսենք որ այս որոշումը ո՛չ Պէյրութի եւ ոչ ալ Արամայի մէջ փրութաւ էր, կամ այդ փեղերէն հրամայուած, այլ փեղոյն վրայ, Մարաշի մէջ որոշուած էր ժէն. Զերէթի եւ ժ. Մոռապիէօի միջեւ, քանզի Նորմանի բանակին հետ եկողներ կը վկայեն եւ կը հաստատեն, որ իրենք ոչ թէ ներսինները դուրս քըշելու այլ, թէ՛ զիրենք եւ թէ քաղաքը ազատելու եւ կացութեան փեր դառնալու համար կ'երթային): Գնդապետ Պռէմոն իր փեղեկագրին մէջ այս կարծիքը կը յայտնէ, սակայն Նորմանի գալը եւ քաղաքին պարպումը, կը ջրէ գայն, որ ինքնարդարացումի ձեւ մըն է անշուշտ:

Մինչ խնդիրը այս կէտին վրայ կ'ըլլայ, ճիշդ ժամուն կը հասնի թուրք բանագնացը, որուն կը պարասխանեն «Մենք վաղը պիտի մեկնինք դուք ալ ինչ կ'ուզէք ըրէք»: Կեցցեն դու ով քաջդ զինուորական: Եւ պիտի պարահէր անխուսափելին: Եւ մինչ Տօքթ. Մուսթաֆա այս պարասխանը առած կը մեկնէր հրամանափարին քովէն, հագիւ բաւական մը հեռացած կը սպաննուի, ընկերները կը մնան հոն ընդ հսկողութեամբ:

Յաջորդ առփու Փետր. 10-11, կանուխ թնդանօթի ռումբերու պաշտպանութեան փակ, ֆրանսական զօրքը կը քաշուի քաղաքէն, լքելով բոլոր դիրքերն ու փճացնելով անկարեւոր իրերը: Պարպումի մասին հայոց լուր չէր փրութաւ դժբախտաբար, այն հայերը, որոնք ֆրանսական դիրքերու մօտ գրնուած են, անոնք միայն կ'ընկերանան բանակին ու կը մեկնին մօտ 3000 հոգի:

Մեկնողները յետին ակնարկ մը հագիւ կը ձգեն հոն մնացող իրենց սիրելիներուն եւ քաղաքին վրայ, որ կրակի մէջ կը լողար,

հրակէզ կ'այրէր նաեւ զօրանոցը, ուր հաւաքած էին կարգ մը զինուորական թողօններ, զորս նահանջող բանակը չէր ուզած հետը առնել առ ի դիրութիւն:

Թուրքեր, որոնք չէին ենթադրեր, որ ֆրանսացիք պիտի նահանջէին, առփու կանուխ երբ կը փեսնեն, որ քաղաքը պարպուած է, ցնծութեան աղաղակներով օղը կը թնդացնեն եւ ամէն կողմ դրօշակներ կը փնկեն իբրեւ յաղթութեան նշան:

Ափսոս, որ ֆրանսացիք չէին կրցած օգտագործել թուրքերու պարպութիւնը եւ անձնափութը ըլլալու առաջարկը:

Գնդ. Է. Պռէմոն իր երկամեայ փեղեկագրին մէջ կ'ըսէ թէ՛ ֆրանսական բանակին նահանջին մասին շար թերի կերպով փեղեկութիւն փրութաւ էր հայոց, սակայն ինչպէս փեսանք, բնաւ լուր չէր փրութաւ: Ժէն. Զերէթ երկար արեւն կը փարամսի նոյնիսկ ժողովուրդը բանակին հետ առնել, ապա ակամայ կը համակերպի կառավարիչ Մոռապիէօի պնդումին վրայ:

Յեղազայ դէպքը որոշ կերպով կ'ապացուցէ մեր ըսելիքը, թէ հայեր լուր չունէին:

Մարաշի մէջ հանրաձայնօթ անձ մըն էր Յակոբ Էֆ. Խրլագեան, մեծահարուստ հայ-կաթոլիկ վաճառականը, որ օսմ. առաջին երեսփոխանական ժողովին ալ անդամ ընտրուած էր եւ առ հասարակ ամէնուն սիրելի, իր առաքաձեռնութեան եւ գործունէութեանը համար: Սա ամէն օր, ամէն ձեռով, ամէն փեսակ նիւթական եւ բարոյական աջակցութիւններ ըրած էր ֆրանսացիներուն, միեւնոյն արեւն հոգալով բանակին ալ պարէնը եւ այլ: Նրամանափար, հազարապետ կամ սպաներ շարունակ իր գրասենեակին եւ փունին մէջ պարուսպիութեան եւ կերուխումի մէջ էին. նոյնիսկ ժէն. Զերէթ կնքահայրը կ'ըլլայ Յակոբ Էֆ.ի թոռներէն մէկուն պսակին, որ փեղի կ'ունենար ընդհարումը սկսելիք օրուան նախընդօրը: Ֆրանսացիք ասոր անգամ, գէթ գաղտնի կամ լքելեայն լուր չէն փար: Շաբերու հետ, երբ Յակոբ Էֆ. առփուն կ'ելլէ, կը փեսնէ ֆրանսացիք քաշուած են եւ դաշտ իջած, կ'ուզէ ինք ալ անոնց միանալ իրենցիներով եւ այլ եկուորներով, որոնց թիւը հետզհետէ կ'աւելնայ ու կը յանգի շուրջ 1000-1500 հոգիի ու ճամբայ կ'ելլէ, սակայն ցաւ է ըսել, որ թակարդը կ'իյնան

թուրքերու կողմէ, կը պաշարուին ու բոլորն ալ կը ջարդուին անխնայօրէն: Թուրքեր նոյնիսկ կը կարեն Յակոբ աղայի գլուխը եւ ցիցի վրայ անցուցած երկու երեք օր քաղաքին փողոցներուն մէջ պարզնելով կը խայտառակեն: Մոյն կոտորածէն 17 անձեր միայն կ'ազարհին, որոնցմէ են՝ Տ. Ղազարեան Տօթթ. Յարութիւն, Քերոթ Թիւթիւնճեան եւ այլք:

Մարաշի թրքական- չեթական շարժումը կառավարուած է նախ Կոնստանդնուպոլիսի յետագայ անձերէ՝ Մելանիկցի Տօթթ. Մուրափի, Նասիպ Էֆ.ի, Ղարի օղլու Բիզափ, Շելքէթ օղլու Ղարիբի (Ճին Ղարիբ), ղեկագործ Լուիֆիի եւ այլոց կողմէ, ընդ վերին հրամանադատութեամբ թրք. երեսփ. ժողովոյ եւ անկախութեան դափարանի անդամ Գըլըճ Ալիի եւ Արսլան պէյի, որ բնիկ Կոնստանդնուպոլիսի մէջ բոլոր միւսերի եղած եւ ֆրանսացոց հետ Մարաշ մտնած է, անոնց ընթացքին մօտէն հետեւելու համար, ինչպէս նաեւ հաւանական ընդհարումի մը արեւն թրք. ուժերը կազմակերպելու եւ ղեկավարելու, ինչ որ Կոնստանդնուպոլիսի ունենար քիչ վերջ:

Նահանջող բանակ եւ հետեւորդք Փետր. 10-ին մեկնելով, 12-ի իրիկուան ժամը 6-ին կը հասնին Էլ Օղլու թրքական գիւղը՝ ղեպի հարաւ եւ այն գիշեր կը մնան հոն. յաջորդ օրը 13 Փետր. ճամբայ կ'ելլեն ու իրիկուայ դէմ կը հասնին Պէլ բունար:

Ճամբորդութեան կամ նահանջի սոյն երկու օրերը ըստ բաւականին հանգիստ եւ խաղաղ կ'անցնին, թէն ձմեռ, սակայն պարզունակ եւ գեղեցիկ օդով մը, ճամբաներն ալ չոր եւ առանց չեթէյի վախի:

Փետրուար 13-ի գիշերը կը սկսի ձիւնել, առօրէն ամէն որ ցուրփի եւ ձիւնի խայթէն ու փակէն ընդոստ կ'արթննայ ու վեր կը ցարկէ, կարծես գերեզմանէ յարութիւն կ'առնէ, կարաւանը կը շարժի, ամէն կողմ ձիւնով ծածկուած ըլլալուն, բանակը հազիւ կրնայ իբր ճամբայ, նեղ անցք մը բանալ, ուրկէ կ'երթար եւ՝ ինք եւ՝ ժողովուրդը. ձիւնը կը շարունակէ իջնել, քամին կը փչէ ու կը կճէ. կենալ անհնար է, վայրկեան մը դադար մահ կը պարձառէ: Շարքեր կը սառնին. այն թշուառները, որոնք կը փորձէին քիչ մը հանգիստ ընել ալ անգամ մըն ալ ուրքի չէին կրնար ելլել, կը սառնէին.

անանկ որ բոլոր ճամբու երկայնքին դիակներ կը փռուին, անօթութիւն ու մերկութիւնը մեծ նախճիրներ կը գործեն:

Մայրեր իրենց մանուկները նետած են, չկրնալով ալ զանոնք կրել իրենց ուսերուն վրայ, ամուսիններ իրենց կիները լքած ու հոգինին ազատելու նկրտած են: Կիներ, աղջիկներ. երիտասարդներ ու ծերեր, ծանօթ քաջեր իսկ մահացած են ճամբու վրայ. ընդամէնը 1200 հոգի:

Ֆրանսացիք ալ զինուորներու բաւական կորուստ կ'ունենան, մանաւանդ սեւամորթները, անոնք որ փորձած են վայրկեան մը, երկու ծառի մը կրթնիլ հրացանը ձեռքերնին սառած մնացած են հոն, անանկ որ ամէն կողմ ապրանք, դիակ եւ կիսամեռներով կը ծածկուի:

Պէլ Բունարէ մինչեւ Իսլահիյէ Կոնստանդնուպոլիսի եղած է: Մոյն երկու վայրերու իրարմէ ունեցած հեռաւորութիւնը, որ հազիւ 5-6 ժամուան միջոց մըն է, 14 ժամ կը տեւէ փորող ձիւն ձմրան պարճառաւ:

Վերջապէս բանակէն եւ բազմութենէն ողջ մնացողները Փետր. 15-ին կը հասնին Իսլահիյէի կայարանը եւ հոնկէ ալ կը մեկնին Արանա:

Իցիւ թէ Մարաշ, երոպական փրկութեանց քաղաքականութեան եւ հակամարտ շահուն վերջին զոհը եղած լինէր, սակայն մօտիկ ապագան պիտի գար արոր բոլորովին հակառակը ցոյց տալ ջարդերովը նոյնպէս Ուրֆայի, Նաճընի, Այնթապի եւ վերջապէս Արանայի ցրուումին:

Ինչպէս Կոնստանդնուպոլիսի, ֆրանսացիք ընդհարումէն քիչ առաջ, իբր պարանոց վար դրած էին կանչուած թուրք մեծամեծերէն հետեւեալները. Գօճապաշ Նաճի Նաճի, Շիշման Օղլու Արիֆ, Թաղապետ Նաճի պէյ, հազարապետ Սիւլէյման պէյ, երկրաչափը եւ ուրիշ մը, ընդամէնը վեց անձ, զորս նահանջի պահուն հետերնին տարած էին մինչեւ Արանա, յորոց մին կը փախչի փոխադրութեան պահուն, իսկ միւսները յետ ժամանակաց ազատ կ'արձակուին ու կը վերադառնան:

Ֆրանսացիներու հեռանալէն յետոյ ջարդ, հրդեհ եւ աւարտութիւն կը դադրին թէն, սակայն այս անգամ ալ սպանման փար-

րեր ձև՝ մը կ'որդեգրուի թուրքերու կողմէ, անանկ որ քաղաքը քիչ մը հանդարտելէ եւ ողջ մնացող հայերը փրկուեցէն Գեղեցիկ սկսելէ վերջ, երբ կը փնտնեն, որ սա կամ նա ծանօթ հայը դեռ կ'ապրի, գիշերները անձանօթ անձեր անոր փունը կ'երթան, «Քեզի կառավարութենէ կ'ուզեն» եւ այլ նման սուտերով դուրս կը հանեն, կը փանին անգամ մըն ալ չվերադարձնելու պայմանաւ կ'անյայտացնեն, կը սպաննեն: Նոյնիսկ օր ցերեկով, որեւէ գործի պատրուակաւ կը փանին ու կը խեղդեն, կը նեղեն:

Այս ձեւով ալ մօտաւորապէս հարիւր հոգիներ կը սպաննուին. յիշենք մի քանին. Խորլագեան ընտանիքէն Թորոս եւ Վիգէն, Շիրքրին յանկարծամահ, Պոյաճեան Գրիգոր, Չորպաճեան Կարապետ՝ նոյնպէս յանկարծամահ, Առաքելեան Փանոս, Մոմճեան Նամբարձում, Քէօմպէճի Աստուրի փղան Լուսեր, Տէօքմէճեան Արուրի որդին Սեդրաք, ինչպէս նաեւ Կղեմէս Վրդ. Մալճեան, որ փախուստի արեն ճամբան կը սպաննուի:

Բայց ասոնցմէ կարեւոր թիւով հայեր ալ կը բանարկուին կամ անկախութեան դատարանը կը դրկուին:

Սպանութեանց կամ անհետացումի սոյն նորահնար ձեւը, փրկող փնտնասկան եւ առեւտրական փազնապը եւ հայոց հանդէպ պօքօքը, մանաւանդ թուրքերու կողմէ գիշերները հոս ու հոն փակցուած ազդարարութիւնները թէ «հայեր, քանի փակաւին ողջ էք եւ ժամանակ կայ հեռացէ՛ք քաղաքէն ու երկրէն, ապա թէ ոչ մենք ձեզի Շէքերփրէյի* ճամբով Կիլիկիա պիտի դրկենք» եւ այլն. կը յուսահատեցնեն մնացող հայութիւնը, որոնք ակամայ կ'որոշեն քաշուիլ հեռանալ միանգամ ընդ միշտ, քանի իրենց գլուխները կը կրեն, որով կառավարութեան դուռը ափ կ'առնեն գունդագունդ արտասահման, մանաւանդ Նալէպ մեկնելու համար փաստաթուղթ (վեսիքա) ստանալու:

Այս անգամ ալ կառավարութիւնը կը սկսի նիւթապէս կողոպտել, գանձելով նոր թէ հին յեղինակ փրկուեցէր. ապա թէ ոչ


* Նայ- քրիստոնէից գերեզմանափունը կը գտնուի քաղաքին հիւսիս-արեւմտեան դիւն եւ ճամբան կ'անցնի Շէքերփրէյէն ալ. ըստ որում թուրքեր լռելեան հասկցնել կ'ուզեն թէ՛ գացէք ապա թէ ոչ կրկին կը ջարդենք զձեզ:

վեսիքա չի փրուիր: Անոնք որ ջնջին գիներով կրցած էին վաճառել իրենց շարժուն կամ աւելի անշարժ ինչքերը, ասոր ալ մեծ մասը կառավարութիւնը կը խլէր պաշտօնապէս. իսկ մնացեալ մասը ճամբու ընթացքին գինեալ չէթէները, որոնք քաղաքէն դուրս երկու երեք ժամ անդին կը սպասեն մեկնող կարաւանները ու կը կողոպտեն անխնայ եւ նոյնիսկ կարեւոր թիւով հայեր ալ լեռը կը բարձրացնեն, ուր խոշտանգելէ ու բռնաբարելէ ետք կը սպաննեն, յորոց մէկ երկու հոգին հրաշքով կ'ազատին:

Այսպէս հայեր ախն ու վախը սրտերուն, իրենց կեանքը ազատելու յոյսով կը հեռանան քաղաքէն ու կը ցրուին Սուրիոյ գըլխաւոր կեդրոնները, Նալէպ, Դամասկոս, Պէյրութ եւ այլն, անանկ որ, մէկ երկու փարուան մէջ կը պարպուի Մարաշը հայերէն, ուր այսօր հազիւ քանի մը հոգիներ կը գտնուին իբր նմոյշ:

«Այս մարտիրոս ժողովուրդը չի մեռնիր, որովհետեւ իր նահապակներուն արիւնը իբր սերմ պիտի ծառայէ, իր կորսնցուցածները փասնապարհիկ բեղմնատրելու համար: Արդարեւ այս ժողովուրդը դարերէ ի վեր հալածուած է Ղուրանի հետեւողներէ, մասամբ մը եւս արհամարհուած է ուրիշ երկիրներու վաճառականներու կողմէ, որոնք անոնց (հայոց) մէջ իրենցմէ աւելի առեւտրական բարձր յարկութիւններ գրած են: Եւ, փակաւին անհետացումի ենթարկուած չէ: Եւ Աստուած մեռելները կը յարուցանէ, հայ ցեղին ապահովելով իր արտագոյ կարգի բարգաւաճումը: Նայր ուրիշ բան չի խորհիր, եթէ ոչ մարդկային էակներ արտադրել եւ յամառօրէն կը հետապնդէ այս գաղափարը, այս ալ յարկապէս իր թշնամիներուն ճակատ բռնելու համար: Մաղթենք, որ խաղաղութիւնը վերահաստատուի, որպէսզի հայուն ալ ապրելու իրաւունքը փրուի, եւ շար չանցած անիկա նախապէս իր բնակած գիւղերը եւ քաղաքները պիտի լեցնէ ժողովուրդով»:

MATERNE MURE'
«Le Massacre de Marache en 1920»



ՄԱՐԱՇԻ ԲԵՐԴԸ



ՄԱՐԱՇԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՆԻԲԱՆԴԱՆՈՅԸ

ՅՈՒՅԱԿ

Մարաշի եւ անոր կից հայ գիւղերու բնակիչ, եկեղեցի եւ քահանաներու

1. Մարաշ քաղաք, եկեղեցի՝ վեց.- Ս. Քառասուն մանուկ, Ս. Աստուածածին, Ս. Սրեփանոս, Ս. Կարապետ, Ս. Սարգիս, Ս. Գէորգ:

2. Ֆրնսրճազ գիւղ, եկեղեցի՝ մեկ.- Ս. Աստուածածին, քահանայ՝ Ս. Մարտիրոս եւ Ս. Մովսէս, բնակիչ 1500 անձ:

3. Քիշիֆլի, եկեղեցի՝ մեկ.- Ս. Նշան, քահանայ՝ Ս. Կարապետ Ս. Կարապետեան, բնակիչ 400 անձ:

4. Տէրէ Քէօյ, եկեղեցի՝ մեկ.- Ս. Սարգիս, քահանայ՝ Ս. Վարդան, բնակիչ 500 անձ:

5. Ճամուսթըլ, կը կառավարուէր Քիշիֆլիէ, բնակիչ 50 անձ:

6. Տէօնկէլէ, եկեղեցի ուներ եւ քահանայ՝ Ս. Պօղոս, բնակիչ 400 անձ:

7. Ենիճէ Գալէ, եկեղեցի Ս. Գէորգ, քահանայ՝ Ս. Նամազասպ Թախսաճեան, բնակիչ 150 անձ:

8. Չիւրիւք Գիւղ- եկեղեցի՝ Ս. Աստուածածին, քահանայ՝ Ս. Գրիգոր, բնակիչ 200 անձ:

9. Եղիազար, բնակիչ 200 անձ:

10. Մուճուգպէրէսի, բնակիչ 250 անձ:

11. Արապլար, բնակիչ 150 անձ:

12. Բունար Պաշը, բնակիչ 100 անձ:

13. Տիգիլի Թաշ, եկեղեցի ուներ եւ քահանայ Ս. Յովհաննէս, բնակիչ 100 անձ:

Թիւերը հաւանականօրէն փրուած են, ձեռքի փակ ճշգրիտ վիճակագրութիւն մը չըլլալու պատճառաւ:

1920-ի ջարդէն առաջ Մարաշ քաղաքին մէջ կը գտնուէր 23.000 անձ իսկ 1.400 մըն ալ շրջակայ գիւղերը, $23.000 + 1.400 = 24.400$: Յետ դէպքի, կարարուած վիճակագրութենէ հասկցուած է, որ միայն 9700 անձ կը մնար քաղաքին մէջ, մնացեալք իբր 14.700 հոգի ընդհարումի պահուն սպաննուած են, ոմանք փախուստի արեն ճամբան մնացած են սառելով: Թուրքերու կորուստը թէ ընդհարումի հետեւանքով եւ թէ ձիւնի մէջ մնացած 500-600 կը

հաշուով:

Նախ քան ընդհանուր պատերազմը, Մարաշի եւ շրջակայից հայոց թիւը 30.000-35.000 կրնայ սեպուիլ մօտիկ հաշուով մը:

Ողջ մնացող Մարաշցիները ցրուած են Մուրիոյ զանազան քաղաքներուն մէջ, մասնաւորաբար Նալէպ, Պէյրուօ, Դամասկոս, Անպիոք, Իսկէնպէրուն եւ այլ քաղաքներ, փոքր մաս մը եւս Երուսաղէմի մէջ է:

ԳԱԲԱԶԱՆԱԿԻՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՅ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԵՊԱՏԱՅ ՆԱՅՈՅ ՄԱՐԱՇԻ

Մարաշի Առաջնորդական վիճակը իբր կարելու հայկական կեդրոն բաւական հին է, մինչեւ 11-րդ դար կը բարձրանայ ան եւ ինչպէս յիշած ենք գրքոյկիս Ա. մասին մէջ, գուցէ եւ կը սկսի հակաթոռ կաթողիկոս Պօղոս եպիսկոպոսէ (Փիլարտոս բռնապետի օրով), որ սակայն կարճ կեանք մը կ'ունենայ եւ անկէ ցայսօր գրեթէ անխափան շարունակուած է ան: Սպորեւ կու տանք անոր մէկ համառօտ ցանկը, զորս, ազնուաբար փրամադրած է մեզի ներհուն բանասէր Տիար Ա. Ալպօյաճեան:

1085-ին, Պօղոս եպս. վանահայր Վարագայ հակաթոռ կաթողիկոս կը նստի ի Մարաշ:

1092-ին, Սյրեփան Մանուկ եպս. կը ձեռնադրուի այս շրջաններուն վրայ, որոնք ընդ իշխանութեամբ Գող Վասիլի կը պատկանին. (Քեսուն, Մարաշ եւ շրջակայք) իրեն կը յանձնուի նաեւ Կարմիր վանքի առաջնորդութիւնը ի Շուղի Անապար:

1103-ին, կը մեռնի Գրիգոր եպս. Մարաշի (նստած թուականը անորոշ):

1307-16,1342-ին, կը յիշուի նոյնպէս Գրիգոր եպս. մը: Նոս իբր երեք դար գրեթէ կ'ընդհարի առաջնորդական թելը:

1665-ին, կը յիշուի Թումա եպս. Գերմանիկէի:

1724-ին, Կարապետ եպս. Մարաշի:

1765-ին, Սյրեփաննոս եպս. Գերմանիկէի:

1808-1829, Յովհաննէս եպս. Չարսանճագի Այնթապ Մարաշի առաջնորդ:

1850-1858, Նիկողոս եպս. Մարաշցի, ծերունի, Առաջնորդական քաղաքահ:Ասոր փրուած պէրաթէ մը կը հասկցուի, որ Մարաշի առաջնորդութեան ենթակայ եղած են, Մարաշ (Մանճագ) Ֆրնուզի գիւղին մէջ, Ս. Կարապետ եւ Ուլնեցի Ս. Սյրեփաննոս վանքերը, Քէպան-Կապան, Եէնիճէ-Գալէ, Շէփիքի, Պուն-փուխ, Կէօքսուն, Տէօնկէլ, Տիքիլի Թաշ, Տրդապուր եւ այլն:

Նիկողոս եպս.ի փրուած սոյն ֆէրմանը, արծաթ սկուտեղի վրայ դրուած եւ վրան շղարշով մը ծածկուած, փառաւոր թափօրով

մը փարուած է Մարաշի կառավարչարունը, որ ի լուր հանրութեան կը կարդացուի, ինչպէս կը յիշէ եւ կը պատմէ ծերունազարդ Խաչարուրծ Վրդ. Տ. Ղազարեան (այժմ ողջ):

1859-1861, Կարապետ Վրդ. Մարգուանցի, Առ. փեղապահ:

1863-1864, Մեսրոպ Վրդ. Ճանիկի (չէ գացած): Մանուէլ Վրդ., Առաքել Մազլըմեան, Բարթողիմէոս Վ. Չամիչեան՝ ընտրուած սակայն մերժուած են:

1865-1866, Նիկողոս Եպիսկոպոս:

1867-1868, Մկրտիչ եպիսկոպոս Տիգրանեան (փեսու), որ եպիսկոպոս կը ձեռնադրուի ի «Առաջնորդ Նալեպի եւ փեսու Մարաշի եւ Զէյթունի վիճակաց»:

1869-1872, Մկրտիչ եպս. Քէֆսիզեան, Առաջնորդ Մարաշի, Նալեպի, Այնթապի, Ուրֆայի եւ Անթաքիոյ միացեալ վիճակաց:

1876-1877, Մովսէս Վ. Կէօմրիկճեան Առ. փեղապահ:

1880-ին Մկրտիչ Վրդ. Վեհապետեան, Առաջնորդ:

1883-1885, Նահապետ քինյ. Տ. Կարապետեան, Առ. փեղապահ եւ փոխանորդ:

1886-ին Աբրահամ եպս. Մամիկոնեան, Առ. փեղապահ (վեց ամիս միայն), Միաբան Երուսաղէմի:

1887-1904, Յովհաննէս քինյ. Վարժապետեան, Առ. փեղապահ:

1904-1905, Վարդան քինյ. Տ. Մինասեան, Առ. փեղապահ:

1905-1907, Փառէն ծ. Վրդ. Մելքոնեան, Առ. փեղապահ:

1907-1908, Կորիւն Վրդ. Եսայեան, Առաջնորդ:

1908-ին Առ. Գարեգին Վրդ. Խաչարուրեան, Առ. փոխանորդ վեց ամիս:


1908-1909, Սահակ քինյ. Տ. Պեպրոսեան, Առ. փեղապահ:

1909-1911, Մկրտիչ եպս. Վեհապետեան, Առաջնորդ:


1911-1912, Ղեւոնդ քինյ. Տ. Նահապետեան, Առ. փոխանորդ:

1912-1914, Տ. Սահակ կրկին, որ ապա կը փարագրուի:

1914-1923, Խաչարուր վրդ. Տ. Ղազարեան, իբր հոգեւոր հովիւ կը կառավարէ յընթացս փարագրութեան եւ յետ գինադարի, ապա ամբողջ ժողովուրդի հետ քաղաքէն դուրս կը հանուի, 1923 Փեպրուարին:



Կեղրոնական Վարժարան, Մարաշ



Էպէն-էգեր Որբանոց, Մարաշ




ԸՆՏԱՐՆԵԿԱԼ ՆԿԱՐ ԵՐԿԱՄԻՐՈՂԻ ԳՐԳՈՅԿԻՍ


1. Կարյան քինյ, Տ. Մխևանան՝ նստողը, 1904-1905 առաջն. փոխամորդ Մարաշի.
2. Յովսեփ Տեր Վարդանեան, որքի կեցողը ձախն առաջինը (1913-ին նկարուած)




Մարաշի Շէյխ, Տիվանը, Շէքերի և շրջակայքի թաղերը



Մարաշի հարաւ-արեւելեան թաղերը



Մարաշի Էթմբնի, Գոյթօլ և Խաթունիյէ եւ Չիջակայ թաղերը



Համայնապարկեր Մարտի Գերման սառածնակէ մը լուսանկարում, 1916